



12-13(550-551)

22.04.2019

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքագր, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՅԱՎԸ ԶԻՒ ԾԵՐԱՆՈՒՄ

Փարիզի Աստվածամոր տաճարում բռնկված հրդեհից հետո Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Էվանսը թվիթերյան իր էջում այսպիսի մի գրառում է կատարել. «Այսօր, երբ ողջ աշխարհը սգում է Փարիզի Նոտր Դամի տապալումը, ես մտածում եմ՝ ինչ եկեղեցիներ են կորցրել հայերը, որոշները՝ հոգևորականներով և մարդկանցով լի սարսափելի Հայոց ցեղասպանության ժամանակ»:

Դրվատելի է, անշուշտ, որ ամերիկացի դիվանագետը ոչ միայն բավարար չափով տեսյակ է հայոց պատմության ողբերգական էջերին, այլև խիզախություն է ունեցել հրապարակվել հայոց ամենացավոտ խնդրի մասին բարձրաձայնելու:

Անկասկած, հոգևոր ու մշակութային անգնահատելի արժեքներ կայացնող այդ կորուստի հրի ճարակ դառնալը իրական աղետ է, բայց մենք ստույգ դեպքում հատկանշենք այդ առնչությամբ Էվանսի հատուկ շեշտումը, ըստ որի՝ Հայոց ցեղասպանության ժամանակ հազարավոր վանքեր ու եկեղեցիներ են թալանվել ու ավերվել: Ավելին, այդ սրբավայրերի ոչնչացմանը զուգահեռ սպանվել են դրանց անմեղ սպասավորները, որի դեմն առնելու փորձ, դժբախտաբար, առաջադեմ եվրոպան չարեց:

Կանցնի մի քանի տարի, և Նոտր Դամը կվերականգնվի նախկին փառահեղ տեսքով: Արդեն իսկ հիմա խոշոր հանգանակություններ են արվում Փարիզի Աստվածամոր տաճարի լիարժեք վերականգնման համար: Իսկ ե՞րբ կվերականգնվեն մեր պատմական հայրենիքում դարեր շարունակ մարդկային հոգիներ լուսավորած Աստծո տները, ե՞րբ այնտեղ կվերադառնան դրանց խղճող ու նվիրյալ տերերը: Ամեն անգամ, երբ տեղեկատվություն ենք ստանում Թուրքիայի տարածքում գտնվող մեր սրբաշենքերի ապականումների մասին, լուռ սեղմվում են մեր բռունցքները: Ի՞նչ տարբերություն է եկեղեցին հրդեհվել է, թե պարզապես վերածվել է անասանազոմի: Եթե նույնիսկ տարբերություն էլ կա, ապա դա պայմանավորված է զուտ մարդկային գործոնով, թեպետ վանքեր ավերողին ինչպե՞ս կոչել «մարդ»...

Ցավը երբեք չի ծերանում, և անցնող տարիները չեն կարող սպիացնել Հայոց մեծ եղեռնի արճաճոր վերքերը: Ցավը կսպիանա, երբ վերջապես կլինի ցեղասպանողի ապաշխարումը՝ դրանից բխող բարոյական ու իրավական հետևանքներով: Իսկ դա անխուսափելի է անգամ Թուրքիայի հերքող կատաղության պարագայում: «Մարդկային արդարության ճակատին թքելու» փոխարեն միաբանվենք և ուժեղանանք, որպեսզի ի գրոն լինենք բացառել ցեղասպանական նոր նկրտումները հայ ազգի նկատմամբ: Եվ ինչու չէ՞ վերատիրանանք մեր պատմական հայրենիքին, որպեսզի մեր ավերված եկեղեցիներում ու վանքերում կրկին գոհությամբ հնչի «Տեր ողորմեա»-ն...

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՆԻՆ ՀՈՎԱՆԻ



Ապրիլի 7-ին՝ Սուրբ Աստվածածնի ավետման տոնին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցու օծման արարողությունը:

Սրբազան արարողությանը ներկա էին ԱՀ նախագահ Բակո Սահակյանը, Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանը, Արցախի թեմի հոգևոր սպասավորներ, Արցախի և ՀՀ իշխանությունների ներկայացուցիչներ, եկեղեցու կառուցմանն իրենց աջակցությունը բերած բարերար հայրերին, Հայաստանի տարբեր թեմերի ժամանած եկեղեցականներ, ուխտավորներ և հավատավոր բազում արցախցիներ:

Հընթաց օծման սրբազան արարողության՝ սաղմոսերգության ներքո ջրով և զինով լվացվեցին տաճարի Սուրբ Սեղանը և օծվելիք սյուները: Այնուհետև Հայոց Հայրապետը Սրբալույս Մյուռնով օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը: Հայ Առաքելական եկեղեցու տարբեր թեմերի առաջնորդների ձեռամբ օծվեցին խորանի՝ չորս ավետարանիչների անունը կրող սյուները և եկեղեցու մնացյալ սյուները:

Աղոթքներից և սուրբգրային ընթերցվածքներից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը նորակառույց եկեղեցին անվանակալեց Սուրբ Աստվածածին:

Օծման արարողության ավարտին Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց արցախահայությանը և իր հայրապետական պատգամը բերեց ներկա ժողովրդին:

«Յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Արքոյ. ամեն: «Ձի Աստուած ընդ մեզ է»,

(Եսայի Ը 10)
Մեծարգո Նախագահ Արցախի Հանրապետության, Գերաշնորհ Պարզև Սրբազան, առաջնորդ Արցախի թեմի, Մեծարգո վաստակյալ Նախագահ, Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ հայրեր, Պատվարժան պետական այրեր, Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկել ենք Ավետման տոնի խորախորհուրդ այս օրը Սեր օրհնությունն ու գնահատանքը փոխանցելու արցախահայ մեր սիրելի զավակներին և կիսելու հոգևոր խնդրությունն ու խանդավառությունը Ստեփանակերտի նորակառույց մայր եկեղեցու օծման առիթով: Արցախի գողտրիկ երկրա-

ագատ ու անկախ կյանքի համար մղված արդար պայքարում թրծված ձեր հավատը և քաջարի ոգին պտղաբերեցին մեր նորագույն պատմության էջերում ոսկյա տառերով արձանագրված Արցախի հերոսամարտի փառապանծ հաղթությամբ: Այսօր մենք ամենքս այստեղ ենք վերստին վկայելու, որ հակառակ բոլոր դժվարությունների, պարտադրված պատերազմների, ավերի ու կոտորածի՝ անհնար է ընկճել հայի հավատն ու ոգին, քանզի Աստված մեզ հետ է, և մենք Աստծո ժողովուրդ ենք, պիտի ապրենք, ստեղծագործենք և կառուցենք, ինչպես որ կառուցել ենք Սուրբ Աստվածածին այս եկեղեցին: Այո, մեր հաղթանակը, մեր աննկուն ոգին ամրապնդվում, սփռվում ու տարածվում են նաև մեր եկեղեցիներից, քանզի Աստծո տան օրհնյալ կամարների ներքո են հույսով, կամքով, հոգով ու քաջությամբ գործունե հայրերի և անպարտելի դառնում հայրենյաց պաշտպանության մեջ: Հիրավի, ազգն անհաղթել է հավատի իր պարունով և գորությանը, քանի որ կենդանի հավատը ավելի գորավոր է բոլոր տեսակի սրերից ու զենքերից: Մեր ժողովուրդը խաղաղասեր է, ստեղծագործ ու համերաշխ կյանքի ջատագով, որին խորթ են բռնությունն ու ռազմատենչությունը: Մեր հայրենակող ու ազգային կյանքին սպառնացող վտանգի առջև մենք երբեք չենք ընկրկել ու չենք ընկրկելու և միշտ պաշտպան ենք կանգնելու մեր սրբություններին՝ հայրենի մեր հողին, մեր ընտանիքներին, լեզվին ու մշակույթին, մեր սրբավայրերին:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այսօր խոսեցինք հավատքի գորության և սրբությունների պահպանության կարևորության, քաջության ու սխրանքի մասին: Ձեր կյանքը և ամենօրյա կեցությունն արդեն իսկ արիության ու քաջագործության պանծալի դրսևորում են՝ հայրենի հողը պաշտպանելու անսասան նախանձախնդրությամբ: Ձեր հերոսական կենցաղով ու արցախյան ազատամարտի փառավոր հաղթանակով դուք մեր սիրելի Արցախը դարձրել եք մեր ժողովրդի ինքնության պատմության կարևոր վկայություններից մեկը և մեր ազգային նկարագրի դրսևորման գեղեցիկ արտահայտություն:

Հայրական Սեր հորդորն է, որ նույն ընթացքով ու վճռականությամբ շարունակեք ձեր կյանքը, այսպես ամուր մնաք առ Աստված ու առ հայրենին ձեր սիրո ու նվիրումի մեջ՝ հանուն արցախահայության բարօր ու շեն կյանքի, մեր ժողովրդի իղծերի իրագործման:

Ուրախալի այս առիթով Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Արցախի թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Ս. Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, ինչպես նաև թեմի հոգևորականաց՝ իրենց նվիրյալ ծառայության համար: Սիրելի Արցազան, գիտենք, թե ինչպիսի նախանձախնդրությամբ եք տարիներ շարունակ ջանք ու եռանդ բերել Արցախի հոգևոր կյանքի գորացման, ինչպես և Արցախի սրտում այս եկեղեցու կառուցման համար: Թող Աստված Հնորի Ձեզ քաջառողջություն, երկնահեղ օրհնություններ ու ամենայն բարիք և Իր աջակցությամբ նորանոր ձեռքբերումներ պարզիկ տերունապատվեր ծառա-

յության ճանապարհին: Մեր գնահատանքն ենք հայտնում Արցախի իշխանություններին, ի մասնավորի՝ Արցախի նախագահ մեծարգո տիար Բակո Սահակյանին, ում հետևողական ջանքերի և աջակցության շնորհիվ այսօր մեր ժողովրդի առջև իր դռները բացեց Ստեփանակերտի առաջնորդանիստը: Մեր գնահատանքն նաև վաստակյալ նախագահ մեծարգո տիար Արկադի Դուկայանին, ում պաշտոնավարման շրջանում դրվեցին եկեղեցու հիմքերը:

Անկարելի պիտի լիներ այս առաքելության իրագործումը պատկերացնել առանց մեր հավատավոր բարերար զավակների գորակցության: Այս նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրաբերությամբ սկզբնավորված դամախակալքը իսկապես վերաճեց համընդհանուր հանգանակության: Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք հայտնում աստվածահաճո այս գործում ներդրում բերած բոլոր անձանց, մասնավորաբար գլխավոր բարերար Վարդանյան բարեպաշտ եղբայրներին և տիար Վիտալի Գրիգորյանցին: Մեր գնահատանքն ենք փոխանցում եկեղեցու ճարտարապետին, շինարարներին և վարպետներին: Սուրբ Էջմիածնի օրհնությունն ու սերն ենք բերում մեր հերոս արցախցիներին՝ հաստատակամություն մարդկային մեր համագաղային պայքարի առաջնագծում՝ հանուն Արցախի ազատ ու անկախ կյանքի, շեն ու բարգավաճ ապագայի:

Սուրբ Աստվածածնի ավետման բերկալի տոնի առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում արցախաբնակ մեր մայրերին ու քույրերին: Բարձրորեն գնահատում ենք ձեր կարևոր առաքելությունը, որ դուք ունեք Արցախի մատաղ սերունդին դաստիարակելու, քաջարի ոգով գորացնելու, ձեր ընտանիքներում երջանկությունն ու սերը հաստատուն պահելու աստվածահաճո գործում: Հայցում ենք Աստվածամոր բարեխոսությունը և աղոթում, որ Աստված Իր ամենախնամ Սուրբ Աջի իղծում ներքո պահի ու պահպանի ձեզ առողջ, բարօր ու քրիստոնեական առաքինություններով զարդարյալ:

Սիրելիներ, Սուրբ Պատարագի ընթացքին կատարելու ենք նաև Հանրապետական մաղթանք՝ մեր հայրը առ Աստված բարձրացնելով Արցախի շինության ու անսասանության, առաջընթաց ու ապահով կյանքի համար: Պիտի աղոթենք նաև Արցախի պաշտպանության համար գոհված մեր բոլոր հերոսներին, ապրիլյան պատերազմի մեր քաջողիների հոգիների հանգստության ու խաղաղության համար:

Մեր աղոթքն է, որ Բարձրյալն Աստված խաղաղ ու անվտանգ պահի ու պահպանի Արցախ աշխարհը և պայծառ՝ Առաքելական մեր Սուրբ եկեղեցին և Արցախի թեմը: Թող մեր բարեպաշտ զավակները ապրեն խաղաղ երկրի ներքո ստեղծագործ կյանքով՝ աստվածային գորակցություններով, երկնահեղ օրհնություններ ու ամենայն բարիք և Իր աջակցությամբ նորանոր ձեռքբերումներ պարզիկ տերունապատվեր ծառա-

ԱՌԱՆՑ ՎԱՐԵՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ

ՄԱՐԱՂԱ՝ ԵՎԱ ՄԻ ՍԵՎ ԷՋ

88-ին Մարաղան էլ ուղի էլավ և իր վրա զգաց խաղաղ ու արդար պահանջներին զենքով պատասխանելու դաժան հետևանքները: 1991-ի վերջերից սահմանային այս գյուղն էլ հրետանային կրակի թիրախ էր դարձել: Բնակիչները պատսպարվում էին խրամափոսերում, նկուղներում, գետնափորներում, մի մասն էլ տեղափոխվել էր համեմատաբար ապահով վայրեր: 92-ին Ստեփանակերտում կյանքը նույնպես տեղափոխվել էր նկուղներ: Քաղաքը ուղի տակ տայիր՝ փողոցում մարդու չէր հանդիպի: Մեր ականջը միշտ ծայրի էր, կարոտ՝ բարի լուրերի: Սիրտ թեթևացնող իրադարձություններ տեղի էին ունենում: Վնասագործվել էին Մալի-բեկուն, Խոջալուն: Սակայն մենք անհամբեր սպասում էինք ավելի վճռական գործողության՝ Շուշիի առնանք: Եվ կատարվում է անսպասելին:

Բոթը, թե թուրքերը մտել են Մարաղա ու կոտորել խաղաղ բնակիչներին, ցնցում է: Ողբում են ոչ միայն իբրև արցախցի, այլև հարազատ, որ բախտ է ունեցել ճանաչելու պարզ ու անկեղծ, չարը չհանդուժող այդ մարդկանց: Թուրքը ընկճո՞ մարտեցուն՝ հավատալ չէի կարողանում: Ականատեսների պատմածները լույս սփռեցին դեպքերի վրա: Պարզվեց, որ Կիրովաբադում տեղակայված խորհրդային 4-րդ բանակը զրահատեխնիկայով աջակցել էր թուրքերին:

Ազերիները գյուղի դեմ հանել էին 1000 ասկյար: Հրետանային երկար նախապատրաստությունից հետո (հրետանին գործել է մտքոզգիչները) ապրիլի 10-ի լուսաբացին, ժամը 6-ն անց 45 րոպեին նրանք սկսել են հարձակումը: Մարաղայի ինքնապաշտպանության ջոկատը, որի հրամանատարը Ռոմա Կարապետյանն էր, և որի կազմում 210 կամավորական կար, կատարել է գրոհը ու նաև՝ ժամը 12-ից հետո ձեռնարկված երկրորդ գրոհը: Ժամը 17-ին մոտ հարձակումը վերսկսվել է: Եթե առաջին ու երկրորդ գրոհների ժամանակ ազերիների հետևակին օժանդակում էր 3, ապա այս անգամ 16 միավոր զրահատեխնիկա, այդ թվում 4-ը՝ տանկ: Թշնամուն հաջողվել է ճեղքել մեր պաշտպանությունը առաջին և երկրորդ պահակապետերի ուղղությամբ: «Ինքնապաշտպանության ջոկատը, չունենալով հակատանկային միջոցներ, փողոցային ժամը մարտերից հետո ստիպված է եղել մահանջել մինչև Մարաղալան», - վերհիշում է Ռոմա Կարապետյանը:

Եվ սկսվում է կռիվը՝ կռիվը անգեց մարդկանց դեմ: Ի՞նչ կռիվ՝ հաշվեհարդարը զենքի գործությամբ: Նշանակություն չունենում դիմացինը կին էր, թե տղամարդ, ծեր էր, թե մանուկ: Հայ էին՝ ու վերջ: Իսկ կողոպտիչները... Նրանց ոհմակը դուրս-ինչ չէր կասկածում ցեղակիցների գայլային բնագոյնի կենսունակությունը: Եվ վստահ, որ չեն «տապալվի», հետևում էին զինավառ «կտրիճներին»:

Ապրիլի 10-ին, հարձակվելով

Մարաղայի վրա, թշնամին սպանել է 51 խաղաղ բնակիչ, 38-ին՝ պատանդ վերցրել, որոնց մեծ մասը՝ կանայք ու երեխաներ: Ասում են՝ սպանել: Գնդակահար անելն անմեղ գործողություն է այն հրեշավոր արարքների, տանջանքների համեմատ, որոնց ենթարկվել են կենդանի մարդիկ ու, չգարմանաբ, դիակները: Խաղաղ բնակիչներին ճգմել են տանկի տակ, կոկորդ սողոցել, բենզինով ողողել ու այրել... Չգոհանալով՝ իրենց զազանային հաճույքներին հազարի են տվել դիակներն անդամատելով, այրելով ու այլանդակելով: Չոհվածների կրծքին կամ ճակատին դանակով խաչ էր քաշված:

Ողբերգությունից մի քանի օր անց սպանվածների մարմինների արտաշիրմում է կատարվել, որին ներկա էր Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ, իրավապաշտպան, բարոնուհի Քերոլայն Քոքսը՝ իր ղեկավարած «Միջազգային քրիստոնեական համերաշխություն» կազմակերպության անդամների հետ: Արտաշիրման տեսանյութերն անժխտելի վկայությունն են խաղաղ բնակիչների նկատմամբ կատարված բարբարոսությունների:

Լեոնիդ Ազգալոյանի «Ազատագրական բանակ»-ի տղաներն օգնության եկել և մասնակցել էին պաշտպանական մարտերին արդեն ազերիների երրորդ գրոհի ժամանակ: Լեոնիդ Ազգալոյանի օժանդակությամբ էլ վերախմբավորվել են մեր ուժերը, և կազմակերպվել է գյուղի ազատագրման գործողությունը:

Ռազմագործողությունում ընդգրկվել են նաև Հասանդայի ջոկատը (հրամանատար՝ Ժորա Պողոսյան), Ներքին Հռաքաղի ջոկատը (հրամանատար՝ Ռադիկ Հայրապետյան), Մարտակերտից 2 ջոկատներ (հրամանատարներ՝ Կարոյան Սիմասյան և Արմեն Նավթալյան), Վերին Հռաքաղի ջոկատի հրամանատար Ռաֆիկ Սալիյանն ու իր տեղակալ Արկադի Շիրինյանը: Ընդհանուր առմամբ օգնության է եկել մոտ 100 հոգի, և հակահարձակմանը մարտից հետո միասին մասնակցել 300 մարտիկ: Լեոնիդ Ազգալոյանի առաջարկությամբ ռազմագործողության գլխավոր հրամանատար է նշանակվել Ռոմա Կարապետյանը: Վերջինիս խորհրդով էլ, չսպասելով հաջորդ օրվան, ժամը 23-ին մոտ սկսում են գործողությունը: Թշնամին դուրս է շարժվում: Գիշերը, ժամը 00.30-ին Մարաղալանն ու Մարաղան ազատագրված էին:

Ապրիլի 10-ի պաշտպանական մարտերում և ազատագրման գործողության ընթացքում մերոնք տվել են 9 զոհ և 17 վիրավոր:

Շուշիի առումից հետո, մայիսի 11-ին կրկնվել է գրոհը՝ նույն սցենարով: Գյուղում խաղաղ բնակիչներ արդեն չկային, ապրիլի 10-ից հետո էին թողել տները, մնացել էր միայն ինքնապաշտպանության ջոկատը: «Արդեն համեմատաբար լավ էինք զինված, հակատանկային միջոցներ ունեինք,- ասում է

Ռոմա Կարապետյանը: - Դաշտն ականապատված էր, ինժեներական կառույցներ էին ստեղծված»: Հակառակորդը, այնուամենայնիվ, տալով մարտական տեխնիկայի և մարդկային զգալի կորուստներ, երկուսն էլ կողմ կարողանում է մտնել Մարաղա: Դարձյալ ավերում է, հրկիզում ու կողոպտում:

* * *

Մեզ համար Մարաղայի ողբերգությունը դարաբաղա-արբեջանական զինված հակամարտության թերևս ամենասու էն է: 1992 թվականի ապրիլի 12-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ՝ Մարաղա գյուղի խաղաղ բնակչության ոչնչացումը որակելով իբրև ցեղասպանության դրսևորում: Ողբերգական այս իրադարձության 10-րդ տարեկիցի առնչությամբ ԼՂՀ բարձրագույն օրենսդիր մարմինը դարձյալ հայտարարություն է տարածել՝ վերստին պնդելով, որ Մարաղայի արյունալի իրադարձությունները թելադրված էին ռազմական անհրաժեշտությամբ: Ազգային ժողովը, դիմելով միջազգային հանրությանը, ՄԱԿ-ի և Նրա Գլխավոր ասամբլեայի, ԵԱՀԿ-ի և Նրա Մինսկի խմբի, Եվրախորհրդի և Նրա խորհրդարանական վեհաժողովի ուշադրությունը ևս մեկ անգամ հրավիրել է Մարաղայի հայ բնակչության նկատմամբ կատարված զանգվածային բռնարարների անառարկելի փաստի վրա, պահանջել դատապարտել այն և որակել որպես Աղբերջանի Հանրապետության կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության ակտ: Սակայն՝ ծայր բարբառ հանապատի: Մարաղա գյուղում իրականացված ոճրագործության 20-րդ տարեկիցի կապակցությամբ ԱՀ Ազգային ժողովի խումբ-խմբակցությունները հայտարարել են, որ հետամուտ են լինելու, որպեսզի դրա կազմակերպիչներն ու կատարողները կանգնեն դատարանի առաջ: Մարաղայում տեղի ունեցածի միջազգայնորեն դատապարտումը և դրան քաղաքական ու իրավական պատշաճ գնահատական տալը, հանցագործին պատժելը կբխե որչափ մարդկության շահերից: Այս ապրիլի 10-ին Մարաղայի ջարդերի 27-րդ տարեկիցի կապակցությամբ հայտարարություններով հանդես են եկել ԱՀ և ՀՀ արտգործնախարարությունները, Արցախի մարդու իրավունքների պաշտպանը: ԱՀ արտգործնախարարության մեկնաբանության մեջ մասնավորապես ասված է. «Մարաղայում տեղի ունեցած ողբերգությունը հայերի նկատմամբ ահաբեկման, բռնության և հայրենի հողում ապրելու հնարավորությունից զրկելու՝ Աղբերջանի քաղաքականության դրսևորման րից մեկն էր: Այդ քաղաքականությունը աղբերջանական իշխանությունների կողմից որդեգրվել և հետևողականորեն իրականացվել էր աղբերջանադարաբաղյան հակամարտության ողջ ընթացքում: Աղբերջանը փորձեց նույն մեթոդներն ու մտեցումները կիրառել 2016թ.

Արցախի դեմ սանձազերծված ապրիլյան աղբերջանի ժամանակ, որը, սակայն, կանխվեց միայն Արցախի պաշտպանության բանակի վճռական գործողությունների շնորհիվ՝ ապահովելով երկրի անկախությունն ու նրա քաղաքացիների անվտանգությունը:

Ինչպես Մարաղայում, այնպես էլ 24 տարի անց՝ ապրիլյան պատերազմի ընթացքում աղբերջանական զինված ուժերի կողմից իրականացված ռազմական հանցագործություններն ու միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումները վկայում են, որ մարդկայնության դեմ հանցագործություններն ու անպատժելիությունը հանգեցնում են դրանց կրկնությանը»:

Մարաղայի ողբերգությունից հետո բազում մեծ ու փոքր հաղթանակներ ենք ունեցել, և դրանց մեջ ամենաառաջինը և ամենափայլունը՝ Շուշի բերդաքաղաքի առումը: ԼՂՀ պաշտպանության բանակն ազատագրել է ոչ միայն թշնամու կողմից գրավված մեր բնակավայրերը, այլև՝ պատմական հայրենիքի տարածքներ: Պատերազմում տարած մեր հաղթանակը, թեկուզ ոչ վերջնական, ինչ-որ չափով սփոփում է մարաղեցիների ցավը, սակայն՝ ոչ երբեք մոռացնում:

Երբ ազերին տիրացավ շրջակա բնակավայրերին, Մարաղան կտրվեց թիկունքից, և ինքնապաշտպանության ջոկատը հարկադրված էր թողնել գյուղը՝ առանց մարտի:

1992թ. հունիսի 17-ից ցայսօր Մարաղան հակառակորդի վերահսկողության տակ է: Թարթառի ափին գտնվող այս գյուղն ուներ ավելի քան 2500 բնակիչ: Նրանցից ավելի քան 1000-ն ապաստանել է տարբեր երկրներում: Մի փոքր հատվածը բնակվում է հաչենի հովտում: Նոր Մարաղա են անվանել բնակավայրը՝ սրտներում բորբոք պահելով վերադարձի հույսը: «Ինձ համար մեծ վիրավորանք է, որ մեր նախնյաց շիրիմները թուրքին գերի են մնացել,- Ռ. Կարապետյանին, որը Նոր Մարաղայի գյուղապետն է, եղել է ԼՂՀ առաջին և երկրորդ գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր, այս իրողությունը շատ է մտահոգում: Հայրենասեր սերունդ է աճում: Գյուղի երեխաներն ասում են. «Ե՞րբ ենք մեծանալու, որ մեր Մարաղան ազատագրենք»: Դրան պատրաստ ենք և վետերաններս»:

Մարաղեցիներն ուզում են հավատալ, որ կգա օրը, ու իրենք կարժանանան հարազատ ծննդավայրում կյանքը շարունակելու երջանկությանը: Կվերադառնան իրենք, օտար ավերում դեգերող իրենց հայրենակիցները, շուրջ առ շուրջ կվերականգնեն հայրենի ոստանը: Ծանր է սպասումը: Հավատը, սակայն, օգնում է տոկալ ու չվիատվել: Իսկ վրեժը՝ անմեղ զոհերի արյան վրեժը, արթուն է նրանց մեջ:

ՇՈՒՄ ԵՆՔ, ԶԳՈՆ ԵՆՔ

Լյուբա ԳՐԻԳՈՐՅԱՆ, Նոր Մարաղայի միջնակարգ դպրոցի տնօրեն:

- 1992թ. ապրիլի 10-ի լուսաբացը Մարաղայում արյունոտ էր, այդտեղ առավոտ լուսոն բացվեց դաժան ողբերգությամբ, աղբերջանական հրոսակների անմարդկային ոճրագործությամբ: Օմոսականները, ներխուժելով գյուղ, ավերեցին ու հրկիզեցին այն, ողջակիզեցին ու անմարդկային դաժանություններով տանջանախ արեցին խաղաղ բնակիչներին, մի մասին էլ գերեվարելով՝ տարան անհայտ ուղղությամբ:

Մի քանի ժամում գետնին հավասարվեց ծաղկուն Մարաղան:

Մարաղայի և շրջակա գյուղերի բնակչությունը կրկին տեղահանվեց: Վ. Համբարձումյանի շնորհիվ տեղահանված մի քանի ընտանիքներ կարողացան մնալ հայրենիքում, իսկ նրաները սփռվեցին աշխարհով մեկ՝ հանգրվան գտնելով օտար ափերում:

Մարաղայի բնակչության նկատմամբ իրականացված կոտորածից 27 տարի է անցել, սակայն մեր մեջ այնքան է խորը նստվածք տվել, որ երբեք այն չի մոռացվի:

Մարաղայի ողբերգությունը ԼՂ-ի և Աղբերջանի հայերի դեմ աղբերջանցիների պարբերաբար իրագործած ցեղասպան գործողությունների և էթնիկ զտումների համակարգված, հետևողական շղթայի հերթական մի օղակն է: Աղբերջանի ռազմական ագրեսիան ԼՂ-ի նկատմամբ ուղեկցվել է մարդկային տրամաբանությունից ու պատկերացումներից դուրս դաժանություններով:

«Սա մեմա է Գողգոթային... շատ տարիներ անց». 1992թ. ապրիլի 10-ին Մարաղա գյուղում տեղի ունեցած կոտորածի մասին այսպես է արտահայտվել բարոնուհի Քերոլայն Քոքսը, որը Մարաղա է այցելել ցեղասպան գործողություններից հետո:

Անցյալի ողբերգական դեպքերը պետք է դաս հանդիսանան մեզ համար և համախմբեն բոլորին՝ ասելով, որ, իրոք, նորից կատարվել է ցեղասպանություն:

Աքսանա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Նոր Մարաղայի միջնակարգ դպրոցի ՍԳՍՍ

- 1992թ. ապրիլի 10-ը մեր գյուղի տարեգրության մեջ մնաց որպես սգ օր: Այսօր կարծես լսվում են տարիներ առաջ արյունալի սպանդի ենթարկված, մահվան սարսափազդու հայացքի տակ ճչացող, գերության տառապալից ցավի տակ կքված մի բուռ ժողովրդի շուրթերին քարացած վերջին հառաչանքները: Այսօր պատերազմը սափ է զինվորի մարմնին, արցունք է և վերհուշ՝ որդուն կորցրած մոր, հորը կորցրած որդուն... Այսօր պատերազմը մորմը է չհարսնացած, չսիրված, չմայրացած աղջկա... Այսօր պատերազմը բանաստեղծություն է զոհված զինվորի որդու շուրթերին: Այսօրվա միջոցառումը մեծ խորհուրդ ունի: Այն սերունդների միտքը, հիշողությունը թարմ պահելու գործվոր միջոց է: Մենք չի՞շել նահատակներին չենք կարող, քանզի նրանք մեր հեռուսկան ազատամարտի զորակն են անցել, իսկ պատմությունը ջնջել հնարավոր չէ:

Հավերժ հիշատակ այն բոլոր մարտիկներին, ում վիճակված չէր ապրել մինչև այս օրը: Իսկ ողջերի պարտքն է արժանապատիվ կյանք ապահովել ներկա և գալիք սերունդների համար: Ծակառակազորը հայի համար այսպիսի ուղի է կանխանջել, սակայն մենք ոչ թե անցյալին նայենք ցավի ու տառապանքի միջով, այլ դարերում թողած մեր հպարտության ծվենները համբերատար հավաքենք ու ամբողջացնենք՝ մեզ հետագա հաղթանակների նախապատրաստելով: Զմռանանք, որ «քնում են գետերն ու քամին, սակայն չի քնում երբեք թշնամին»: Իսկ մեր աշխարհագրական դիրքը այնպիսին է, որ պարտավորված ենք միշտ գտնվել լինել, թույլ չտալ, որ իրար ապավինած մեր ուները, թեկուզ աննշան չափով հեռանան իրարից: Մի փոքրիկ ճեղքն անգամ բավական է, որ օձակերպ ոստի սողունի մեր մեջ: Այդժամ ստիպված կլինենք մոր ավարայրներ մղել: Իսկ եթե, այնուամենայնիվ, Ավարայր, ապա միայն՝ Մասիսի փեշերին, Սասունում և Իգդիրում, Վանում ու Մուշում, ինչու չէ՞ կարոտով սպասող մեր Մարաղայում:



ՑԱԿ ԵՎ ԿՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՈՐՅԱՆ

Ապրիլյան քառօրյա պատերազմի քաղաքական ասպեկտները դեռ երկար կքննարկվեն: Առաջ կքառվեն աշխարհաքաղաքական, տնտեսական դրդապատճառներ, բայց փաստն այն է, որ Ադրբեջանն իր ձեռք բերած նոր տեխնիկայի շնորհիվ մեծ ոգևորությամբ էր ներշնչված, որ կարող է ապահովել իրենց հաղթանակը: Սակայն չկարողանալով հաջողության հասնել առաջնագծում մեր քաջարի զինվորների սահմանն անառիկ պահելու շնորհիվ, դիմեց իրեն բնորոշ նենգության՝ արկակոծության թիրախ դարձնելով դպրոցը, խախտելով երեխաների, խաղաղ բնակչության վրա կրակ չբացելու միջազգային նորմերը:

Առավել սարսափելի բան չկա, երբ քնուն են վաղվա երազանքով, բայց արթնանում արկի պայթյունից: Այդպիսին էր առավուտը Ջորավանում ապրիլի 2-ին: Թվում էր՝ հերթական սադրանք է, բայց եղավ այն, որի միակ բուժիչը՝ ժամանակը, հազիվ կարողանար ամոքել վերքերը: Ու դպրոցին կից, որ պիտի խաղահրապարակ դառնար, կանգնեցվեց հուշաքար-խաչքար, որն իր մեջ խտացնում է ոչ միայն մեր դպրոցի սան, մեր բոլորի սիրելի Վաղարշակի հուշն ու կարոտը, այլև մեր ինքնության հարատևությունը: Նա պիտի դառնար մի տան հենարան, լավ մասնագետ հայրենիքի շենացման գործում, մինչդեռ ժամանակն այլ վճիռ կայացրեց, և մենք այսօր բազում նահատակների հետ մեկտեղ ցավում ու հպարտանում ենք և Վաղարշակի համար:

Դեպքին իրագրել լինելու և նրան անմիջապես ակնատես և մասնակից լինելու տարբերությունը ցավն ու վիշտը ապրելու մեջ է: Մեզանից շատերն էին այդ օրը պատրաստվում դպրոց գնալ, սակայն մեր դպրոցական առօրյան

անսպասելի փոխվեց, և դպրոցի զինդեկն ու տնտեսվարը, ուսուցիչն ու լաբորանտը, ավագ դասարանի աշակերտներն ու տեխաշխատակիցները դարձան առաջին բուժօգնողներ:

...2016թ. ապրիլի 2-ից հետո յուրաքանչյուր այդ օրը մենք ծաղիկներով ենք զարդարում Վաղարշակի հուշաքարը, իսկ դպրոցում հավաքվում ենք բազմաթիվ հիշողություններով՝ կենդանության հուշով: Այս անգամ էլ, հերթական հավաքույթի ժամանակ դպրոցի զինդեկն ասաց. «Սիրելի

տեսելով, փորձեց վշտի միջից լավատեսությամբ լցնել իր շրջապատը: Նա քաջալերեց բոլորին և միասնության կոչ արեց, որովհետև «առջևում դեռ շատ անելիքներ ունենք»: Վաղարշակի համադասարանցիներն էլ փոքրիկ հիշողություններով նորից վերհիշեցին իրենց ընկերոջն ու ծաղիկ խոնարհեցին՝ «Կարոտում ենք» բառը շուրթներին: Իսկ Վաղարշակն իր անկյունից յուրատիպ հպարտությամբ, երկչու ժպիտը դեմքին, իր խոսուն լռությամբ շարունակում է գրավել բոլորին՝ վայելելով նրանց սերն ու հարգանքը: Մենք էլ փորձում ենք նրան անբաժան պահել մեզանից մեր հիշողությամբ ու մտածողությամբ. նրա անունով դասարան ունենք անվանակոչած, գերազանցիկներ



Վաղարշակ, դու մեկն ես այն հարյուրավոր նվիրյալներից, որ ոչ թե մահացար, այլ զոհվեցիր զենքը ձեռքիդ, կազմ ու պատրաստ»:

Քառօրյա պատերազմի վիրավոր Վարդանը, որն էլ հույս չունեի, որ երբևէ նորից կհաճախի դպրոց, հաճախման հենց առաջին օրը դպրոցին ժամացույց էր նվիրել և խոստացել, որ ամեն ինչ կանի, որ այն երբեք կանգ չարձի՝ դրանով միաժամանակ կենդանի պահելով ընկերոջ՝ Վաղարշակի հիշատակը: Այս անգամ էլ Վարդանը, վրեժով լցված, ի լուր աշխարհի հայտարարեց. «Մենք դեռ խոսք ունենք ասելու աշխարհին, մենք դեռ աշխարհին շատ բան ունենք ցույց տալու, դեռ վրեժ ունենք մեր սրտում, դեռ թշնամուն պիտի ցույց տանք իր տեղը»: Վարդանի մայրն էլ, ներքուստ զսպելով արցունքները, պատերազմի ցավն ան-

րի անկյունում նա պատվավոր առաջին տեղում է, փառքի սրահում զբաղեցնում է արժանի տեղ, համադասարանցիները դասարանում անկյուն են պատրաստել «Կարոտում ենք» գլխատառերով ու այն հեղեղել համադասարանցի Անիի բանաստեղծություններով, իսկ դպրոցին կից նրա պատվին կանգնեցված խաչքար-հուշաքարի շուրջը 12 եղևնիներով եզերված փոքրիկ այգին դարձել է մեր ամենօրյա այցելայրը: Վաղարշակի անունը միջազգային հարթակներում դարձել է արդարության ու խաղաղության համար պայքարի զենք, որպեսզի աշխարհում ժամանակը երբեք չշփոթվի խաղաղության պակասից:

Պայանե ՄԱԹՎՈՍՅԱՆ
Ճարտարի Հր. Պողոսյանի
անվան հ. 5 միջնակարգ դպրոց

Հերմինե ԼՆԼՆԱՆ

ՊԻՏԻ ՊԱՅՔԱՐԵՄ

Ես ու ապրիլը վաղուց ենք վիճել, Թեև ապրիլը ի՞նչ մեղք ուներ, Նա էլ էր ինձ պես սգավոր դարձել, Բոլոր երկներանգ զգեստները թողել, Արդեն մի դար է՝ սև-սաթ է հագել...

Նորից գարուն էր... ապրիլ... Մարդու դիմակով գազանը վայրի Գողեգող եկել էր կռվի...

Ապրիլը կրկին հագել էր կարմիր...

Ես քո դեմքը վաղուց գիտեմ, Ինձ չես խաբի, Բավական է հերոսներիդ միայն հիշեմ, Իսկ դու ինձ մոռացել ես երևի...

Ես Հայ եմ, Իմ նախահայր Հայկը այս լեռներում տուն է շինել, Լեռներն այս պապերս կոչել են Հայրենիք՝ Ու որպես վեհագույնը բոլոր սրբություններից՝ Կտակել են ինձ: Դարեր ի վեր այստեղ եմ ապրել, Ապրել եմ ազնիվ... Հպարտ կանգնել եմ Հայրենիքի սահմաններին, Եթե անգամ զոհվել՝ առնելով պատիվ:

Հիմա էլ նույնն եմ, Խաչը կրծքիս կախած, Աղոթքը շուրթերիս, Սրբազան հողը՝ ինձ ուժ տվող, ոտքերիս տակ, Լեռներիս թիկնած, Ժառանգորդն եմ քաջ նախնիներիս, Նրանց դեռ պարտք ունեմ տալու, Ցավն ու վիշտը թողած անցյալում, Պիտի պայքարեմ, Որ մի օր էլ Մասիսից այն կողմ հայերեն խոսեն, Հայ խոսքին փափագ հայրենի հողս Հայրենով մի կուշտ հագնեմ, Եկեղեցիներում աղոթք շնջանք, Եկեղեցիներս կենդանանան, Խաչակնքվենք հայոց լեռներում, Լեռներս զորանան, «Քոչարի» պարենք Հայքի սահմանով՝ Հայքս շենանա, Եռագույնը ամենուր շողա, Հայը տուն դառնա... Որ երեսս պարզ Տիգրան Մեծին աղաղակեմ. «Ծովից ծով ենք կրկին, արքայի՛ց արքա»:

ՄԵԿ ԲՈՒՆՑՔ ԷԻՆՔ ԴԱՐՉԵԼ

2016 թվական, ապրիլի 2...

Մեր հիշողության մեջ հավերժ կմնա այս տարեթիվը՝ որպես ապրիլյան հաղթանակած հերոսամարտ: Ամեն անգամ հիշելիս արյունոտ արցունքներ են հոսելու մեր աչքերից, քանզի սգալու ենք մեր զոհված երիտասարդ այրերի, մեր տասնութամյա անձնագրի տղաների կորուստը, և ոչինչ չի ամոքի մեր վերքերը: Եթե իմ ընտանիքից կամ հարազատներից զոհ չի եղել, դա չի նշանակում, թե այդ վիշտը շրջանցել է ինձ: Ոչ: Դա անձնական վիշտ չէ, այլ համահայկական, ես կասեի՝ հայազգային: Նոր արտահայտություն: Չէի ասի, պարզապես ապրիլյան վիշտ և ցավ, բայց միևնույն է, մենք եղել ենք, կանք ու կլինենք:

ԱՀ Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի Արամայիս Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցում այդ օրերին դասավանդում էին միայն կին ուսուցիչները, իսկ տղամարդիկ համազուգակների, շրջանի վարչակազմի անձնակազմի հետ միասին գտնվում էին Մատաղիսում՝ առաջնագծում: Մենք խոսում ենք հայրենասիրությունից, իսկ այդ

օրերին հայրենասիրության վառ օրինակ ցույց տվեցին մեր դպրոցի աշակերտները, բոլորն անխտիր: Դասերն ընթանում էին բնականոն հունով, բացակայողներ չկային: Եվ ես հպարտորեն կասեմ, որ



մենք դաստիարակում ենք հիրավի հայրենասեր սերունդ, որոնք Արցախյան գոյամարտի մասնակիցների թոռներն են: Ապրիլյան օրերին նրանց զավակներն ապացուցեցին, որ արժանի են իրենց հայրերի

անվանն ու հիշատակին, իսկ այսօր նրանց թոռներն ապացուցեցին այդ: Կարևոր չէ, որ մինչև դպրոց մեկ կիլոմետրից ավելի պետք էր քայլել, չէին վախենում, երբ դպրոցի շենքի տանիքի ուղղությամբ պտտվում էր անօդաչուն: Յուրաքանչյուր զոհվածի ծնողի հետ հեռակա լալու էինք, սգուն, քննարկում, բայց միևնույն է, դասերը շարունակվում էին: Ուսուցիչ-աշակերտ մեկ բռունցք էինք դարձել և հավատում էինք մեր արդար հաղթանակին:

Եվ այսօր 2019-ի ապրիլին պատրաստվել ենք միջոցառման, որին հրավիրված էին ապրիլյան քառօրյա Միլիթար Ավանեսյանը, Ալեքսանդր Օհանյանը, Սպարտակ Ավանեսյանը և Նոր Ղարաչինար համայնքի ղեկավար Հայկազ Ջաքարյանը, որոնց ներկայությունը պարտավորեցնում էր մեզ: Հնչում է Արցախի հերոս Ռոբերտ Աբաջյանի սարսուռացնող խոսքը: Հուզմունքը պատել էր բոլորիս. արտասվում էինք ու չէինք փորձում թաքցնել: «Ես դիրքում իմ տղերքի արյունն ա

թափվել, ստեղ իմ ախպերներն են կռվել... Ես հողի վրա պայքար է եղել, ես էլ հիմա կալցոն քաշում եմ... Ես դիրքը հանձնողի...»:

Բոլորը լուռ ոտքի են կանգնում՝ լռությամբ հարգելու զոհվածների հիշատակը: Եվ շարունակվեց միջոցառումը աշակերտների հուզմունքից կերկերացող ձայնի և դպրոցի նախկին սան, ապրիլյան քառօրյա մասնակից Հմայակ Ջաքարյանի խրոխտ, հայրենասիրական երգերի ելևէջների ներքո: Այնուհետև մեր հյուրերը դրվագներ պատմեցին առաջնագծից: Հուզված էին բոլորը: Դպրոցի դահլիճը պարուրված էր անբացատրելի մի ջերմությամբ:

Բարձունքը մերն է, տղերքը չկան, Նրանք ավելի բարձրում մնացին...

Մարդիկ, եթե դեռ ձեր սիրտն է զարկում, Հիշեցեք նրանց անունն առ անուն, Դա մեռնողների պետք չէ, ես գիտեմ, Իսկ ապրողներին շատ է հարկավոր...

Ալվարդ ՎԱՐՂԱՆՅԱՆ
Նոր Ղարաչինարի միջնակարգ
դպրոցի ուսուցչուհի

ՊԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՌՈՒԴՆԵՐՈՒՄ

ԱՊՐԵԼՈՒ ԱՊՐԻԼ

Ապրիլն իր դերում էր... 1915-ի ապրիլը հարյուրամյա հեռավորություն ունեւորելու 2016-ից, բայց անհանգստության, կորցնելու, վախի, վշտի նույն զգացողությունն էր ամենքի հոգում: Ապրիլի առավոտը չպետք է տարբերվեր մնացած առավոտներից: Բայց տարբերվեց... կրկին իր գույնով, իր գույժով... Դիրքերում արկերի պայթյունի ծայրերը գյուղ էին հասել դեռ գիշերը: Մայրերը, որոնց որդիները դիրքերում էին, միշտ մի ականջը արթուն էին քնում ու արթնացել էին առաջին իսկ պայթյունի ծայրից: Առավոտյան գյուղում բոլորը ցածրածայն Արմենի անունն էին տալիս... խոսում էին նրա վեջին գործողությունների մասին: Վատ լուրը մտքի արագություն ունի և վայրկյանների ընթացքում թանձրացավ գյուղի երկնակամարում: Մարդիկ խոսում էին, և ոչ մեկը չէր համարձակվում ընտանիքին հայտնել մահաբեր լուրը: Երբ Արմենի հայրը մոտենում է գյուղում խմբված մարդկանց, նրանք անմիջապես լռում են: Անհանգիստ էր: Բողոքում էր, որ զանգում է որդուն, բայց չի պատասխանում: Տղամարդիկ հույս էին տալիս: Արմենի մայրն ամբողջ օրը տեղը չէր գտնում, օրը չէր անցնում, բակն էր ավելում, որ օրն անցնատ ու շուտ անցնի: Երկար լռել չէր լինի, և ուժ հավաքելով՝ մտան Արմենին բակ... Արմենի մայրն ակամայից ավելը բաց թողեց ձեռքից... Դեռ... հետո հողը գահավիժեց ոտքերի տակից, ընկավ գետնին... ցավից կծկվեց... Դայրը, որ թիկնեղ էր, վշտից մի ակ դարձավ: Արմեն պապի ուսերն էին ցնցվում, նրան մի կերպ մտածեցին, որ չընկնի: Դարպաս բացվեց... լույսը օրը ցերեկով վառվեց... առաջին անգամ մորը ատելի թվաց



վայրկյաններ առաջ թափվող արցունքներից: Նա վազեց բակ, շնչակտուր, հեղին, գոռալով:
 - Իմ որդին ողջ է, Արմենս ողջ է... գնացեք: Ու արագ անջատեց մահաշունչ լույսերը, նետեց ծաղիկները, փակեց դարպասը, բայց օրը ձեռքեց հարևանի ճիչը՝ Դայր...
 23-ամյա Դայրը խոցել էր թշնամու երկու տանկ ու չէր հասցրել դուրս գալ. խոցվել էր տանկում:
 Այնուամենայնիվ, ապրիլն իր դերում էր...

նապարհը թեկուզ և դժվար, բայց ընթացքը հաստատական է: Նրա վախճանը... Ոչ, ոչ, նա վախճան չունի, նա անմահ է, նա հավերժի ճամփորդն է:
 - Ես ծանաչում եմ քեզ, երկաթե ժողովուրդ, քեզ տրված է առասպելական փյունիկի նման վերածնվելու կարողությունը: Վկա է քո պատմությունը, վկա է արյունոտ ապրիլին հաջորդող մայիսը՝ հաղթանակների ամիսը...
 Մենք հայրենիքի սահմանն ենք, Մենք հայոց զինվորն ենք, Մենք մեր լուսավոր վաղն ենք, Մենք Արցախն ենք, Մենք մայր Դայաստանն ենք:

Լուսինե ՍԱՖԱՐՅԱՆ

ՈՎԷՐ ՄԵՉ ՇԵՏ ՉԵՆ ՄԱՐՄԱՊԵՍ, ՄԵՉ ՇԵՏ ԵՆ ՇՈՂՈՎ



Արցախի պաշտպանության սուրբ գործում իրենց մեծ ավանդն են ներդրել նաև անհայտ կորած մեր հայրենակիցները, մեր քաջ տղաները: Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցի 6-րդ «ա» դասարանի աշակերտները դասուղեկ Լ. Արզանգուլյանի գլխավորությամբ այցելություն կատարեցին Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների տուն՝ ծննդյան օրվա կապակցությամբ: 2-րդ դպրոցի 9 շրջանավարտի ճակատագիր անհայտ է: Նրանց անունն է կրում 6-րդ «ա» դասարանը: Դասուղեկի գլխավորությամբ և ծնողների աջակցությամբ դասարանը պարբերաբար այցելում է նրանց հարազատներին:

Սպարտակ Գրիգորյան, Բենիամին Այվազյան, Վարդան Մարտիրոսյան, Անդրանիկ Սարգսյան, Արմեն Սարգսյան, Վալերի Գաբրիելյան, Ալեքսանդր Ավագիմյան, Էդվարդ Ավթանդիլյան, Էդվարդ Դանիելյան:

Աստված պահապան ձեզ, մենք միշտ ձեզ հետ ենք հոգով ու մտքով, քանզի մեր խաղաղ ու ապահով կյանքի համար նաև ձեզ ենք պարտական: Մենք սպասում ենք ձեզ...

Մարտի 5-ին լրացել է Էդվարդ Դանիելյանի 53 տարին: Մեր երեխաները դասուղեկ Լ. Արզանգուլյանի, Արցախի ԱԿԱՅՄ ճախագահ Վերա Գրիգորյանի, ծնողկոմիտեի անդամների հետ այցելություն կատարեցին Էդվարդի տուն, որտեղ մեզ ջերմ դիմավորեց Էդվարդի հարս Զարինեն: Նրա կինը՝ Անահիտը, այդ պահին Ռուսաստանում էր որդու հետ միասին: Մենք մեր սրտի ջերմ խոսքն ու մկերները հանձնեցինք այդ հրաշալի ընտանիքին: Էդվարդը այսօր ունի երկու հիանալի թոռնիկներ:

Իսկ մարտի 21-ին Վարդան Մարտիրոսյանի ծննդյան օրն էր: Մենք նույն կազմով ներկայացանք Վարդանի օջախ: Մեզ ջերմ դիմավորեց Վարդանի կինը՝ տիկին Ռոմելան՝ իր հարս Ստելլայի հետ: Վարդանի օջախում ծնվել է փոքրիկ Վարդանը: Մենք մեծ բավականություն ստացանք այդ օրը, երբ մեր երեխաներն իրենց սրտի ջերմ խոսքն ու շնորհավորանքները հնչեցրին ազատամարտիկի 49-ամյակի կապակցությամբ: Տիկին Ռոմելայի հետ գրույցում հասկացանք, որ մինչև թոռնիկի ծնվելը նրա կյանքը անհմատ էր անցնում: Երբ Վարդանը զնաց պատերազմ, նրա որդին՝ Դավիթը, 6 ամսական էր: Ահա թե կյանքն ու ճակատագիրն ինչ են անում մարդկանց հետ:

Իր սրտի խոսքն սաաց Վերա Գրիգորյանը, որը կարոտով և մեծ հույսով սպասում է իր Սպարտակին: Տիկին Վերան նույնիսկ իրեն արգելում է մտքում անգամ մտածել, որ այս երեխաները չկան, նա ասում է, որ տղաները գալու են, մնում է միայն սպասել: Նա ջերմորեն շնորհավորեց Վարդանի ծնունդը և շեշտեց, որ գալիք տարում մենք պետք է նշենք Վարդանի 50-ամյակը. «Թանկագին հարազատներ, հույսներդ մի՛ կորցրեք, դիմադրեք և հավատացած եղեք, որ անպայման կգա մի օր, երբ բոլորս ուրախալ աչքերով կնայենք բացվող արշալույսին»:

Տա՛ Աստված՝ դա իրականություն դառնա.

Նարինե ԲԵՂԱՐՅԱՆ
Ստեփանակերտի հ.2 հ/դ 6-րդ «ա» դասարանի ծնող

ՆԱ ԱՊՐԵՅ ԵՐԿՈՒ ԳԱՂԹԱԿԱՆԻ ԿՅԱՆՔ, ԵՐԿՈՒ ՉԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿՈՒ ՊԱՏԵՐԱԶՍ

Ես մեկ անգամ չէ, որ համոզվել եմ, որ յուրաքանչյուր մարդու հոգու խորքում ապրում է գուրբ: Բայց ամենի մոտ չէ, որ այն կեղծանի ուժ ունի: Մարդը զբաղվում է ինքնուրույն կյանքով և Աստծուն ու պատասխանատու է իր բարի զգացումների համար:
 Լինենք անկեղծ ու հավատով, լինենք իրատես և հույսով զինված, պարզապես լինենք մեր արժանիքների, մեր ազգային, մշակութային, ավանդույթի ու սովորույթների պաշտպանն ու նոր ուժ ու կորով տվող մեր պատմությանը: Պատմություն, որ բոլորիս անցյալն է, ու այն պետք է տեսնել ներկայիս աչքերով: Սա մեր անցյալն է, մեր ցավն ու կսկիծը, վերքն ու դառնությունը:
 Մարտունու շրջանի Կարմիր շուկայի հարևանությամբ, հարավային անտառի ստորոտում մի բլրակի վրա հնակառույց մի շինություն կար, որը պատկանում էր Դանդաբադի տարածքի մի սեփականատիրոջ, ինչպես ժողովուրդն է անվանել, ամենահաս առատաձեռն բարերար Կոլյա աղային: Նա հողատեր էր, ուներ կավածքներ, շինություններ, այգիներ ու բանվորական ուժ: Ասում են՝ ամեն տարի բերքն ամբարտեղից հետո նա մեծ հավաք էր կազմակերպում՝ հրավիրելով շրջակա Թաղավարդ (Արշակ Քոխվա), Մամնա, Դերեր, Սարգսաշեն, Շեխեր գյուղերից մարդկանց, իսկ պատվավոր հյուրն էր

Ամարասի հոգևոր հովիվը, որպեսզի օրհնի տարվա բերքն ու օրվա ճաշանեղանը և օրհնություն տա սեղանակիցներին: Պատիվ տալով հոգևոր դասին ու աշխարհիկ մարդկանց՝ դրանով իսկ պատիվ է վաստակում ենթաշրջանի հոգևոր և աշխարհիկ հրավիրվածների կողմից:
 Խոսքս չասեք հեռուն զնաց, ուղղակի ուզում եմ հեռվից մոտենալ իմ այս պատմությանը, որ ավելի հաստատուն և ազդեցիկ հնչի:
 Նշածս բլրակի վրա կառույցը ծառայում էր բարեգործությանը:
 Կոլյա աղան, իմանալով ու ապրելով այդ ցավը (իսկ ցավը 1915թ. ապրիլն էր), Շուշիի նահանգապետի թույլտվությամբ և իրավասությամբ հատուկ մարդ է ուղարկում Երևան և Ալեքսանդրապոլ՝ այնտեղի որբ երեխաներին տեղափոխելու, խնամելու, կրթելու և դաստիարակելու նպատակով, այդ սուրբ առաքելությունը կյանքի կոչելու: Եվ շուտով 20-22 որբեր հյուրընկալվեցին Թաղավարդի Կոլյա աղայի ապարանքում: Այդ օրվանից աղայի այդ շինությունը կոչվեց մանկատուն:
 Կոլյա աղան աստվածապաշտ ու աստվածավախ մարդ էր: Նա իր ամբողջ կարողությունն ու ունեցվածքը ներդրեց մանկատան որբերի խնամքին, կրթությանն ու դաստիարակությանը: Վարձելով ուսուցիչներ, խնամակալներ, դաստիարակ-

ներ՝ բարեգործ աղան հպարտություն էր ապրում: Ասում են՝ երեխա չունեիր և նրանք բոլորին ասես որդեգրել էր ու Աստծո առաջ խոստացել ու խոստմանը հավատարիմ մնացել:
 Այս մանկատանն էին դաստիարակվում ու կրթվում Անահիտ և Սիրան քույրերը: Անահիտը, որ քույրերից ավագն էր, 1915թ. 7-8 տարեկան էր, իսկ Սիրանը՝ 2-3 տարեկան: Անահիտը հիշում էր իր հորն ու մորը և ասում, որ երեք եղբայր էլ ունեին: Նրա մոր անունը Աստղիկ էր, հոր անունը՝ Աղասի: Եղբայրները՝ Ռուբեն, Երվանդ, Ասպետ: Քույրերը՝ Անահիտ, Սիրան, Արփի: Անահիտն այդպես էլ չիմացավ, թե ինչ եղան ծնողներն ու եղբայրները և Արփի քույրը: Երբ նրան հարցրին ազգանվան մասին, հաստատապես ասաց՝ Բլբուլյանց:

Սիրանը ոչ մի բան չէր հիշում: Երբ արդեն Անահիտ քույրը չկար, կրկնում էր նրա վկայությունները:
 Նա պատմեց, որ գաղթի ճանապարհին ուսում էին՝ ինչ պատահում էր, իսկ պատահածը դաշտի կանաչն էր: Պատմում էր, որ իրենց խմբի ավագն ու ուղեկցողը մի եկեղեցական էր: Երբ մտում էին հանգստանալու, նա մի կողմ էր քաշվում աղոթքի ու վերջում անընդհատ կրկնում էր՝ «Ներիր ինձ, Տեր»: Մի անգամ էլ մտավ մի այգի և հավաքեց ծառի տակ թափված խնձորը ու բերեց բաժանեց գաղթականներին:
 Անցան տարիներ: Սիրանն ամուսնացավ Գերասիմ անունով մի թաղաբացու հետ, և տեղափոխվեցին նորակառույց Սունգայիթ քաղաքը: Եկավ 1988 թվականը: Գերասիմը արդրեջանցիների գոիր դարձավ: Նրան սպանեցին քարերի հարվածներով: Սիրանը, կերպարանափոխված ու զգեստափոխված, մի կերպ հասավ Ֆիզուլի, այնտեղից գիշերով՝ Ծակունի գյուղ, որտեղ ապրում էին նրա հարազատները: Սիրան աստն պարեց երկու գաղթականի կյանք, երկու ցեղասպանություն, երկու պատերազմ:
 Նա իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց Դայաստանի Կոտայքի մարզի Բալախովիտ գյուղում, որտեղ Սունգայիթի վերաբնակիչների համար համայնք էր ձևավորվել: Նա մահացել է 2005թ.՝ ցավն ու վիշտը, ամուսնու կորուստը, որդու անժամանակ մահը սրտում ամփոփած: Նրա վերջին խոսքերն էին՝
 - Թող ոչ ոք փախստականի, գաղթականի ճանապարհ չանցնի, թող ես լինեմ այդ կարգավիճակով վերջինը, թող ինձանով ավարտվի հիմն ու անցյալը: Ինձ բարի ճանապարհ, ձեզ բարի վայելք, խաղաղ կյանք:

Յուրա ԲԵՂԱՐՅԱՆ
գ. Թաղավարդ

ՆՈՒՇԱՄԱՏՅԱՆ

ՆԱ ԿՂԱՌՆԱՐ 50 ՏԱՐԵԿԱՆ



Յուրաքանչյուր դար ունենում է իր հերոսները, տարբեր են լինում միայն հակառակորդները, բայց հերոսներին միավորում է հայրենիքի նկատմամբ ունեցած վեհ զգացումը: 20-րդ դարն էլ ծանր ճակատագրի թելադրանքով հերոսների կարիք ունեցավ:

Դարձյալ երեք հայրենի հողը, ոտխը կրկին խաթարեց մեր ժողովրդի անդորրը:

1988-ը պատմության մեջ նշանավորվեց Արցախի նոր ու աննախադեպ հզոր պոթենցիալով: Փոքրիկ Արցախը մարտնչեց, մաքառեց ու աշխարհին ապացուցեց, որ արցախցու բազուն աստվածային ուժ ունի: Դա սուրբ պատերազմ էր, քանզի պարտվելու դեպքում կկորչեր մի ողջ ժողովուրդ:

Այդ սուրբ պատերազմում, ցավոք, շատերը հայրենիքի զոհասնդանին դրեցին իրենց կյանքը:

Դաժան պատերազմին զինվորագրվեց նաև Արցախի դարպաս հերոսական խնամակալը: Քաջերի մեջ քաջ գտնվեցին գյուղի տղաները, որի շնորհիվ թշնամուն չհաջողվեց ոտք դնել այդ սուրբ հողին՝ չնայած նրա բազում փորձերին:

Եվ ահա այսօրվա սերունդը գնահատանքի ու երախտագիտության խոսք է հնչեցնում հայրենի հողի համար նահատակված հերոսների հիշատակին:

Դուք ծեր կյանքը չեք խնայել, Կռվել եք միշտ քաջին վայել, Գյուղի պատիվը բարձր եք պահել, Մարտում ընկած խնամակալի քաջեր...

Հուշ-ցերեկույքը տեղի էր ունենում խնամակալի միջնակարգ դպրոցում և նվիրված էր դպրոցի նախկին սան Ռազմիկ Աղաբաբյանին. այսօր նա կդառնար 50 տարեկան:

Բացման խոսքով հանդես է գալիս դպրոցի տնօրեն Լյուդմիլա Մոսիյանը, որը արժանանում էր խնամակալի բոլոր զոհերի հայրենապաշտությունը, փաստում է, որ այսօր ևս մի հնարավորություն է ստեղծվել՝ հարգանքի տուրք մատուցելու դպրոցի նախկին սաներից մեկի հիշատակին:

Այնուհետև շարունակում են երեխաները: Ռազմիկ Աղաբաբյանը ծնվել է 1969թ. մարտի 7-ին Ասկերանի շրջանի Խնամակալ գյուղում: Երկրորդ արու գավակն էր ընտանիքում, ինչը բերկրանքով լցրեց ծնողների սիրտը: Ծակատագիրը, սակայն, այլ անակնկալներ ուներ պահած նրա համար:

1987-1989թթ. ծառայել է խորհրդային բանակում, որտեղ դրսևորվել է իբրև արիասիրտ զինվոր ու արժանացել պատվոգրերի: Ձորացրվելուց հետո գյուղ վերադարձավ ու զինվորագրվեց Արցախյան ազատամարտին: Գյուղում առաջիններից մեկն էր, որ գեմը վերցրեց ու պայքարեց թշնամու դեմ:

Հին ու ցավոտ վերքը նորից բացվեց: Տնքում էր հայրենի հողը, կանչում իր քաջ գավակներին, իսկ հայրենասեր գավակներն էլ սպասել չսովին. լույսի արագությանը համախմբվեցին, պատմության մեջ նոր, հերոսական էջեր գրեցին ու սրբագործվեցին իրենց իսկ արյան գնով:

Եկավ 1992-ի մայիսի 9-ը... Ցավի ու զրկանքի միջից կարծես հույսը նշույլ առկայեց: Հոգաշատ ու բազմաշարքար գյուղում թևածեց լուրը... Շուշին, մեր հիմնավորը Շուշին ազատագրված է: Գարածնունդ (պատերազմի ժամանակ

գյուղի հիմնական ապաստարանն էր) խուճ-խուճ հավաքված գյուղացիները կիսուն էին իրար հետ իրենց լսածը: Մեկը լավատեսությամբ էր համակում դիմացիին, մյուսը հուսահատ պատմում էր, որ շատ զոհեր ենք ունեցել:

Մայիսի 10... Լուսաբացը դանդաղ պայծառանում էր, սովորաբար էր գյուղի հավաքատեղին: Հավաքվում էին մարդիկ ոչ թե պատսպարվելու (պատերազմի ժամանակ գյուղում ոչ մի ապահով տեղ չկար), այլ փորձությանը ընկերակի դիմանալու համար:

Ռազմիկի ազգականուհին՝ 12-րդ դասարանի աշակերտուհի Աննա Ավանեսյանը, այդ թախծալի օրերի մասին մոր հուզառատ պատմությունն է ներկայացնում. «Մայիսի 10-ի առավոտյան նկատեցի, որ Ռազմիկը և հայրս անհանգիստ զրուցում են: Նրանց դեմքին հուզմունք կարդացի ու մանկան հետաքրքրասիրությամբ կամաց մոտեցա: Ռազմիկը համոզում էր հորս, որ կանանց ու երեխաներին գյուղից դուրս տանեն: Հավաստիացնում էր, որ քաղաքում ավելի անվտանգ է: Ես ու քույրս Ռազմիկի դեղին Կամազով տեղափոխվեցինք Ստեփանակերտ՝ հորաքրոջ տուն: Հիշում են ամեն մանրուք. ճանապարհին Ռազմիկը խոսում էր ամենատարբեր թեմաներից՝ փորձելով քողարկել իր անթաքնի անհանգստությունը: Նրա մի խոսքը երբեք չի ջնջվում հիշողությունիցս. հառաչեց երկար ու ասաց. «Ես մայիս ամիսը չեմ սիրում, Ե՛րբ է ավարտվելու...»: Եվ մեզ թողեց հորաքրոջ տանը ու հեռացավ... Այլևս չտեսա նրան»:

Շուշիի պարտությունից մոլեզմած թշնամին մայիսի 10-ին փորձեց ճեղքել հայկական դիրքերը Նախիջևանիկ-Փոջամալ ուղղությամբ: Ռազմիկը ընկերներով շտապեց օգնության: Հենց այս մարտն էլ նրա համար դարձավ վերջինը: Թշնամու հրասայլը կրակեց հայրենյաց պաշտպանի ուղղությամբ... Ընդհանուրը 23-ամյա պատմաբան կյանքը:

Օրեր այնքան նրա ոսկյա շրթան բերեցին մորը: Հղթան մասնատված էր, բզկտված, ինչպես քաջարի ռազմիկի ոգեղեն մարմինը: Անվանը հավատարիմ մնաց արիասիրտի զինվորը: Նա զոհվեց, գնաց միանալու հայրենիքի համար մարտիրոսված ազատամարտիկներին՝ որպես հայրենիքի մատաղացու, որպես հավերժական ռազմիկ:

Միջոցառման հուզիչ պահերից մեկը Ռազմիկի ավագ եղբայր Վաչիկի դստեր՝ Սերի Աղաբաբյանի ելույթն էր, որն ուղղված էր հավերժ երիտասարդ հորեղբոր հիշատակին. «Մարտի 7-ին դու կդառնայիր 50 տարեկան: Երբ ես ծնվեցի, դու արդեն չկայիր, բայց իմ գիտակցական կյանքում, իմ մանկական հուշերում դու միշտ մեր տան անդամն ես եղել, միշտ մեզ հետ: Ես քո մասին գիտեմ ամեն ինչ: Դու մի առնական տղամարդ էիր՝ սիրահարված կանանցին, Արցախ աշխարհին ու քո հարսնացուին, որին չհասցրիր գարնամային քնքուշ ծաղիկներ նվիրել. չէ՞ որ պատերազմ էր, կար ավելի կարևոր առաքելություն՝ հայրենիքի պաշտպանությունը»:

Գիտեմ, հիմա որպես սուրբ ու բարի հրեշտակ,

Քո հոգին է հանգիստ թևածում երկնքում,

Ու չգիտեմ՝ գոռա՞մ, թե՞ շշնջամ հանգիստ,

Մենք քեզ չենք մոռանում, դու մեզ հետ ես,

Դու կա՛ս, մենք հիշում ենք քեզ միշտ:

Սիրելի հորեղբայր, ինչքան կուզեի գեթ մեկ օրով գայիր, ու ես հպարտ հպարտ, քեզ թևանցուկ արած, շրջի գյուղում, քայլեի քո կողքին... Երդվում են, իմ հորեղբայր, որ քո Արցախը միշտ կանգուն կմնա ու խորհատ քայլերով դեպի մեր երազած ապագան կգնա»:

Միջոցառումը նախածեռնել էին Ռազմիկի հարազատները նրա ավագ եղբոր՝ Վաչիկի ծառայակից ընկեր Համլետ Համբարձումյանի հովանավորությամբ: Վաչիկը Համլետի հետ ծանոթացել է խորհրդա-

լին բանակում՝ Չեչնյախնակում, 1986 թվականին: Համլետը նոր էր զորակոչվել, իսկ Վաչիկը զորացրվելու վրա էր: Որպես ավագ ծառայող՝ Վաչիկը նրան աջակցել է առաջին դժվար ամիսներին, հետո զորացրվել է: Համլետը 28 տարի շարունակ փնտրել է ընկերոջը (գիտեր միայն, որ նա խնամակալից է):

Համլետ Համբարձումյանը ծագումով Ներքին ճարտարից է: Մինչև 1993թ. ապրիլը ծառայել է Մարտունու հրետանային գումարտակում: Հետո տեղափոխվել է Կրասնոդար, աշխատել շինարարությունում: Այժմ նա Կրասնոդար քաղաքի «НОВОСФЕРА» ՍՊԸ հիմնարկի գլխավոր տնօրենն է և զբաղվում է բազմաբնակարան շենքերի շինարարությամբ: Կապը Արցախի հետ ամուր է, երբեք չի ընդհատվել: Նրա ուժերով Ստեփանակերտում կառուցվել է 100 բնակարան, Մարտունում՝ 160: Նա իրականացնում է նաև բարեգործական առաքելություն: Մարտունու շրջանի բազմազավակ ընտանիքներին տրամադրել է կենցաղային տեխնիկա (սառնարան, լվացքի մեքենա), երեխաների համար կազմակերպել հետաքրքիր միջոցառումներ, օգնել բանակին, դեղորայք տրամադրել շրջանի շտապօգնության կենտրոնին: Դրանցից աջակցություն է ցուցաբերել ճարտարի և խնամակալի՝ 2014-16թթ. ընթացքում գոհվածների ընտանիքներին (200 հազար դրամ) և այդ բնակավայրերում նոր ծնված երեխաներին (300 հազար դրամ):

Նրա ծառայությունները բարձր է գնահատել Արցախի նախագահ Բակո Սահակյանը՝ 2016թ. արժանացնելով «Վաչագան Բարեպաշտ» մեդալի:

Իսկ թե ինչպես է 28 տարվա որոնումներից հետո հանդիպել ծառայակից ընկերոջը, պատմում է հետևյալը. «Հերթական այցի ժամանակ հյուրընկալվեցի Ասկերանի շրջվարչակազմի նախկին ղեկավար Սերգեյ Գրիգորյանի կողմից: Միջոցառման ընթացքում երբ հնչեց նահապատ ամուրը, ես իսկույն հետաքրքրվեցի ու հարցրի Վաչիկի մասին: Նրանք հայտնեցին, որ Վաչիկը գյուղում է: Չանգեցին, ու ես 15 րոպե անց լսեցի ընկերոջս ծայրը... Այդ օրը ես թանկագին հյուր էի Վաչիկի տանը...»: Այդ ընկերությունն այժմ մեծ բարեկամության է վերածվել: Հաճախ են հանդիպում ընտանիքներով, և այս անգամվա հանդիպումը համընկավ ընկերոջ կրտսեր եղբոր՝ Ռազմիկի 50-ամյակի արարողությանը, որի ողջ պատասխանատվությունն իր ուսերին էր առել նվիրյալ ընկերն ու մեծ բարեկամը: Նա շրջեց դպրոցում, տեսավ այն անմխթար պայմանները, որում սովորում են մեր երեխաները, և խոստացավ, որ 2020թ. ընտրություններից հետո էլի կգա դպրոց:

Համլետ Համբարձումյանը շատ զոհ մնաց միջոցառումից, որովհետև կազմակերպիչները՝ Գայանե Աղաբաբյան (փոխտնօրեն), Անահիտ Առուստամյան (կազմակերպիչ), Հրանուշ Հարությունյան (կազմակերպիչ), Արման Ավանեսյան (զինղեկ), ոչինչ չէին խնայել միջոցառմանը մեծ շուք ու հանդիսավորություն տալու համար: Միջոցառմանը մասնակցում էին նաև ՊԲ Ասկերանի գնդի տանկային գումարտակի զինվորները, որոնք իրենց կատարումներով մեծ տպավորություն թողեցին ներկաների վրա:

Վերջում ամփոփիչ խոսքով հանդես եկավ Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը, որը բարձր գնահատեց մնաց միջոցառումների դերն ու նշանակությունը:

1992-ի մայիսի 10-ին կրտսեր եղբորը կորցրած Վաչիկը այսօր փոխարենը ձեռք է բերել մեծ ընկերություն ու բարեկամություն, որը չի կարող խաղաղվել ոչ մի ուժով:

«Որքան որ հազվադեպ է իսկական սերը, իսկական ընկերությունը ավելի հազվադեպ է»:

Լառուշիկո Սուրայա ՂԱԶՈՒՅԱՆ

ՆԱ ԿՂԱՌՆԱՐ 20 ՏԱՐԵԿԱՆ



Հակոբյան Հայկ 1999-2018

Ուզում են շնորհավորանքի և միաժամանակ հիշատակի խոսք ասել կյանքից անժամանակ և անսպասելի հեռացած մեր սիրելի զինվոր Հայկ Սերգեյի Հակոբյանի մասին:

Սրանից ուղիղ 20 տարի առաջ՝ 1999 թվականին, Հակոբյանների օջախում կատարվեց հրաշք. հյուսվեց մի գեղեցիկ հեքիաթ՝ իրապատում և հրաշապատում:

Աստօր բարեհաճ և բարեգութ կամքով ծնվեց մի մանուկ, մի արու գավակ, որին սպասել էին ուղիղ 5 տարի:

Երջանկությամբ, ուրախությամբ, հրճվանքով ու ջերմությամբ լցվեցին Սերգեյի և Նովելայի հոգիները ու օջախը: Ծնողները երկար էին սպասել նրան:

Գարուն էր, տոն էր, ցնծություն. մարտի 29-ն էր: Եվ կյանքը եռաց, տարածվեց հորդաբուխ: Նորածին մանկան հետ հյուսվեց կյանքի, ապագայի պատումը. պահել, զուրգուրել, խնամել, աճեցնել:

Եվ հասակ առավ Հայկը՝ մինուճարը, միակը: Հաճախեց դպրոց, սովորեց փայլուն: Աճեց, զորեղացավ, դարձավ հաղթահասակ տղամարդ՝ խոշորաչյա, գեղեցկադեմ: Հոգով հարուստ էր, բնավորությամբ՝ մարդամոտ ու ընկերասեր: Կատակասեր էր ու անմիջական:

Ծնողատեր որդու աչքից չէր վրիպում նրանց անմնացորդ նվիրումը: Տեսնում էր, որ մայրը ժրաջան մեղվի պես օրնիբուն աշխատում է, հայրը՝ բանում ու տքնում: Եվ որոշեց, որ պիտի դառնա ուսման գերազանցիկ, իր գիտելիքներով պիտանի մարդ դառնա հայրենիքի և ծնողների համար: Նպատակասլացությունը նրան տրավ Ստեփանակերտի պետական համալսարան: Դա ոչ հեռավոր անցյալում էր՝ 2016-ին: Ընդունվեց «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժինը: Երազում էր ծրագրավորող դառնալ, ծրագրել էր փայլուն ապագա, այն, ինչ կարող է երազել տղամարդը. ծառ տնկել, ամուսնանալ, տուն կառուցել, խնամել ծնողներին:

Հայրենասիրությունը մղեց նրան ջանասիրությամբ ծառայել Արցախյան բանակում, կատարել վերադասի հրամանները, զգոն լինել դիրքերում, հանգստի ժամին խրամատ փորել և... մոռանալ սեփական անձը:

Ավաղ, կատարվեց ամենասարսափելին... Դաժան փետրվար... հանկարծահաս հիվանդությունը շանթահարեց երիտասարդին, և ամենագոր Աստված անգթորեն խլեց նրան ու ակնթարթորեն տարավ:

Ու մահ էր, ու սուգ էր, ու լաց էր, ու ցավ... Բառերն անգոր էին պահի, վշտի հանդեպ:

Ծնողները խենթացել էին անանոթ կակիծից: Ի՞նչ անել, ինչպե՞ս ապրել, ինչպե՞ս անել, որ չփլվի, չխորտակվի տան այուրը, ամրությունը:

Շրջապատում, թաղամասում, փողոցում կյանքը եռում էր, հորդում էր ամեն օրվա պես: Մարդիկ աշխատում էին, դպրոցականները հաճախում էին կրթօջախ, Հայկի դպրոցական ընկերներն ուսանողական կյանքն էին վայելում:

Վիշտը, ցավը կեղեքում էր ծնողներին:

Աստօր պատիժ է, անլուր տառապանք է այսպես ապրելը, ի՞նչ անել. խենթանա՞լ: Ոչ, դա դավաճանություն կլիներ սիրելի որդու հիշատակի հանդեպ: Պետք էր ելք գտնել:

Եվ հարազատները խորհուրդ տվեցին մի նոր Հայկ գտնել, նրա մեջ որոնել առաջնեկ Հայկին, նրա հետ վերստին հույսեր փայտալի, նոր կյանք կառուցել ու... երբեք չմոռանալ սիրելի Հայկին՝ այսօր արդեն բոլորած երկու տասնամյակ:

Այսօր ծնունդ է, սիրելի Հայկ: Սոսի հասարակությունը, դպրոցական և ուսանողական ընկերները, բարեկամներդ ներկայացել են քեզ հետ ապրելու, քեզ մեծարելու, կիսատ թողածդ ավարտին հասցնելու և... խնկարկելու:

Ծնորհավոր ծնունդդ, սիրելի Հայկ, հավերժ ուսանող, հավերժ զինվոր, անավարտ երազ...

Թող որ անվանակիր կրտսեր եղբայրդ և քույրդ՝ Թագուհին, ջերմությամբ, ծով ուրախությամբ լցնեն օջախը ու փարատեն ծնողների վիշտը:

Սուսաննա ԱՎԵՏԻՍՅԱՆ Սոսի միջև. դպրոցի ՄԿԱԳՏՏ, հ. լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

ՀԻՇՈՒՄ ԵՆՔ, ԽՈՆԱՐՀՎՈՒՄ ԵՆՔ, ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՆՔ...



Պատմության դաս, որտեղ խոսք չզնաց պատմական փաստերի, իրադարձությունների, նշանակության, թողած դասերի, ապագայի տեսլականի մասին, բայց այդ ամենին հաղորդակից դարձան ներկաները: Դասն այդ Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում էր, որը մատուցեցին 9-րդ «բ» դասարանի աշակերտները պատմության ուսուցչուհի Գայանե Բաղասարյանի և դասղեկ Մերի Գաբրիելյանի աջակցությամբ: Դպրոցի փոխտնօրեն Սուսաննա Մկրտչյանը բացման խոսք չասաց, դրա փոխարեն արտասանած՝

Բերանն արնոտ մարդակերը են անբան
Հագար դարում հագիվ դառավ Մարդասպան,
Չեղբերն արնոտ զընում է դեռ նա կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան...

Ամենայն հայոց բանաստեղծի տողերն ահագնազում են չղաղարող արհավիրքների մասին: Դարեր շարունակ

նակ մեր ժողովուրդը գոյատևել է մարդ-գազանների դեմ պայքարելով: 21-րդ դարն էլ բացառություն չէ:

Եվ այնտեղ է լուկ սխրանքը սկսվում,

Ուր վերանում է ամեն մի հնար...

Մեր ազգի ֆենոմենի սևակյան բանաձևում դարձյալ գործում է: Ապրիլյան քառօրյա պատերազմն ի՞նչ էր, եթե ոչ դրա վկայությունը: Հայրենասիրությունը այդժամ դարձավ ոչ միայն ազգասիրության գաղափար, այլև պայքար: Պայքար ազատության ու անկախության համար: Կրկին նահատակվեցին հայ քաջորդիները՝ իրենց արյունը խառնելով հազարավոր զոհերի արյունին՝ հանուն մեր վաղվա, լուսավոր ապագայի:

Լռության թույլ. լռենք ու հիշենք, լռենք ու աղոթենք, բայց նաև՝ հիշենք և երգենք... Մնացածն արդեն աշակերտներն են ասում: Ասում են երգով, պարով, ասումներով: Ապրիլյան քառօրյայի հերոսները, Արցախյան գո-



յապայքարի նահատակներն են հանուն ներկաների աչքերին: Նրանք գալիս են ծաղիկների, աստղերի տեսքով: Հաղթանակը գալիս է մոր արցունքի միջով, տառապանքի ու ցավերի միջով, արևի լույսի շողով... Մայրերը սեղմում են ատամները, բայց հպարտությամբ դիմանում են, քանի որ՝

Սեղմիր ատամդ,

Քո ժողովրդի հաղթանակին
Չհավատալու իրավունք չունես:

Պատմություն առարկայից աշակերտներն ստուգաբար գերազանց են հանձնում: Առաջին պահ զարմանում են, թե ֆիզիկայի, մաթեմատիկայի բարդ բանաձևերի մեջ խորացած այս պատանիներին ու պարմանուհիներին որտեղից ժամանակ՝ այդքան բանաստեղծություններ սովորելու, գեղեցիկ երգելու, պարելու բազմաշնորհություն: Եվ մեկ անգամ ևս համոզվում են, որ մեր հաղթանակների հիմքը մեր ոգու ուժն է, որը գոյանում է մեր գրականությունից, երգերից, երաժշտությունից:

Հիշում ենք, խոնարհվում ենք, հպարտանում ենք...

Դպրոցի տնօրեն Սուսաննա Ներսեսյանը հպարտությամբ է արտահայտվում իր դպրոցի աշակերտների մասին. «Հիանալի սերնդափոխություն է կատարվում: Ապրիլյան քառօրյան անգամ ևս ապացուցեց, որ ավագ սերնդին արժանի հերթափոխ է մեծանում՝ պատրաստ անվարան պաշտպանելու հայրենի հողը»:

Նմանատիպ միջոցառումներից հետևությունը մեկն է՝ յուրաքանչյուր ոք իր գործունեության շրջանակում իր կյանքի ամեն մի ժամանակահատվածում մեծ պատասխանատվությամբ պետք է մտնենա իր գործին, աշակերտները՝ ուսման ասպարեզում, քանի որ դպրոցում ձեռք բերած գիտելիքները կանխորոշում են յուրաքանչյուրի, ընդհանրության մեջ՝ երկրի ապագան:

Մաղթանք էլ բխում է բոլորի սրտից. թող այսուհետ գարունները գան առանց արյունի ու արցունքի, թող ոչ ոք ցավոտ հուշ չդառնա, և թող այսուհետ զինվորական համազարկերը լինեն միայն հաղթության համար:

Ս. ՎԱՐԻԵՆՅԱՆ

ԵՎ ԲԱՐԻՆ ԿՓՐԿԻ ԱՃԽԱՐՀԸ...

Ապրիլի 1-ը պայծառ ու ջերմ օր էր Շահումյանի շրջանի Նոր Դարաչինարի Արամայիս հաշտության անվան դպրոցում: Ուրախ էին բոլորը: Թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները վաղուց սպասում էին Երևանի Մոնթե Մեյքոնյանի անվան հ. 11 դպրոցի աշակերտների նամակներին: Բարության և մարդասիրության ևս մեկ ակտ էր իրականացվել: Դասղեկ Տաթևիկ Ասատրյանի նախաձեռնությամբ և դպրոցի տնօրեն տիկին Միրզոյանի աջակցությամբ աշակերտները մեր դպրոցին իրենց միջոցներով մվեր էին ուղարկել մեկ տպիչ սարք, իսկ 1-3-րդ դասարանի աշակերտներին՝ պայուսակներ և գրեմական պիտույքներ: Սակայն կարող են ասել, որ ամենասպասելին և հետաքրքիրը նրանց նամակներն էին՝ սրտապարկ, ջերմագին և այնքան հուզիչ, որ մենք՝ մանկավարժներս անգամ հուզվեցինք: Նրանք երբեք չեն եղել Քարվաճառում, անձանոթ են թե՛ Քարվաճառի հրաշք բնությանը, թե՛ բնակավայրերին, և բոլոր նամակներից բխում էր սեր, հայրենասիրություն, հոգևոր և բարոյական մեծ աջակցություն: Բոլորը միահամուռ ցանկություն են հայտնել Արցախի հետ իրենց ծանոթությունը սկսել Քարվաճառից, այսինքն՝ Նոր Շահումյանի շրջանի Նոր Դարաչինար գյուղից և դպրոցից, ծանոթանալ Քարվաճառի ազատագրման պայքարի պատմությանը, հերոսներին, պատմական վայրերին, հրաշակերտ Դաղիվանքին, այցելել Գանձասար և Տիգրանակերտ, բարձրանալ Վանքասար: Մեր աշակերտները մեծ խանդավառությամբ պատասխանեցին նամակներին և նրանց հրավիրեցին ապրիլի 21-ին՝ Սուրբ Հարության տոնին, Դաղիվանքում միասին մասնակցել տոնակատարությանը:

Ինչի՞ց է սկսվում Հայրենիքը:
Քո Այբեմարանի նկարից...

Շուտով Երևան-Վարդենիս-Մարտակերտ նորաբաց մայրուղին Մոնթե Մեյքոնյանի անվան հ. 11 դպրոցի աշակերտներին կբերի Քարվաճառ՝ հաղորդակցվելու հրաշք բնությանը, պատմական վայրերին և Նոր Դարաչինարում ապրող ու սովորող մանուկներին, որոնք սրտանց կհյուրընկալեն բոլորին: Աստված օրհնի և պահի բոլորիս:

Ավարդ ՎԱՐՎԱՆՅԱՆ
Նոր Դարաչինարի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

ԽՈՍՔ ԵՐԱՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

«Մարդը ծնված է հասարակության համար»:

Դեմի Դիդրո

Մարդիկ տարբեր են: Տարբեր են նաև նրանց առավելություններն ու թերությունները: Ինչքան մարդու մեջ բարություն կա, այնքան նրա մեջ կյանք կա:

Մարդու մեջ բարությունը ձեռքբերվում է: Մարդը, ում մասին ցանկանում են խոսել, Նորագյուղի բնակիչ Լևոն Ենգիբարյանն է: Մի անձնավորություն, որը խնդրվել է մարդկային արժանիքների բարձրագույն որակներով: Նա իսկական հայի կերպար է՝ իր խառնվածքով ու իր ապրածով: Մարդ, որ կարողանում է ապրել ու պայքարել հայրենիքի, հարազատ գյուղի բարեկեցության, սիրելի կրթօջախի առաջադիմության համար: Նրա արարքներն այս տարիներին ապացուցում են, որ ավարտել դպրոցը՝ դեռ չի նշանակում հեռանալ, մոռանալ: Միշտ հետաքրքրվում է դպրոցի առօրյայով, հաջողություններով ու ձեռքբերումներով: Ինչն էլ նրան միշտ երիտասարդ է պահում: Նա գիտի, թե որտեղ է գիտելիքի բանալին: Մեծ մանկավարժներն ու անվանի հոգեբաններն իրենց աշխատություններում կարևորել են երեխային խրախուսելու անհրաժեշտությունը, որն ամենամեծ խթան է ուսման և աշխատանքի մեջ առաջընթաց ունենալու: Այսօր մեր շարքերում կան այնպիսի մարդիկ, ովքեր գիտեն ինչով և ինչպես տրամադրել մեր երեխաներին՝ սիրել դպրոցը, եռանդով սովորել, ձգտել հաջողությունների:

Լևոն Ենգիբարյանը, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, այս տարի ևս դրամական պարգևներով խրախուսեց Նորագյուղի Վ.Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի՝ առարկայական օլիմպիադայում առաջնություն գրաված աշակերտներին: Նրա այդօրինակ գործունեությունը ոգևորող է, և համոզված ենք, որ կխթանի մեր աշակերտների առավել լավ սովորելուն ու հետագայում դպրոցի համբավը բարձր պահելուն: Իմ և բոլոր ծնողների անուղից խորին շնորհակալություն մեր երեխաներին ոգևորելու և ուրախացնելու համար: Մաղթում ենք Ձեզ արևաշատություն, առողջություն և բազում հաջողություններ:

Ա. ՎՐԻՆՅԱՆ

Շնորհավորանք

ՉԵՐ ԱՆԽՈՆՉ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՐԺԵՎՈՐՎԱԾ Է ԲՈԼՈՐԻՍ ԿՈՂՄԻՑ



Յ ու լ ր ա ք ա ն չ յ ու թ մարդ ծնվում է ինչ-որ առաքելությամբ, կայանում յուրովի, թրծվում կյանքի բովում՝ ծառայելով իր ազգին ու ժողովրդին և գնահատվում ըստ արժանվույն: Նման անձնավորություն է Ստեփանակերտի Հայկ Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոցի տնօրեն Վահիկ Ղազարյանը: Մտավորականի ու անզուգական կերպար,

լավագույն տնօրեն, բարի ու ազնիվ գործընկեր, բանիմաց ու խորագետ մասնագետ, մարդասեր, հումորով հարուստ, մեղմ ու սկզբունքային, մեծատառով մարդ: Անվերջ կարելի է թվարկել այն մարդկային ու մասնագիտական հատկանիշները, որոնցով օժտված է Վ.Ղազարյանը, մի անձնավորություն, ում վաստակը՝ որպես ղեկավարի, մանկավարժի, անչափելի է, ում անցած կյանքի ուղին վսեմ օրինակ է սերունդների համար: Ծնվել է 1959թ. հայկական Գարդման աշխարհի Քարհատ ավանում (Դաշքեսան): Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1977թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը: Ավարտելով՝ գործուղվել է ծննդավայր և աշխատանքի անցել սկզբում Գետիքչենի, ապա՝ Շարակքարի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ: 1985-ից մինչև 1988թ. մայիսն աշխատել է «Դաշքեսան» հայերեն թերթի խմբագրությունում:

1988-ի փետրվարին սկիզբ առած ազգային-ազատագրական շարժումը երկմտանք չառաջացրեց մեծ հայրենասերի մոտ, և նա ընտանիքով տեղափոխվեց Ստեփանակերտ՝ կանգնելով Արցախյան ազատամարտի առաջին շարքերում: 1992թ. Վ.Ղազարյանը նշանակվում է Պաշտպանության բանակի տանկային զուամարտակի անձնակազմի հետ տարվող դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ: 1992թ. մայիսին վիրավորվում է Նախիջևանի մերձակա տարածքում: Ապաքինվելուց հետո վերադառնում ու նշանակվում է զինված ուժերի 4-րդ պաշտպանական շրջանի զրահատանկային ծառայության սպա: Ձինադարից հետո Վ.Ղազարյանը նշանակվել է ազատագրված Մալիբեկու (այսօր՝ Աջափնյակ) գյուղի նորաստեղծ դպրոցի տնօրեն: Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի հիմնադրումն ու կայացումը կապված է Վ.Ղազարյանի անվան հետ: 2009-ից առայսօր Վ.Ղազարյանը Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի տնօրենն է: ԼՂՀ նախագահի 2002թ. թիվ 343 հրամանագրով նա պարգևատրվել է «Երախտագիտություն», 2017թ. ԼՂՀ նախագահի N 26-Ա հրամանագրով՝ «Մարտական ծառայություն» մեդալներով, 2017թ. Արցախի ազատամարտիկների միության կողմից պարգևատրվել է «Հայրենյաց պաշտպան» մեդալով:

Կարող ենք խանդավառությամբ ասել, որ Վ.Ղազարյանը սերմանում է միմիայն բարին ու ազնիվը, պատվասիրություն ու հայրենասիրություն: Նրա դաստիարակած սաների մոտ ամենավեղը հայրենիքն է ու նրա ապագան:

Մանկավարժությունը նրա տարերքն է, դպրոցն ու դպրոցավարությունը նրա համար կենսակերպ են, ապրելու և արարելու ուղղորդող գաղափար, որի իրականացման համար նա կարևորում է նվիրվածությունը, տքնաջան աշխատանքը, սերը գործի հանդեպ:

Նա երեխաների մոտ հզորացնում ու ամրապնդում է սերը դեպի գիտելիք, քանզի հայի համար գիրն ու գիտելիքը կարևորագույն տեղ են զբաղեցնում դարեր ի վեր:

Խոսքն առինքնող է, ձայնի երանգը՝ կիսամեղմ, որ աստիճանաբար ազդու է դառնում և ակամա դիմացիին ուշադրությունը գրավում:

Նրա մեջ միահյուսված են արժանի հայորդու, բարեխիղճ ու սրտակից մարդու, արհեստավարժ մանկավարժի որակները: Իր գործին նվիրվածության շնորհիվ արժանացել է գործընկերների, աշակերտների և ծնողական հասարակության հարգանքին: Մեր հարգարժան գործընկեր, մեր ազնիվ ու պարտաճանաչ տնօրեն, թող առողջությունն ու հաջողությունները լինեն ուղեկիցը թո՛ւ մարդկային վե՛տ արժանիքներ ամբարած հարուստ հոգուդ ջերմությունն ու սերը սաներիդ ու ընկերներիդ անմնացորդ շաչյլելու համար:

Կոլեկտիվը բարձր է գնահատում սիրելի տնօրենի արժանիքները և շնորհավորում 60-ամյա հոբելյանը՝ մաղթելով նորանոր հաջողություններ:

Ստեփանակերտի Հ. Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԳԱՐՈՒՆ, ՄԱՅՐ, ՍԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ապրիլի 4-ին Մարտունու Մոնթե Սել-բոնյանի անվան մանկապարտեզի պատերի ներսում վառ գարունն էր թևածուլ մանուկների սրտերում: Մանկապարտեզի դահլիճը զարդարված էր Կանանց միամսյակի ավարտն ազդարարող ապրիլյոթյան տոնին համահունչ, իսկ ալ կարմիր վարդերն ու գարնանային ծաղիկները մի առանձնակի շունչ ու բույր էին տարածում շուրջբոլոր:

Մայրությանն ու զեղեցկությանը ծոնված բանաստեղծություններով ու երգերով, միջին «Վարդ» խումբը՝ նաև պարերով ու բեմադրություններով, աղջիկները՝ խոհարարական, տղաները՝ արական սեռին

վարդը, որ միշտ և ամենուր սպասված հյուր է, իր հմայքով ու զեղեցկությամբ նոր երանգ հաղորդեց՝ ավետելով գարնան գարթոնքը:

Ինչպես նաև զանազան փոքրիկները գովեստի, շնորհավորանքի խոսքեր շալյեցին մայրիկներին, տատիկներին, տնօրինությանն ու դաստիարակներին: Երեխաները երգում ու ասումներում էին հայերեն, ինչը խոսում է հայեցի դաստիարակության մասին: Համդի-սատեսը ոգևորվում էր յուրաքանչյուր սանի կատարմամբ:



Մայրությանն ու զեղեցկությանն տոնը լավագույն առիթ էր, որ մեր փոքրիկներն իրենց անկեղծ սրտի խոսքը հղեն սիրելի մայրիկներին, տատիկներին և երկրորդ մայր դարձած դաստիարակներին՝ Կարինե Առստամյանին, Քրիստինե Բաբայանին, Իրինա Ստեփանյանին, Հելեն Մարգարյանին:

Բնորոշ ներկայացումներով: Գարնան ծաղիկներն աշխուժացան, երբ դուրս եկավ ծաղիկների թագուհին՝ մայիսյան բուրումնավետ, քնքուշ կարմիր վարդը (կերպարում՝ Մարիամ Աղաբեկյան): Գարնան

Մանկապարտեզի կուլեկտիվին շնորհակալության խոսք ասաց ու հանդեսի վերաբերյալ իր տպավորություններով կիսվեց ծնող Վիկտորյա Բալայանը:

Հաջորդ օրը՝ ապրիլի 5-ին, գարնան ավելի պայծառ գույներով ու նորովի թարմ շնչով էր ողողված մանկապարտեզի դահլիճը ավագ «Ջանգալ» և կրտսեր երկրորդ «Մանուշակ» խմբերի սաների մասնակցությամբ տեղի ունեցած այս հանդեսներին: Եվ այդ ամենը՝ շնոր-

հիվ «Ջանգալ» խմբի դաստիարակներ Անժելիկա Սողոմոնյանի, Ռուզաննա Չիլինգարյանի և «Մանուշակ» խմբի դաստիարակներ Նարինե Սարգսյանի, Հասմիկ Սկրտչյանի ջանասեր աշխատանքի: Մանավանդ ավագ խմբի սաները բեմադրությամբ հմտորեն ցուցադրեցին իրենց ընդունակությունները՝ նմանակելով տնօրինությանն ու դաստիարակներին՝ իբր տարիներ են անցել, մեծացել են և աշխատում են մանկապարտեզում:

Ներկաներին շնորհավորանքի ու շնորհակալական խոսք ասաց ծնող ժամինե Գրիգորյանը: Երեխաների երկօրյա ուրախությանը մասնակցում էր տնօրեն Իրինա Ղուկասյանը: Նա նախ շնորհավորեց բոլորի Մայրությանն ու զեղեցկությանն տոնը՝ մաղթելով կանացի երջանկություն, ապա շնորհակալություն հայտնեց կուլեկտիվին՝ բարձր մակարդակ ապահովելու, ծնողներին՝ ակտիվ մասնակցության համար:

**Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ
ք. Մարտունի**

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄՈՆԹԵ ՍԵԼԵՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Մարտի 21-ը թատրոնի միջազգային օրն է: Մարտունու Մոնթե Սելբոնյանի անվան մանկապարտեզի տնօրեն Իրինա Ղուկասյանը որոշեց շաբաթը դարձնել հետաքրքիր: Նա հանձնարարեց դաստիարակներին, երաժիշտներին, պարուսույցներին ու մեթոդիստին՝ նախաձեռնել տիկնիկային թատրոն և բեմականացում: Մրցակցությունը ոգևորիչ էր ու պատասխանատու: Գործի անցան բոլորը:

Մարտի 27-ին դաստիարակների մի խումբ մանուկներին ներկայացրեց նրանց շատ սիրելի «Գնդիկ բողբոջիկ» ռուսական ժողովրդական հեքիաթի տիկնիկային ներկայացումը: Երեխաները հիացմունքով ու մեծ խանդավառությամբ էին դիտում: Նրանց փոքրիկ աչուկներից ծորում էր գարնանը ու ուրախությունը: Դաստիարակները կերպարները կերտել էին հեքիաթին համահունչ: Օրն իսկական հեքիաթային էր թե՛ մեծերի և թե՛ փոքրերի համար: Մանուկները դեռ չգիտեին, որ շաբաթը լի է անակնկալներով:

Մարտի 28-ին փոքրիկ հանդիսատեսը նորից նստած էր դահլիճում: Ամենահետաքրքրականն այն էր, որ փոքրիկները դահլիճ մտնելուն պես արագ տեղավորվեցին և սկսեցին ակնապիշ նայել բեմին:

Այս անգամ դաստիարակների մի ուրիշ խումբ մեթոդիստ Հասմիկ Սկրտչյանի գլխավորությամբ պիտի ներկայացներ Շառլ Պերրոյի «Մոխրտիկը» հեքիաթի բեմականացումը:

Դահլիճում խորհրդավոր լռություն էր. Բոլորն անհամբեր սպասում էին: Սկսվեց բեմադրությունը: Լարված հետևում էին դերասանական վարպետությամբ օժտված դաստիարակներին: Ակամայից հիշեցի այն փաստը, որ մանկավարժը պետք է նաև դերասան լինի:

Երեխաներն, անշուշտ, ճանաչեցին իրենց դաստիարակներին և զարմանքից ապշել էին: Հաճելի էր տեսնել, թե ինչպես են նրանք ամբողջ ելույթում նվիրված իրենց աշխատանքին: Անուն են ամեն ինչ՝ իրենց փոքրիկների առօրյան վառ ու հետաքրքիր դարձնելու համար: Յուրաքանչյուրի մեջ քնած մանուկը այդ պահին, անշուշտ, արթնացել էր...

Իմ աչքից չվրիպեց նաև պատի թերթը՝ «Մեր առօրյան» վերնագրով: Այնտեղ կային շատ նկարներ՝ մանկապարտեզում կազմակերպված միջոցառումների զեղեցիկ պահերով: Իսկ միջանցքի պատից կախված էր Ավոյի մեծադիր դիմանկարը: Նրա խոսումն հայացքը կարծես խաղաղություն է խոստանում մանուկներին: Բառերով աննկարագրելի էր այն զգացողությունը, որն ունեցա հարազատ բնօրրանում: Չգիտեմ հպարտությո՞ւն էր, կարո՞տ, թե՞ հայրենասիրություն:

**Արեվիկ ՀՈՎՍԵԹՅԱՆ
Ստեփ. Ա. Դուլյանի անվան հ. 2
հիմն. դպրոցի ուսուցչուհի**

ՏՈՆ ԳԱՐՆԱՆ ԶԱՐԹՈՆԵՔԻ ԵՎ ԿԵՆԱՐԱՐ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ

Բնության գարթոնքի հավիտենական ընթացքի բուրմունքն է տիրում Արցախի աշխարհում:

Նորից գարուն է, և ծաղիկների բույր ու թովչանք: Նոր բողբոջած ծառ ու ծաղկի հետ արթնացած մատղաշ սրտերը ժպիտներ են պարզաբուն ամենքին:

Գարունը շրայլորեն մտավ մեր լեռնաշխարհի՝ փռելով իր բույլ-բույլ սուսափները, իր գույն-գույն փթթումները: Նոր հեքիաթներ են շնչում գարնան ծաղկունքի մասին: Գարունը տիրակալ է դարձել Հայոց աշխարհին, շուրջը փռել անուշ բուրմունքներ: Եվ մայր սրբությանն իր գիրկն առած՝ հռչակել է իր գահակալը, որ աշխարհում թագավորի մայրական սերը, և մայրական բարի երազները օրերի ու օր ստանան, որ աշխարհն ակնածանքով ծնրադրի մոր առաջ:

Ինչո՞ւ մարդիկ գտան, որ գարթոնքի տոնը պետք է լինի մոլորակի ամենաքնքուշ էակներինը՝ մայրերինը. երևի այն պատճառով, որ նրանք մարդկային կյանքի սիրտ ծաղիկներն են՝ իրենց հողում պահած հողի բերրիությունն ու արևի ջերմությունը. խոհական այս մտորումներով ապրիլի 8-ին իրենց գարնանային շքերթը բացեցին Շուշիի Խ.Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի 5-րդ դասարանի սաները դասղեկ, մայրերինի ուսուցչուհի Հասմիկ Ավանեսյանի գլխավորությամբ:

- Կինը խորհրդանշան է սիրո և գթության, զեղեցիկի և լուսավորի: Նա խորհրդանշան է նաև արարչագործության, կյանքի ծագման և հավերժության: Կինը աղբյուրն է ներշնչանքի, որի շնորհիվ կատարվել են բազում մեծագործություններ և հոգևոր թռիչքներ: Մայրությունը մարդկային կյանքի հարստության, սիրո, անձնագրիության, նվիրումի և արարման, քնքանքի, երջանկություն պարզելու անգնա-տանելի առաքելություն է,- արարման խորհրդանշանը կնոջ և անձնագրիություն կրող մոր մասին դրվատանքի խոսք է ատում ուսուցչուհի Հասմիկ Ավանեսյանը:

Հաջորդում են ասումները, պարը, մայրական սիրո, ազգային և հայրենասիրական հայերեն և ռուսերեն երգեր: Սաները սրտաբուխ տողեր են նվիրում մայրությանը, դահլիճում ներկա իրենց մայրերին.

Գարունն ու մայրը երկվորյակներ են,

Գարունը զանգն է կյանքի, գարթոնքի,

Մայրը՝ զանգահարը գարնան թովչանքի:

Մայրը թանկագին է ավելի, քան ամաստը, և նրա ժպիտը՝ արևի մի շող, որ ջերմացնում է ամենուր: Մայրը բարեգութ է, մայրը՝ անրակամ, մայրը կարող է իրեն մոռանալ, իր սրտի հուրը իր գավակին տալ:



Մայրական փառաբանության լուսավոր երանգներն են ալիքվում ողջ դահլիճում. «Մայրս գարուն է, գարնան մաքրություն, մայրիկ, ինձ համար դու մի լուսին ես, արևի նման պայծառ լույս ունես...»:

«Իմ սիրելի մայրիկ, դու իմ արևն ես, դու իմ անձրևն ես, դու իմ երկինքն ես: Մեր տան թագուհին ես, մեր տունը պահողն ես, մայրիկ»:

Կատարվում է պարային զեղեցիկ համար՝ երկնային լուրթ հանդերձով և շղարշով պաճուճված աղջիկների կատարմամբ՝ «Մախմուր աղջիկ» երգի հնչյունների ներքո: Շարունակվում են մայրական սիրո բնութագրումները.

Մայր, դու տաճար տաճարների, Մայր, մի պայծառ մայր Հայաստան...

Տարածվում է «Ես լսեցի մի անուշ ձայն» նվագը սրնգի կատարմամբ: Կրկին շարունակվում է ասումները.

Թե ցավ ունես հողուղ խորքում, Այցի գնա մորդ, տղա, Նա այնպես է ցավո թուժում, Որ այդ ցավից հետք չմնա...

- Մոր շնորհիվ եռք ենք բերում նոր դարին, շուրթի վրա այքն ու բեռն դիրք ենք պահում մեծովի,- իրենց գթառատ սերն են գործվում սաները: - Եվ երանի ամեն արարքում խիղճը պայթեր ու ծաղկեր ամբողջ աշխարհում, ինչպես մայրական սերը: Սիա թե ինչու հայրեն-

յաց սրբությունները կոչվում են մայր հայրենիք, մայր եկեղեցի, մայրենի լեզու, և մայրը խղճի լուսատուն է:

Մայրերն արթուն են, ինչքան թշնամու զնդակն է ուղղված զինվորին, մայրերը սպասում են նրանց և ամեն երեկո կարտով օրհնում:

Իսկ զինվորները մեր խաղաղ կյանքի համառ պայքարում զենքը վայր չեն դնում:

Հայ զինվոր, քայլ եղբայր, քեզ սերունդներն են հիշելու... Այս է սաների երգերի գլխավոր բովանդակությունը:

Բեմ են բարձրանում դպրոցի ավագ սերնդի լավագույն ասումները, ոմանք արդեն շրջանավարտ, մեր բազմալսատակ ուսուցչուհիների դուստրերը, փառաբանական խոսքերով մեծարում իրենց մայր-ուսուցիչներին, պարզաբուն գունագեղ պահեր:

Նրանք ծաղիկներ են նվիրում իրենց մայրիկներին: Միջոցառման մասնակիցները ծաղիկներ են բաշխում ուսուցչուհիներին ու մայրիկներին:

Շաթուն է գունագեղ ճայթուցիչը, դահլիճում տրամադրությունն ավելի է բարձրանում: Սանիկները փարվում են իրենց ուսուցչուհիներին, մայրիկներին, և դահլիճում թևածում է անափ խնդությունը, և գարնանային խանդավառ մթնոլորտը ծաղկաբույր շքերթի ներքո հասնում է իր հանգուցալուծմանը:

Սա մեծ ընդգրկման միջոցառում էր, որ անմոռանալի կմնա ներկաների հուշերում: Սաների խոսքը ջերմ էր, ուսուցչուհուհու՝ տրամադրող, ամեն ինչ ողողված էր գարնան գույներով:

Օրերս մի ուշագրավ երևույթ ևս տեղի ունեցավ դպրոցում. 11-րդ դասարանի դասղեկ Սաիրա Հայրապետյանն իր դասարանի ծնողական կազմին հավաքեց ծնողական ժողովի և որպես անակնկալ՝ նրանց համար հուզիչ գարնանային տոն կազմակերպեց աշակերտների միջոցով: Հուզումնառատ պահերը երկար կմնան ծնողների հիշողության մեջ: Աստված խաղաղություն պարզի խոնջացած հողին, և կրթության գործի մեր նվիրյալները մեկը մյուսին չկրկնող միջոցառումներով զարդարեն հայրենական տուն չքնաղ Արցախը...

Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Գրանցված է՝ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից 2019 թվականի «մարտի» «5» Պետական գրանցման համարը 1051924 Արցախի Հանրապետության արդարադատության նախարար Ա. Դանիելյան

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ Հ Ր Ա Մ Ա Ն

«19» մարտի 2019թ.

ք. Ստեփանակերտ

N60-Ն

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 90-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 4-ի N 74-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 90-Ն հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի: 2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի լիցենզավորման և իրավաբանական բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման նպատակով:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար՝ Ն. ԱՂԱՔԱՆՅԱՆ

Հավելված Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 2019 թվականի մարտի 19-ի N 60-Ն հրամանի

Հավելված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 2013թ. ապրիլի 25-ի N 90-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՋ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՅՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՅՎԱՅՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈՓՈԽՂԵՐՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԱՎ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՅԱՎԱՅՄԱՍ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՅՈՐԳ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՐԳ ԱՍՏԻՃԱՆ ՓՈՒՍԿՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման, ուսման մեջ զերազանց առաջադիմության համար կրթության և գիտության նախարարության գերազանցության մեդալի հավակնորդների ներկայացման, մեդալի հավակնորդների քննությունների կազմակերպման և պարգևատրման հետ կապված հարաբերությունները:

II. ՍՈՎՈՐՈՂԻ ԴԱՍԱՐԱՆՑ ԴԱՍԱՐԱՆ ՓՈՒՍԿՐՄԱՆ ԵՎ ԱՎԱՐՏՈՒՄ

2. 1-ին դասարանում սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան՝ գիտելիքների անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով՝ բնութագրման միջոցով: Առանձին դեպքերում սովորողը կարող է կրկնել տվյալ ուսումնական տարվա դասընթացը՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումի, դասվարի հիմնավորված առաջարկության և Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ: 3. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա: 4. Առանձին գործող ավագ և միջնակարգ հոսքային դպրոցների 10-րդ և 11-րդ դասարանների սովորողները փոխադրվում են հաջորդ դասարան փոխադրական քննությունների միջոցով, որոնք անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ Հաստատության հայեցողությամբ և սահմանած ժամանակացույցի

համաձայն: Քննական առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդական միավորումների կողմից: Փոխադրական քննությունները գնահատվում են՝ 1) գրավորը՝ 20 միավորային համակարգում: 2) բանավորը՝ 10 միավորային համակարգում: 5. Փոխադրական քննությունները գրավոր 8-20 (բանավորի դեպքում՝ 4-10) միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: 1-7 (բանավորի դեպքում՝ 1-3) միավոր գնահատված սովորողը վերաքննություններ է հանձնում օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում: 6. 4-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 1-ին աստիճանի) ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան: 7. 9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի) ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր և ավարտական բոլոր քննություններից 4-10 և 8-20 միավոր գնահատված սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական: 8. 12-րդ դասարանում (ուսումնական հաստատության հանրակրթական հիմնական ծրագրերի 3-րդ աստիճանի) ավարտական դասարան) ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 և պետական ավարտական բոլոր քննություններից 8-20 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ: 9. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողներն ազատվում են գիտելիքների ստուգումից (4-րդ դասարան) և ավարտական (9-րդ և 12-րդ դասարաններ) քննություններից: Նրանց տրվում է հավաստագիր, պետական մոնիթինգ ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների: 10. Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ նշանակում են դասավանդող ուսուցիչները՝ ուսումնական պատվանդանների վերջին շաբաթվա ընթացքում՝ հաշվի առնելով սովորողի կիսամյակային և գնահատականները:

11. «Ֆիզկուլտուրա», «Նախնական գիմնորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունում ավարտելու վրա: 12. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10, առանձին գործող ավագ դպրոցներում՝ նաև 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից 9-10 կամ 18-20, 4-րդ դասարանում տարեկան և գիտելիքների ստուգումից 9-10, 9-րդ և 12-րդ դասարաններում տարեկան 9-10, ավարտական, պետական ավարտական քննություններից 9-10 կամ 18-20 միավոր գնահատված սովորողները պարգևատրվում են կրթության, գիտության և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գովասանագրով: 13. 8-րդ և 9-րդ դասարանների ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից չգնահատված հիմնական դպրոցի սովորողը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում՝ բացառությամբ հետևյալ դեպքերի. 1) առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա» «Նախնական գիմնորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը: 2) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ ամսվա, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և ԱԶ վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը: 3) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը:

14. 4-րդ դասարանում անցկացվում է գիտելիքների ստուգում՝ «Մայրենի» (գրավոր) և «Մաթեմատիկա» (գրավոր) առարկաներից, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ նաև «Ռուսաց լեզու» (բանավոր): Առաջադրանքները կազմվում են Հաստատության մեթոդիկականության կողմից: 15. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» առարկայի թեստերը կազմվում են ռուսերենով: 16. 4-րդ դասարանի՝ տարեկան 1-3 կամ գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված լինելու կամ գիտելիքների ստուգմանը չներկայանալու դեպքում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում երեքը, սովորողը հանձնում է վերաքննություն՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ Հաստատության մեթոդիկականության կազմած առաջադրանքների հիման վրա: 17. Գիտելիքների ստուգման ենթակա առարկայից տարեկան 1-3 գնահատված լինելու դեպքում սովորողը չի մասնակցում տվյալ առարկայից գիտելիքների ստուգմանը: 18. 4-րդ դասարանի սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե՝ 1) սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքերի ընդհանուր թիվը գերազանցում է երեքը: 2) վերաքննությունների արդյունքում առնվազն մեկ առարկայից ստացել է 1-3 միավոր: 19. 9-րդ դասարանում անցկացվում են ավարտական քննություններ հետևյալ առարկաներից՝ 1) Հայոց լեզու և հայ գրականություն (գրավոր), 2) Մաթեմատիկա (գրավոր), (կենտրոնացված՝ կրթության, գիտության և սպորտի նախարարի կողմից հաստատված քննական կենտրոններում), 3) Գրականություն (բանավոր), 4) Օտար լեզու (Ռուսերեն, Անգլերեն, Ֆրանսերեն, Գերմաներեն, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ, բանավոր), 5) Բնագիտություն (Ֆիզիկա, Քիմիա, Կեն-

III. ԱՄՓՈՓԻՉ ԱՏՈՒԳՄԱՆ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑՎԱՅՄԱՍ

ԿԱՐԳ

սաբանություն, Աշխարհագրություն առարկաներ՝ սովորողի ընտրությամբ, գրավոր),

6) **Հայոց պատմություն** (բանավոր),
7) **Ֆիզիկոլոգիա** (նորմատիվների հանձնում),

8) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները քննություն են հանձնում նաև «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր):

Սույն կարգի 19-րդ կետի 1-ին, 3-8-րդ կետերով սահմանված առարկաների քննությունները սովորողները հանձնում են իրենց ուսումնական հաստատություններում:

20. Ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են **ԳԹԿ**-ի կողմից:

21. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «Ռուս գրականություն» առարկայի առաջադրանքները կազմվում են հաստատության մեթոդիավորումների կողմից:

22. «Ֆիզիկոլոգիա» առարկայի ավարտական քննությունն անցկացվում է նորմատիվների հանձնմամբ:

23. 9-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ ավարտական քննություններից 1-3 կամ 1-7 միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում չորսը, վերաքննություն է հանձնում իր Հաստատությունում օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: Առաջադրանքները կազմվում են սույն կարգի 20-22-րդ կետերի պահանջներին համապատասխան:

24. 9-րդ դասարանի սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-3 կամ 1-7 միավոր:

25. 12-րդ դասարանում անցկացվում են պետական ավարտական քննություններ հետևյալ առարկաներից՝

- 1) **Հայոց լեզու և հայ գրականություն** (գրավոր)
- 2) **Մաթեմատիկա** (գրավոր),
- 3) **Հայոց պատմություն** (գրավոր),
- 4) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները քննություն են հանձնում նաև «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր):

26. Ռուսերենով ուսուցմամբ 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկաների թեստերը կազմվում են ռուսերենով:

27. Ավարտական և պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից:

28. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար «Ռուս գրականություն» առարկայի առաջադրանքները կազմվում են հաստատության մեթոդիավորումների կողմից:

29. «Ֆիզիկոլոգիա» առարկայի ստուգարքն անցկացվում է նորմատիվների հանձնմամբ:

30. 12-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց ընդհանուր թիվը չի գերազանցում երեքը, վերաքննություն է հանձնում իր Հաստատությունում՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում: Առաջադրանքները կազմվում են սույն կարգի 27-29-րդ կետերի պահանջներին համապատասխան:

31. 19 տարին լրացած 12-րդ դասարանի սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-3 կամ 1-7 միավոր:

32. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հանրահաշիվ» կամ «Երկրաչափություն» կամ «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում «Մաթեմատիկա» առարկայի ավարտական, պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն՝ 9-րդ դասարանի սովորողները օգոստոսի 20-30-ը, 12-րդ դասարանի սովորողները՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում:

33. Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան և «Մաթեմատիկա» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

34. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ավարտական, պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն՝ 9-րդ դասարանի սովորողները օգոստոսի 20-30-ը, 12-րդ դասարանի սովորողները՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում:

35. Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատականներ նշանակելու համար:

36. Եթե 9-րդ կամ 12-րդ դասարանի սովորողը «Հայոց լեզու», «Հայ գրականություն», կամ «Գրականություն», «Հայոց պատմություն» առարկաներն ուսումնասիրել է վերջին երկու ուսումնական տարիներին, ապա հիմնական կրթության վկայականում կամ միջնակարգ կրթության ատեստատում այդ առարկայի համապատասխան տողում, սովորողի ցանկությամբ, կարող է գրվել՝ «չի ուսումնասիրել»:

37. 19 տարին լրացած՝ երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 կամ քննական 1-7 միավոր գնահատված (այդ թվում՝ վերաքննության արդյունքներով), ավարտական, պետական ավարտական քննություններին չմասնակցած 9-րդ կամ 12-րդ դասարանների սովորողները դուրս են մնում Հաստատությունից: Այդ սովորողները կարող են հաջորդ տարի իրենց Հաստատությունում հանձնել քննություններ, ստանալ միջնակարգ կրթության ատեստատ կամ հիմնական կրթության վկայական:

38. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանների արական սեռի սովորողները Հաստատությունից դուրս մնալու դեպքում իրավունք ունեն քննություն(ներ) հանձնել և հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալ:

39. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի իգական սեռի, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված քաղաքացիներից իրավունք է վերապահվում հաջորդ տարի նույն Հաստատությունում հանձնել քննություններ այդ առարկաներից, իսկ նոր բնակավայր տեղափոխվելու դեպքում՝ այդ բնակավայրում գտնվող Հաստատություններից մեկում:

40. Հաստատությունում որևէ առարկա չդասավանդվելու պատճառով տվյալ առարկայից գնահատական չունեցող սովորողը իր

ցանկությամբ այդ առարկայից կարող է քննություն հանձնել էքստեռն կարգով: Այդ քննության արդյունքը հիմք է միջնակարգ կրթության ատեստատում տարեկան, իսկ քննական առարկայի դեպքում՝ քննական և տարեկան գնահատականներ նշանակելու համար:

41. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարաններում (այդ թվում՝ առանձին գործող ավագ դպրոցների 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից) մինչև 3 առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողի փոխադրման հարցը որոշվում է օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ նրա հանձնած վերաքննությունների արդյունքներով: Վերաքննությունների առաջադրանքները մշակվում են Հաստատության համապատասխան մեթոդիավորման կողմից:

42. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ և 10-րդ դասարաններում վերաքննության արդյունքում 1 կամ 2 առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ՝

2) ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի 1-3 միավոր գնահատված առնվազն մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում:

43. 11-րդ դասարանում վերաքննության արդյունքում մինչև 3 առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ՝

2) ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի մինչև 3 առարկաների վերաքննությունները:

44. Վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է 42-րդ և 43-րդ կետերում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

45. Սույն կարգի 42-րդ կետի 2-րդ, 43-րդ կետի 2-րդ եմբակետերով սահմանված պայմաններով փոխադրվող կամ սույն կարգով սահմանված վերաքննություններ հանձնող սովորողի համար ուսուցում կազմակերպելու նպատակով Հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագիտական խումբ:

46. Հիմք ընդունելով մասնագիտական խմբի կարծիքը և առաջարկությունները սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, Հաստատության տնօրենը հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական ուսուցման ծրագրեր և լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց:

47. Սովորողին ամառային առաջադրանք տալու կամ դասընթացը կրկնելու վերաբերյալ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին տնօրենի հանձնարարությամբ սովորողի ծնողին (օրինական ներկայացուցչին) տեղյակ է պահում դասընթացի մանկավարժական խորհրդի միստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ:

48. 2-12-րդ դասարանների երեքից ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողները (մինչև 19 տարին լրանալը) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

49. Հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների գիտելիքների ստուգումը, ավարտական և պետական ավարտական, այդ թվում՝ ուսման մեջ գերազանց առաջադիմության համար կրթափոխանակության կրթության, գիտության և սպորտի նախարարության գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդների քննությունների կազմակերպման ու անցկացումն իրականացվում է սույն կարգի և ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի՝ տվյալ ուսումնական տարվա համար հաստատված սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անց-

կացման ժամանակացույցի և աշխատակարգի համաձայն:

IV. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՈՒՄ ԲԱՅԱԿԱՅՑԻ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՅՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈՒՆԴՈՒՄԸ

50. Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում և ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտից 15 օր առաջ:

51. Ուսումնական տարվա ընթացքում **180-240** ժամ դասերից բացակայած 2-12-րդ դասարանների սովորողների հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում՝ մինչև մայիսի 15-ը:

52. Հաստատության մանկավարժական խորհուրդը կազմում է տնօրենի հաստատման է ներկայացնում տեղեկանք՝ 2-12-րդ դասարանների սովորողների բացակայությունների քանակի, դրանց բնույթի վերաբերյալ:

53. 10-12-րդ դասարանների սովորողների բացակայությունների մասին տեղեկատվությունը մանկավարժական միստում քննարկվելուց հետո Հաստատության տնօրենի կողմից ներկայացվում է Նախարարություն:

54. Որևէ կիսամյակում 2-12-րդ դասարաններում 180-240 ժամ բացակայության դեպքում սովորողի, բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողի, բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն:

55. Ուսումնական տարվա ընթացքում 2-12-րդ դասարաններում 180-240 ժամ բացակայության դեպքում սովորողի, բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողի, բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ սույն կարգի համաձայն:

56. 2-12-րդ դասարաններում 180-240 ժամ բացակայության դեպքում սովորողների, բացառությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները, տվյալ տարվա մայիսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում լրացուցիչ քննություններ են հանձնում «Մայրենի», «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ՝ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից: «Ֆիզիկոլոգիա» առարկայից անցկացվում է ստուգարք:

57. 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 180-240 ժամ բացակայություն ունենալու դեպքում սովորողը լրացուցիչ քննություն է հանձնում այն առարկաներից, որոնք ընտրել է:

58. 2-8-րդ, 10-11-րդ, ինչպես նաև 19 տարին չլրացած 9-րդ և 12-րդ դասարանների սովորողը 240 ժամից ավելի բացակայելու դեպքում չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, 9-րդ և 12-րդ դասարանների 19 տարին լրացած սովորողը դուրս է մնում ուսումնական հաստատությունից:

59. Բոլոր դասարանների քննական և ստուգողական առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդիավորումների կողմից՝ առնվազն 3 տարբերակով: Դրանք հաստատվում են Հաստատության տնօրենի կողմից:

60. Հաստատության տնօրենը կազմում է սույն կարգի 56-րդ կետում նշված քննությունների ժամանակացույցը և տեղեկացնում Նախարարությանն ու լիազոր մարմնին: Քննություններին կարող են մասնակցել Նախարարության և (կամ) լիազոր մարմնի ներկայացուցիչը (ները):

61. Լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա նշանակվում են սովորողի տարեկան գնահատականները:

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ

9 V. ՈՒՍԱՆ ՄԵՋ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒՄԸ

62. Մեղալի ներկայացվում է 9-րդ դասարանը հիմնական կրթության գերազանցության վկայականով ավարտած և 10-12-րդ դասարաններում բոլոր առարկաներից տարեկան, իսկ առանձին գործող ավագ դպրոցներում՝ նաև 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննություններից 9 կամ 10 միավոր և (կամ) 18-20 միավոր գնահատված սովորողը:

63. Ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկայից չզննատված սովորողը, որպես Մեղալի հավակնորդ, չի ներկայացվում, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը,

2) առանձին գործող ավագ դպրոցների բնագիտամաթեմատիկական և արհեստագործական հոսքերում ուսումնառության երեք տարիների ընթացքում «Հայոց եկեղեցու պատմություն» «Համաշխարհային պատմություն» առարկաների՝ ուսումնական պլաններով չնախատեսված լինելը,

3) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և Արցախի Հանրապետություն վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը,

4) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը:

64. Մեղալի հավակնորդ սովորողների նախնական անվանացանկերն առաջին կիսամյակն ամփոփելուց անմիջապես հետո Հաստատությունները ներկայացնում են շրջանի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) վարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնին իսկ Նախարարության ենթակայության և ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների անվանացանկերը՝ Նախարարություն:

65. Մինչև մայիսի 10-ը շրջվարչակազմի կրթության և սպորտի բաժնիները, Ստեփանակերտի քաղաքապետարանը և Նախարարությունը Հաստատություններում ստուգում են ներկայացված փաստաթղթերի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

66. Մինչև մայիսի 10-ը շրջվարչակազմի կրթության և սպորտի բաժնիները, Ստեփանակերտի քաղաքապետարանը ստուգված ցուցակները ներկայացնում են Նախարարություն՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը (հիմնական կրթության վկայականի պատճենը, քաղվածք մանկավարժական խորհրդի որոշումից, տեղեկանք սովորողի առաջադիմության մասին, տեղեկատվություն սովորողի՝ պետական ավարտական և միասնական քննությունների վերաբերյալ): Ներկայացված Մեղալի հավակնորդների փաստաթղթերը Նախարարությունում կարող են կրկնակի ուսումնասիրվել:

VI. ՄԵՂԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

67. Մեղալի հավակնորդ բոլոր սովորողները (անկախ ուսումնական հաստատության ենթակայությունից և անկախ հաստատությունում ուսուցման լեզվից), այդ վում՝ սույն

կարգի 63-րդ կետի 1-4 ենթակետերի հիմքով քննություններին մասնակցող սովորողները «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից պետական ավարտական քննությունները հանձնում են կենտրոնացված կարգով՝ Նախարարության կողմից նախապես որոշված՝ շրջանի (Ստեփանակերտ քաղաքի) որևէ Հաստատությունում՝ տվյալ քննության համար սահմանված օրերին:

68. Քննությունների նախապատրաստման համար պատասխանատու է քննական կենտրոնի ղեկավարը: Քննությունների ընթացքը և աշխատանքների ստուգումը վերահսկում են Նախարարության ներկայացուցիչները:

69. Առարկաները ոչ մրցութային լինելու դեպքում Մեղալի հավակնորդի համար հիմք է կենտրոնացված համակարգով հանձնված պետական քննական առարկայի գնահատականը:

70. Քննական աշխատանքներն ստուգվում են Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ԳԹԿ-ի համակարգչային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Նախարարության ներկայացուցիչն է: Հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ: Քննական գրավոր աշխատանքները մինչև դրանց ստուգման ավարտը պահվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ:

71. Մեղալի հավակնորդ այն շրջանավարտները, որոնց համար «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա», առարկաները համարվում են բուհական ընդունելության մրցութային քննություն, քննություն

են հանձնում միասնական համակարգով (պետական ավարտական քննության միավորները հաշվարկվում են միասնական քննության ավարտական մասի գնահատականի հիման վրա):

72. «Ֆիզկուլտուրա» առարկայից ստուգաբլթ Մեղալի հավակնորդը հանձնում է իր Հաստատությունում:

73. Մեղալի հավակնորդ սովորողի, ինչպես նաև Հաստատության մյուս սովորողների համար քննական առաջադրանքները բովանդակությամբ ու կառուցվածքով նույնն են:

74. Մինչև հունիսի 25-ը Հաստատությունը շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի է ներկայացնում տեղեկանք՝ Հաստատությունում «Ֆիզկուլտուրա» առարկայից ստուգաբլթի արդյունքների մասին: Ստացված արդյունքներն ընդհանրացվում են շրջվարչակազմի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմի կրթության և սպորտի բաժնիներում և մինչև հունիսի 28-ը ներկայացվում Նախարարություն: Նախարարության ենթակայության Հաստատությունները սույն կետով նախատեսված տեղեկանքը նույն ժամկետում ներկայացնում են Նախարարություն:

75. Պետական ավարտական քննություններից 20 միավորային համակարգում՝ 18, 19, 20 կամ 10 միավորային համակարգում՝ 9, 10 միավոր ստացած և «Ֆիզկուլտուրա» առարկայից ստուգաբլթ հանձնած Մեղալի հավակնորդները ստանում են «Գերազանցության» նշումով միջնակարգ կրթության ատեստատ և պարգևատրվում են Մեղալով:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար՝ Ն. ԱՐԱԲԱԼՅԱՆ

ԱՐՃԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ Հ Ր Ա Մ Ա Ն

«09» ապրիլի 2019թ.

ք. Ստեփանակերտ

N 95/Մ

2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՃԿԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՌՅՈՒՅՈՒ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄՍՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՍԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2018-2019 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը՝ համաձայն N 1, 2 հավելվածների:

2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը տպագրել «Լուսարար» պաշտոնաթերթի առաջիկա համարում և տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար՝ Ն. ԱՐԱԲԱԼՅԱՆ

Հավելված 1 Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի «09» ապրիլի 2019թ. N95/Մ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՃԿԱՅՄԱՆ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետև՝ Հաստատություն) 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարաններում ավարտական և կենտրոնացված ավարտական և 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը, որը ներառում է քննությունների հայտագրումը, կազմակերպումը, անցկացումը, ստուգումը, գնահատումը, արդյունքների հրապարակումը և բողոքարկումը:

2. Հաստատությունների 4-րդ դասարաններում անցկացվում է գիտելիքների ստուգում՝ հունիսի 1-10-ը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացվում է ավարտական քննություն «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ մայիսի 26-ին, մյուս ավարտա-

կան քննությունները՝ հունիսի 1-21-ը՝ համաձայն հավելված 2-ի:

4. Հաստատությունների 12-րդ դասարաններում անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ ղեկտեմբերի 24-28-ը կամ հունիսի 1-21-ը՝ համաձայն հավելված 2-ի:

5. 12-րդ դասարանի սովորողը ղեկտեմբեր ամսին կարող է հանձնել այն առարկայի(ների) պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում:

6. Միասնական քննությանը մասնակցող սովորողը ղեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով:

7. Ղեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մաս-

նակցելու համար սովորողները մինչև նոյեմբերի 25-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենը նոյեմբերի 25-ից մինչև ղեկտեմբերի 1-ը ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը փոխանցում է Արցախի Հանրապետության «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետև՝ ԳԹԿ):

8. 12-րդ դասարանի հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցողների դիմում-հայտերը հաստատության տնօրենը նույն ձևով լրացնում և ԳԹԿ է փոխանցում հունվարի 22-ից մինչև փետրվարի 22-ը:

9. 9-րդ դասարանի կենտրոնացված և ավարտական քննություններ հանձնողների դիմում-հայտերը և ցուցակ-հայտերը հաստատության տնօրենը լրացնում և ԳԹԿ է փոխանցում հունվարի 22-ից մինչև փետրվարի 15-ը:

10. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության գերազանցության մեդալի (այսուհետև՝ Մեդալ) հավակնորդներին թույլատրվում է մասնակցել քննության՝ համաձայն կրթության, գիտության և սպորտի նախարարության (այսուհետև՝ Նախարարություն) հաստատած անվանացանկի: Քննությունից բացակայած կամ ուշացած Մեղալի հավակնորդ սովորողը զրկվում է Մեդալ ստանալու իրավունքից:

11. Ավարտական և պետական ավարտական քննությունները սկսվում են ժամը 10.00-ին:

Սովորողներն ուսումնական հաստատություն են ներկայանում ժամը 9.00-ին: 12. 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» ավարտական քննությունը սկսվում է ժամը 11.00-ին: Սովորողները

ԱՅԽԱՏԱԿԱՐԳ

քննական կենտրոններ են ներկայանում ժամը 10.00-ին:

13. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:

14. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է.

1) «Մայրենի» առարկայից՝ գրավոր (թեստ) քննությանը տրվում է 60 րոպե:

2) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ) քննությանը տրվում է 60 րոպե:

3) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար նաև՝ «Ռուսաց լեզու» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:

4) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» առարկայի թեստերը կազմվում են ռուսերենով:

5) Գիտելիքների ստուգման առաջադրանքները (առնվազն 4 տարբերակ) կազմում են Հաստատության մեթոդիկական կենտրոնը՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների:

Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից:

6) Հաստատության տնօրենը թեստերը ծրարում է կնքում է: Ծրարները բացվում են գիտելիքների ստուգման օրը քննասենյակում՝ սովորողների ներկայությամբ:

7) Գրավոր աշխատանքը գնահատվում է 10 միավորային համակարգով:

8) Գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչը և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:

9) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների ստուգման ժամանակ տրվում է լրացուցիչ 40 րոպե՝ ապահովելով սովորողի կարիքին համապատասխան պայմաններ:

15. 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացվող «Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն» (բանավոր, ռուսերենով ուսուցմամբ համապատասխան դասարանների համար) առարկաների քննական առաջադրանքների հարցաշարերը և հարցատոմսերը կազմում են տվյալ Հաստատության առարկայական մեթոդական միավորումները՝ Նախարարության կողմից երաշխավորված դասագրքերի և նյութերի հիման վրա:

16. 9-րդ դասարանում ավարտական, կենտրոնացված ավարտական քննական թեստերի առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից, առաջադրանքներն ընտրվում են Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից:

17. 12-րդ դասարանում պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից, առաջադրանքներն ընտրվում են Նախարարության կողմից երաշխավորված շտեմարաններից և Հաստատությունում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից:

18. «Ֆիզիկուլտուրա» առարկայի 9-րդ դասարանում ավարտական քննությունը, 12-րդ դասարանում ամփոփիչ ստուգաբան ընդունվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետևյալ կազմով. հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ:

19. 9-րդ դասարանի սովորողները հանձնում են ավարտական քննություններ.

1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ գրավոր (թեստ) քննության տևողությունը՝ 120 րոպե:

2) «Գրականություն» առարկայից՝ բանավոր:

3) «Հայոց պատմություն» առարկայից՝ բանավոր:

4) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ, կենտրոնացված). քննության տևողությունը՝ 120 րոպե:

5) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տևողությունը՝ 120 րոպե:

6) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն») սովորողի ընտրությամբ) առարկայից՝ բանավոր:

7) «Ֆիզիկուլտուրա» առարկայից՝ քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում):

8) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար գիտելիքների ստուգումն անցկացվում է նաև «Ռուս գրականություն» առարկայից բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:

20. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» առարկայի և «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն») առարկաների ավարտական քննությունների թեստերը կազմվում են ռուսերենով:

21. 9-րդ դասարանում բանավոր քննությունները կազմակերպելու, անցկացնելու և գնահատելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են հաստատության տնօրենը կամ նրա նշանակված ուսուցիչը (հանձնաժողովի նախագահ), տվյալ առարկայի ուսուցիչը (քննող ուսուցիչ) և ընթերակյան (տվյալ կամ հարակից առարկայի մասնագետ):

1) սովորողները քննասենյակ են մտնում ցուցակում իրենց անունների հերթականությամբ համապատասխան:

2) սովորողների ցուցակում սովորողն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում է քննատոմսը:

3) քննատոմսն ընտրելուց հետո սովորողը քննասենյակում ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանները, լրացուցիչ հարցերը և դրանց պատասխանները:

4) Սովորողի պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով:

22. Հաստատությունները «Գրականություն», «Հայոց պատմություն» և «Օտար լեզու» առարկաների 9-րդ դասարանների ավարտական քննությունների տոմսերը կազմում են Հաստատության մեթոդիկական կենտրոնը՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված և տրամադրված հարցաշարերի և տոմսերի նմուշների: «Գրականություն» և «Օտար լեզու» առարկաների ավարտական քննական առաջադրանքների հարցաշարերը և տոմսերի նմուշները կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից, «Հայոց պատմություն» առարկայի քննական առաջադրանքները՝ 6-9-րդ դասարանների ծրագրային նյութից:

23. 9-րդ դասարանում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» առարկաների ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման, ստուգման և բողոքարկման ընթացակարգը սահմանվում է սույն աշխատակարգի 26-67-րդ կետերի պահանջներին համապատասխան:

24. 12-րդ դասարանում շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ:

1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ գրավոր (թեստ) քննության տևողությունը՝ 120 րոպե:

2) «Հայոց պատմություն» առարկայից՝ գրավոր (թեստ)՝ քննության տևողությունը՝ 120 րոպե:

3) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ)՝ քննության տևողությունը՝ 120 րոպե:

4) «Ֆիզիկուլտուրա» առարկայից՝ նորմատիվների հանձնում (ստուգաբան) մայիսի 27-ից մինչև քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածը:

5) «Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար) սովորողի ընտրությամբ՝ ղեկտնեքերին կամ հունիսին՝ քննաշրջանի ընթացքում:

25. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա (ԱՌԴ):

26. Ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոն է դառնում յուրաքանչյուր Հաստատություն: Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն է պաշտոնապես տվյալ քննական կենտրոնի ղեկավարն է:

27. Կենտրոնացված ավարտական քննությունը կազմակերպում և անցկացնում է ԳԹԿ-ն: Քննական կենտրոնները և դրանց ղեկավար կազմը հաստատում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարը: ԳԹԿ ներկայացուցիչների, կազմակերպիչների և առարկայական հանձնաժողովների անդամների ցուցակը հաստատում է ԳԹԿ տնօրենը:

28. Ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպիչներին, օգնականներին, հերթապահներին նշանակում է քննական կենտրոնի ղեկավարը: Կազմակերպիչները չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

29. Մինչև 30 սովորող ունեցող քննասենյակում աշխատանքները համակարգում է 2 կազմակերպիչ: 30-ից ավելի սովորող ունեցող քննասենյակում առաջին 30 սովորողների համար՝ 2 կազմակերպիչ, մեկական կազմակերպիչ՝ յուրաքանչյուր հաջորդ 30-ի համար, և մեկ կազմակերպիչ՝ վերջին 1-30 և ավելի սովորողների համար:

30. Ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննություններն անցկացվում են սույն աշխատակարգի 26-67-րդ կետերի պահանջներին համապատասխան:

31. Քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

32. Քննական կենտրոնի ղեկավարը քննությունը սկսվելուց մեկ ժամ առաջ կատարում է կազմակերպիչների գրանցում և վիճակահանությամբ բաշխում կազմակերպիչներին՝ ըստ քննասենյակների:

33. Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

34. Սովորողը քննություններին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով՝ (ծննդյան վկայական, անձնագիր, նույնականացման քարտ), կենտրոնացված ավարտական քննության մասնակիցները՝ նաև հաստատության տնօրենի կողմից տրված լուսանկարով տեղեկանքով, Մեդալի հավակնորդները՝ անձնագրով և հաստատության տնօրենի կողմից տրված լուսանկարով տեղեկանքով:

35. Սովորողը նախադասի հերթապահի մոտ վիճակահանությանը որոշում է իր խմբի համարը, քննասենյակում, խմբում վիճակահանության թերթիկի միջոցով, որոշում իր նստարանի համարը: Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է սովորողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, վիճակահանված նստարանի համարը: Սովորողը ցուցակում ստորագրում է իր տվյալների տողում՝ «նստարանի համարը» սյունակում: 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայի քննության ժամանակ սովորողին տրամադրվում է պատասխանների ձևաթուղթը, որտեղ նշվում է տվյալ սովորողի խմբի ցուցակում արձանագրված համարը:

36. Քննասենյակում կայացած վիճակահանության արդյունքի համապատասխան՝ երկրորդ կազմակերպիչն օգնում է սովորողին գտնել իր տեղը և չի թույլատրում տեղափոխություններ կատարել:

37. Քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցիչից ստանում է քննական առաջադրանքների փաթեթները:

38. Քննությունը սկսվելուց առնվազն կես ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի պատասխանատուին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի առաջադրանքներից:

39. Ավարտական քննություններին սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել թշտային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց-ձեռնարկներ:

40. Սովորողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննասենյակ է բերում քննական առաջադրանքների ծրարները: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարները ցուցադրում է սովորողներին, նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների փակ և անբողջական լինելու հանգամանքի վրա: Ծրար(ներ)ը բացելու համար պատասխանատուն հրավիրում է առաջին նստարան(ներ)ին նստած սովորողներից մեկին: Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում հրավիրվում է սովորող այլ շարքից: Ծրարների բացման մասին նշվում է արձանագրության մեջ:

41. Քննասենյակի պատասխանատուն (կազմակերպիչը) սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաև բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգը ընթերցելուց և սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են առաջադրանքները: Սովորողը առաջադրանքն ստանալուն պես շապիկի համապատասխան մասում գրում է խմբի և իր նստարանի համարը: 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայի քննության ժամանակ աշակերտը լրացնում է նաև պատասխանների ձևաթղթի վերևի մասը: Առաջադրանքների վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում է քննության սկզբը և ավարտը:

42. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում, քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ և միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:

43. Խմբի կազմակերպիչը ավելորդ (չօգտագործված, խտանված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո փաթեթավորում և հանձնում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչին:

44. Առաջադրանքի բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը չեն քննարկվում:

45. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող առաջադրանքները փոխարինվում են նորով:

46. Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի կենտրոնի ղեկավարից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել Նախարարության, շրջվարչակազմների, Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնիների և ԳԹԿ-ի ներկայացուցիչները:

47. Քննության ավարտից 20 րոպե առաջ քննասենյակի պատասխանատուն սովորողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները համապատասխան ձևաթղթերի վրա անցկացնելու մասին:

48. Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախագրելուց սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից:

49. Հեռացվող սովորողի վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձևաթղթի էջի վրա գրվում է՝ «Հեռացված է քննությունից»: Քննասենյակի և խմբի արձանագրությունների մեջ գրանցվում են այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը:

50. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտից սովորողը հանձնում է իր առաջադրանքը և ստորագրում իր անվան դիմաց: Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա նա կարող է այն հանձնել և, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից: Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը:

51. Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում:

52. Պատասխանատուն քննական աշխատանքները քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված քննական աշխատանքները վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների,

ԱՊՐԵԼՈՒ ԱՊՐԻԼ

Հավելված 2
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության և սպորտի նախարարի
«09» ապրիլի 2019թ. N 95/Մ հրամանի

ՃԱՆԱՆԱԿԱՑՈՒՅՑ
2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ՍՈՒՓՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ԴԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅՎԱՑՄԱՆ

12-րդ դասարան

Table with 2 columns: ԱՌԱՐԿԱ (Subject) and ՕՐԵՐ (Dates). Rows include Հայոց լեզու և հայ գրականություն, Հայոց պատմություն, Մաթեմատիկա, Ֆիզիկոլոգիա, and «Ռուսաց լեզու».

9-րդ դասարան

Table with 2 columns: ԱՌԱՐԿԱ (Subject) and ՕՐԵՐ (Dates). Rows include Հայոց լեզու և հայ գրականություն, Գրականություն, Մաթեմատիկա, Օտար լեզու, Բնագիտություն, and Ֆիզիկոլոգիա.

4-րդ դասարան

Table with 2 columns: ԱՌԱՐԿԱ (Subject) and ՕՐԵՐ (Dates). Rows include Մայրենի, Մաթեմատիկա, and «Ռուսաց լեզու».

ԻՍԱՍՏՈՒՆ ԽԱՂԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Ապրիլի 12-13-ը Ստեփանակերտի շախմատի մանկապատանեկան հանրապետական մարզադպրոցում անցկացվեց դպրոցականների շախմատի օլիմպիադայի հանրապետական փուլը: Մասնակցեցին մայրաքաղաքի երկու՝ հ. 3 միջնակարգ և հ. 9 հիմնական դպրոցների և շրջանների՝ Ասկերանից՝ Խաչենի, Մարտակերտից՝ Զաթերքի, Զադուրից՝ Ազոխի, Մարտունուց՝ հ. 2 հիմնական, Շուշիից՝ Դ. Ղազարյանի անվան միջնակարգ մասնագիտացված, Քաշաթաղից՝ Գողթանիկի, Շահումյանից՝ Չարեքտարի միջնակարգ դպրոցների թիմերը:



Մրցաշարն անցկացվեց ՖԻՂԵԻ շվեյցարական մրցակարգով: Ծավալված երկօրյա պայքարում թիմային հաշով հաղթող ճանաչվեց Զաթերքի միջնակարգ դպրոցի թիմը, որն էլ կներկայացնի Արցախը օլիմպիադայի ԶԶ եզրափակիչ փուլում: Երկրորդ հորիզոնականում է Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցի թիմը: Հավասար միավորներ ունենալով՝ գործակցի առավելությամբ մրցանակային եռյակը եզրափակեց Մարտունու հ. 2 հիմնական դպրոցի թիմը: Ամհատական արդյունքներով տղաների մեջ լավագույն ճանաչվեց Զաթերքից Սևակ Մանուկյանը, աղջիկներից՝ Գողթանիկի միջնակարգ դպրոցից Մարիամ Խաչատրյանը: ԱՅ ԿԳՄՆ շախմատի գծով տեսուչ Բեհբուդ Մելքունյանի գնահատմամբ՝ տարեցտարի մեծանուն է պատանի շախմատիստների արհեստավարժությունը խաղի կանոններին տիրապետելու առումով: Նա ներկայացրեց նաև նկատառումներ. մրցումները նաև ի հայտ են բերել մի շարք թերություններ. երեխաները սկզբնափուլերը, միջնափուլերը խաղում են հստակ, բայց վերջնափուլերում սխալներ են թույլ տալիս և նույնիսկ նյութական մեծ առավելություն և լավ դիրք ունեցող խաղացողները վերջում կամ պարտվում կամ լավագույն դեպքում խաղում են ոչ -որի: Մարզիչները մեծ ուշադրություն պետք է դարձնեն դրան: Ներդպրոցական ու քաղաքային փուլերից հետո մինչև հանրապետական փուլը բավականին ժամանակ է լինում, պետք է գործնական աշխատանք տանել դպրոցականների կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ: 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայից քննական աշխատանքների արդյունքները Հաստատությանը տրամադրվում է ԳԹԿ-ի կողմից՝ քննությունների անցկացումից հետո 5 օրվա ընթացքում:

հետ: Հաղթող թիմի հետ նույնպես պետք է մեծ աշխատանք տանել Հայաստանում արժանավայել ներկայանալու համար: Հաղթող թիմին գավաթ, մրցանակային տեղեր գրաված թիմերի անդամներին ու մարզիչներին, լավագույն խաղացողներին համապատասխան մեդալ, պատվոգիր և դրամական պարգև հանձնեցին ԱՅ ԿԳՄ նախարար Նարինե Աղաբալյանը և Շախմատի ֆեդերացիայի նախագահ Վարդգես Բաղդյանը: Նախարարը շնորհավորեց բոլոր մասնակիցներին՝ նշելով, որ նրանք արդեն հաղթող են, քանի որ հասել են հանրապետական փուլ: «Շախմատին տիրապետել՝ նշանակում է ունենալ ճկուն, ստեղծական, տրամաբանող միտք, որը կօգնի ձեզ կյանքում ճիշտ կողմնորոշվել և հեշտ հաղթահարել մարտահրավերները»,-ասաց նա: Նա վստահություն հայտնեց, որ նրանցից շատերի անունները դեռ կհնչեն տարբեր հարթակներում: «Մենք ունենք այդ ներուժը, պարզապես պետք է ջանք գործադրեք և պայմաններ ստեղծեք ձեզ համար, որպեսզի կարողանաք ավելի լավ զարգանալ և առաջընթաց ապահովել»: Նա հավաստիացրեց, որ ֆեդերացիայի հետ մեկտեղ բարերարների աջակցությամբ ու պետական միջոցներով կփորձեն ավելի լավ հնարավորություններ ստեղծել շախմատի մարզադպրոցի և պատանի շախմատիստների համար: Մասնակիցներին ողջունեց Շախմատի ֆեդերացիայի նախագահ Վարդգես Բաղդյանը: Նա ուրախությամբ փաստեց, որ գնալով շախմատը երիտասարդանում է մեր հանրապետությունում: Վերջին տարիներին հանրապետական մրցաշարի մասնակիցների թվում լինում են նաև դպրոցականներ: Ավելին, այդ դպրոցականներից ոմանք իրավունք են նվաճում մասնակցելու եզրափակիչ փուլին, այսինքն արդեն ընդգրկվում են լավագույն 12 շախմատիստների մեջ: Բայց անելիքները շատ են լավագույն արդյունքներ գրանցելու համար. «Մենք շատ բան չէինք պահանջի, եթե չիմանայինք, որ կա այդ ներուժը: Մենք միշտ էլ աչքի ենք ընկել մեր մտավոր զարգացածությամբ, պարզապես մնում է, որ ճիշտ ուղղորդենք, ավելի շատ ուշադրություն դարձնենք և հասկանանք մի պարզ ճշմարտություն. շախմատը պարզապես խաղ չէ: Նա ամեն ինչ է: Նույնիսկ հայրենիքի պաշտպանության համար շախմատը հսկայական նշանակություն ունի: Այն զարգացնում է մեր ստրատեգիական մտածողությունը»: Առջևում շախմատի օլիմպիադայի եզրափակիչ փուլն է երևանում: Հաթերքի թիմին մաղթենք հաջողություններ այդ մրցապայքարում:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11 Բացակաների, քննությունից հետո անցվածների, որևէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (եթե կան): 53. Քննության ավարտից հետո սովորողների ցուցակները պահվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ՝ մեկ տարի: 54. Քննական առաջադրանքները, բացի 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայից ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի կողմից, քննության օրը՝ ժամը 14.00-ին, ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված առաջադրանքների ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է: 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայից քննական աշխատանքներն ստուգվում են ԳԹԿ-ում: 55. 9-րդ դասարանում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» առարկաների քննությունների ստուգող հանձնաժողովների անդամների 50 տոկոսը տվյալ առարկաների մասնագետներն են: 56. 12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

57. Քննական արդյունքները գնահատելիս քննական հանձնաժողովի անդամների միջև տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: 58. Քվեարկության արդյունքներում ստացված հավասար ձայների դեպքում վճռորոշ է՝ 1) 4-րդ դասարանում դասավանդող ուսուցչի առաջարկած գնահատականը, 2) 9-րդ և 12-րդ դասարաններում՝ քննական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը, 3) նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամ(ներ)ը արձանագրության մեջ կարող է(են) կատարել հատուկ նշում: 59. Ստուգումն իրականացվում է ԳԹԿ-ի կողմից հրապարակված «Ցուցումներ»-ի պահանջներին և չափանիշներին համապատասխան: Գրավոր աշխատանքի սևագրությունը չի ստուգվում և չի գնահատվում: 60. Քննական աշխատանքների արդյունքները, բացի 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայից, հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 14.00-ին: Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների

կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ: 9-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայից քննական աշխատանքների արդյունքները Հաստատությանը տրամադրվում է ԳԹԿ-ի կողմից՝ քննությունների անցկացումից հետո 5 օրվա ընթացքում: 61. Քննական կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ դասարանների, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից: 62. Բանավոր քննությունները ձայնագրվում և/կամ արձանագրվում են: Արձանագրության մեջ ներառվում են հարցատոմսերի համարը, հարցերը, պատասխանները: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները և տվյալ սովորողը: 63. Քննությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների գնահատման վերաբերյալ բողոքները կարող են լինել՝ 1) քննության անցկացման կարգի խախտման մասին, 2) քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին, 3) թեստերի բովանդակության մասին: 64. Սույն կարգի 63-րդ կետի 1-ին և 3-րդ

ենթակետերում նշված դեպքում սովորողը կարող է բողոք ներկայացնել քննական կենտրոնի ղեկավարին քննության ավարտից ամիջապես հետո: Կենտրոնի ղեկավարը տեղում քննարկում և պատասխանում է բողոքը ներկայացնողին: 65. Սույն կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են ստուգող կամ քննող հանձնաժողովի նախագահին՝ բանավոր քննության դեպքում՝ քննության պահին կամ մինչև քննասենյակից դուրս գալը, գրավոր քննության դեպքում՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Գրավոր քննության բողոքի արդյունքները, ոչ ուշ քան դիմումը ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում են դիմողին: 66. Դիմում-բողոքների քննարկումից հետո կարող է որոշում ընդունվել քննության գնահատականի պահպանման կամ բարձրացման, ինչպես նաև իջեցման մասին, որը հրապարակվում է և ուղարկվում ԳԹԿ: 67. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասության կարգով, Նախարարություն և (կամ) դատարան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍ

ՄԵԿ ԺԱՄ ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՀԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆԻ ԵՎ ԱՆԱԿԵՐՏՆԵՐԻ ՆԵՐՎԱՅԱՋՄԱՍԲ

Այս տարի լրացավ մեր ժամանակի նշանավոր բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, թարգմանիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Միլվա Կապուտիկյանի ծննդյան 100-ամյակը: Ստեփանակերտի Վ. Ջահանգիրյանի անվան հ.11 ավագ դպրոցում հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Արթուր Բաբայանի անցկացրած դասին դպրոցի տնօրինության, ուսուցիչների, աշակերտների հետ միասին ներկա էր «Լուսարար»-ը, որը դասի բովանդակությունը ներկայացնում է՝ մեկնաբանությունները թողնելով ընթերցողներին:

Ի սկզբանե է Ուսուցչի խոսքը: Ասում են՝ ժամանակից դուրս արվեստ չկա և չի կարող գոյություն ունենալ: Դա իրոք այդպես է: Դժբախտաբար, այդ ժամանակ ասվածն իր մեջ ընդգրկում է ամեն ինչ՝ և՛ փոքրը, և՛ մեծը, և՛ անցողիկը, և՛ մնայունը: Միևնույն ժամանակ, բարեբախտաբար, ժամանակն ունի իր անողորմ ճշմարտությունը. առաջ գնալիս նա իր հետ չի վերցնում չնչինը, անցողիկը, իսկ մեծը, մնայունը ընդգծում է առավել ցայտուն: Այդ մեծ ժամանակի տևական ու անաչառ քննությանը դիմացել է Միլվա Կապուտիկյանի ոչ միայն պոեզիան, այլև նրա կրթոտ հրապարակախոսությունը:

1961թ. «Մտորումներ ճանապարհի կեսին» գրքի կապակցությամբ կազմակերպված քննարկման ժամանակ զեկուցողը՝ Պարույր Սևակը, ասել է. «Կապուտիկյանը կատարյալ բանաստեղծ է, այսինքն՝ ժամանակակից մտածողությամբ բանաստեղծությունների հեղինակ է: Այսօրվանից եթե, Աստված մի արասցե, նա ոչինչ չավելացնի իր գրածին, միևնույն է, արդեն մտել է մեր քերթության պատմության մեջ: Այդ բանաստեղծության ապագա ծաղկաբաղունի մեջ նա արդեն ունի իր էջը»:

Ինչպես ամեն մի խոշոր պոետի, Կապուտիկյանի պոեզիան բարեկամություն է մարդու հետ, նվիրվածություն, անձնվիրություն հայրենիքին, նրա ներկայի ու ապագայի գովքը: Ամբողջության մեջ Կապուտիկյանն արտահայտում է մարդկային ընդհանուր պարունները՝ բնորոշ և՛ կնոջը, և՛ տղամարդուն, և՛ տարբեր բազմերի մարդկանց: Նա ընթերցողի առջև բացում է քնարական խոստովանության մի անբողջական կառուցվածք, որտեղ վերապրումներն ու գերանմանները հասցված են դրամատիկ շիկացման: Բանաստեղծություններից մեկում Կապուտիկյանն անում է այսպիսի խոստովանություն.

Ինձանից նամակներ դու մի հուսա, Անձնորիք եմ ես նամակներում. Բառերս այնտեղ գորշ են ու սուտ, Կարծես ուրիշն է իմ տեղ գրում:

Ես վախենում եմ բացվել այնտեղ, Ես վախենում եմ քնքուշ խոսքերից. Քաշվում եմ լինել հորդ ու անկեղծ, Անաչուն եմ իմ տառապանքից:

Եվ, ով թերության վերին խորհուրդ, Այն, ինչ քաշվում եմ ասել մեկին, Ազատ բացում եմ իմ երգերում՝ Ի լուր աշխարհի ու ամենի:
(«Խոստովանություն»)

Կապուտիկյանի բազմաթիվ բանաստեղծություններ խոստովանություններ են, երդումի խոսքեր, սկսած նրա «Խոսք իմ որդուն» քրիստոնյանական բանաստեղծությունից, մինչև հայրենասիրական բազմաթիվ գործեր, սիրային զեղումներ (որոնք պատանեկության տարիներից բոլորս անգիր գիտենք. «Արի, արի, թեկուզ վերջին անգամ», «Թափառում ենք փողոցներում»), մինչև 1984թ. կյանքի մայրամուտին նրա հրատարակած «Չմեռ է գալիս» գրքույկի բազմաթիվ բանաստեղծություններ, որոնցից առանձնացնենք մի փոքրիկ բանաստեղծություն, որը պիտի դառնա մեր պատանիների կյանքի ուղեկիցը, նշանաբանը.

Թե ես պիտի մի մատ անգամ Իջնեմ իմ բերդ-հայությունից, Թե ես պիտի մի նյարդ անգամ Չիջեմ իմ խորմ-էութունից, Թե իմ մասունք գիր ու խոսքից Մի տառ անգամ պիտի զոհեմ, Դրա դիմաց աշխարհն էլ տան՝

Իմ պետքը չէ, ախ, պետք չէ ինձ:
Ղարաբաղցիներս հպարտությամբ պետք է հիշենք նրա «Ղարաբաղի բարբառը»:

Կապուտիկյանի կենսագրական տվյալներ են հաղորդում աշակերտները: 1945թ. լույս է տեսել նրա «Օրերի հետ» բանաստեղծությունների առաջին ժողովածուն: Այնուհետև բազմաթիվ լեզուներով հրատարակվել են 70-ից ավելի գրքերը:

1962-ից սկսվում է Կապուտիկյանի սփյուռքապատումի շրջանը: Գրել է բազմաթիվ ուղեգրություններ: Բացառիկ է նրա ուղեգրական արձակը. «Քարավանները դեռ քայլում են», «Խճանկար հոգու և քարտեզի գույների», «Քարավանները հեռանում են» և այլն: Կապուտիկյանը եղել է նաև անգլագրական թարգմանիչ: Իսկ կյանքի վերջին տարիներին փայլեց իրապարակախոսության ասպարեզում:

1997թ. լույս տեսած «Էջեր փակ գորոցներից» 700 էջանոց գիրքը մի ինքնատիպ հաշվետվություն է երկրի հասարակական կյանքին բերած իր սեփական մասնակցության մասին:



Վախճանվել է 2006թ. օգոստոսի 25-ին: Հանգչում է Կոմիտասի անվան պանթեոնում: Միլվա Կապուտիկյանի անունը բարձրացավ հատկապես պատերազմի տարիներին, երբ գրեց «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը, որն արագ տարածվեց Հայաստանում և Սփյուռքում: Հայոց հայրենասիրական պոեզիայի գանձարանում այն առանձնացավ իբրև կնոջ խոսք, մայրական մաղթանք ու պատգամ որդուն:

Ուսուցչին այնուհետև անդրադառնում է Կապուտիկյանի պոեզիային ըստ թեմատիկայի: Հայրենիքը նախ և առաջ հոգի է, իսկ հոգու լեզվի մեծագույն կրողը պոեզիան է: Անգամ նրանք, ովքեր բանաստեղծություն չեն ընկալում, անկախ իրենցից պարուն են հոգու պոեզիայի ուղորտում: Նախրյան բարդին շատ բանաստեղծների գրչի տակ է դարձել մեր ժողովրդի հարության զարմանալի հեքիաթն արտահայտող հոգեբանության բանաստեղծական մարմնացում:

Այդպիսին է նաև բանաստեղծուհու «Հայոց բարդին» իրաշալի բանաստեղծությունը: Կապուտիկյանի բանաստեղծության գազաթները հայրենասիրությունն են և սիրերգությունը: Մեր գլխավոր սերը առ հայրենիք է. Հայաստան աշխարհ, դու մերը եղար ու մերը չէիր...

Աշակերտուհու արտասանությունը բոլորի սրտից է բխում: Ուսուցչի մեկնաբանությունը մեծացնում է հայրենասիրական լարի պրկումը. Մեր հույսերի բարձրագույն արտահայտությունը Արարատ լեռն է, որը հայերիս հպարտություն է ներշնչում: Արարատը մեզ համար հոգի է, իսկ թե ինչ է այն մեր դարավոր ոսոխի համար, «Ընդդիմախոսություն» բանաստեղծությունն է արտահայտում.

Այն ո՛վ է ասում, Որ Արարատը ձերն է ու ձերը. Անհեթեթ պատրանք. Քարտեզն է ձերը, Քարտեզի վրա չափած-գծածը, Իսկ ինքը՝ լեռը...
Նրա ընկալմամբ են, որ հավերժության խորհուրդ են առնում,
Նրա պարուրող մշուշն ու ամպը,
Մեր ընկալմամբ են եղեգան փողի ծուխ ու բոց դառնում,

Նրա ամեն մի անշունչ, անկենդան ավազահատը
Մեր արյան կարմիր գնդիկներին է կենսախյոթ տանում:

Ռուս բանաստեղծ Սերգեյ Եսենինը հայրենիքի մասին շատ բանաստեղծություններ ունի, որոնցից մեկում գրում է. «Բայց ամենից ավելի, հո՛ղ իմ հայրենական, քո կարոտն է ինձ այրել ու տանջել»: Եթե հսկա Ռուսաստանի նման հզոր երկրի բանաստեղծ խոստովանում է հայրենիքին, որ նրա սերը այնքան քաղցր է, տանջալից, ապա ինչքա՞ն քաղցր ու տանջալից պիտի լինի հայ բանաստեղծի համար, որի սրբությունը՝ հայրենիքի մեծ մասը, մնացել է սահմանից այն կողմ, տրամաբանական հարց է տալիս ուսուցիչը, ապա մեջքերում Աննա Ախմատովայի տողերը. «Երբ որ հույսն է մեռնում, տեղը երգն է բռնում»: Երգը հայերի համար միշտ էլ եղել է հույս, ազատության խորհրդանիշ, կորցրած ու վերստին գտած հայրենիքի խորհրդանիշը: Այդ, մեր երգերը ծնվել են մեծ ցավից, մեր կարոտից («Քե՛լե, լաո»):

Կապուտիկյանի սիրո երգերը գրված են ջերմությամբ ու անկեղծությամբ, դրա համար էլ մեզ այնքան հուզում են: Աշակերտները համառոտ ներկայացնում են սիրո երգերը, այնուհետև կատարվում են երգեր:

Կապուտիկյանի պոեզիան արտակարգ զգացմունքային է և անմիջական: Նա մեր այն սակավաթիվ բանաստեղծներից է, որոնք սկզբից ենք ընթերցողին ներկայացել են իրենց անձնական զգացմունքներով: Նրա այդ կարգի գործերը գրված են անկեղծությամբ ու ջերմությամբ, դրա համար էլ հուզում են: Նա երգում է ապրված զգացմունքներ, այդ իսկ պատճառով էլ վերապրել է տալիս ընթերցողին: Այդ բանաստեղծությունները թարգմանվել են ռուսերեն և տարածվել ողջ խորհրդային Միությունում: Կապուտիկյանը երգում է մերժված սիրո ցավը, կնոջ տառապանքը և այդ բոլորի մեջ՝ սիրո հաղթական ուժը, եթե անգամ դա անպատասխան սեր է: Նա մի խումբ տաղանդավոր բանաստեղծների հետ կյանք ու անձնագիր տվեց մեր սիրերգությանը՝ ընդդեմ աշուղական նեյմիների: Նրանք ստեղծեցին հոգեբանական սիրերգությունը:

Այդպիսի մի բանաստեղծություն է «Հավատարմություն»-ը, որի մասին ժամանակին Սևակն ասել է. «Ուրիշ մեկը կամաչեր այսքան բացվելուց, անհարմար կզգար այս հոգեկան մերկությունից և այդպիսի մեկը երբեք Միլվա Կապուտիկյան չէր դառնալու»:

Կապուտիկյանի բանաստեղծությունները խորհրդային տարիներին ավելի քան 30 անգամ վերահրատարակվել են: Դրանք թարգմանել են այնպիսի հայտնի բանաստեղծներ, ինչպիսին են Եվտուշենկոն, Ախմատովիան, հայ ժողովրդի մեծ բարեկամները:

Տասնյակ լավագույն բանաստեղծություններից դասին ընտրվել էր մեկ հայտնի ստեղծագործություն՝ «Թափառում ենք փողոցներում», որն արտասանեցին նախ հայերեն, ապա՝ ռուսերեն և երգեցին «Մախմուր աղջիկ» երգը:

Կապուտիկյանի բանաստեղծությունները շատ բարձր են գնահատվել ժամանակակիցների կողմից:

Ավարտվում է գրականության դասը: Մեր կողմից ընդամենն ավելացնենք, որ նման դասից հետո ցանկություն է առաջանում բացել գրողի գրքերը, վեր բարձրանալ առօրյա կյանքից, քամահարմքով նայել նյութականին կառուցվածներին, ապրել տիեզերական վեհությանը:

Դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդավարման նախագահ Մանուշ Բալայանը ուսուցիչ Արթուր Բաբայանին բոլորի կողմից շնորհակալություն հայտնեց իրաշալի դասի համար, որի հաճույքը պատճառեցին ինչպես ուսուցիչը, այնպես էլ նրա դասավանդած 11 հունամիտար 4 դասարանի աղջիկները և միակ տղան, որոնց վրա ընկած էր դասի ողջ ծանրությունը: Բարձր գնահատվեց հատկապես այն, որ բոլորն արտասանեցին այդ ստեղծագործությունները՝ դրանք անցկացնելով իրենց հոգու պրիզմայով:

Շնորհավորանք ՆԿԻՐՅԱԼ ՌԻ ՍՈՒՅԻՉԸ



Աշխատասեր, երբեք չհոգնող, կրթելու ու դաստիարակելու մեջ լավ ու բարին սերմանող անձնավորություն: Սիս մարդկային այն որակները, որ իր գործունեության մեջ համաձուլում է Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի ժամանց Գրիգորյանը:

Ուսուցիչ չեն դառնում, ուսուցիչ ծնվում են: Ժամանց Գրիգորյանը հենց այդ ուսուցիչներից է: Նա ժպտող դեմքին մտնում է դասարան և իր անպարտ ջերմությամբ խորունկ գիտելիքներ հաղորդում աշակերտներին: Ուսուցիչը պետք է լինի հոգեբան, հասկանա աշակերտներին և դրան զուգահեռ գիտելիք հաղորդի սիրով: Նա սիրում է իր աշխատանքը, աշակերտներին: Սիրով կատարած ամեն աշխատանք տալիս է իր պտուղները: Սիս ինչն է պատճառը, որ ժամանց Գրիգորյանի աշակերտները սիրում են ռուսաց լեզուն և հարազատ լեզվի պես տիրապետում:

1996թ. հունվարի 1-ից առայսօր աշխատում է Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցում:

Բոլորիս կողմից սիրված կին, երկու զավակների անձնուրաց մայր է:

Ժամանց Գրիգորյանը կարեկից ընկեր է, բարի խորհրդատու, հարգանք ու վստահություն վայելող մանկավարժ, օրինակելի ընտանիքի հարգված կին:

Լրացավ վաստակաշատ մանկավարժի 60 տարին: Տարիներ, որոնք լույս են սփռել սերունդների ճանապարհին: Այդ տարիները նրա կյանքի խոսուն վկաններն են, որոնցում առկա են մայրամակարժի նրա կարողություններն ու անապառ եռանդը:

Սիրելի՛ գործընկեր, Դուք եղել ու մնում եք բոլորիս կողմից սիրված ու հարգված ուսուցչուհի: Ցանկանում ենք Ձեզ անսպառ ժպիտ, երջանկություն, խաղաղություն, սեր ու բերկրանք:

Թող գարնան թարմությամբ լցվի Ձեր ամեն մի օրը, նոր ուժ ու եռանդ մտքի թռիչքին, անկատար երազանքների իրականացում:

Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՍԱՐՁԱՇԽԱՐԿ ՆՈՒՐԲ ԵՎ ՈՒԺԵՂ

Մայրության և գեղեցկության տոնին ընդառաջ «Լուսարար»-ի մարզական էջը հյուրընկալեց մարզաշխարհը ներկայացնող արցախցի չքնաղ հայուհիների: Հնարավոր է՝ հարցազրույցներն օգնեն փոխել մարտարվեստներում կանանց և աղջիկների ինքնադրսերում վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերը, խթանեն մյուս աղջիկներին գնալ առաջ՝ չփախեցնելով մարտարվեստի դժվարություններից: Արցախցի մարզուհիները բազմիցս մասնակցել ու մասնակցում են մեր հայրենիքում և երկրից դուրս անցկացվող մրցաշարերին և բարձր ցուցանիշներ դրսևորում: Հեռու չէ այն օրը, երբ նպատակասլաց արցախցի մարզուհիներից ոմանք նաեւ օլիմպիական մեդալ կբերեն: Զրուցակիցներից յուրաքանչյուրն իր բանաձեւն ունի հայ կնոջ կերպարի վերաբերյալ, որին համապատասխանելու համար մարտարվեստը ոչ թե խոչընդոտում, այլ նպաստում է:



Անուս ԱՎԱԿՅԱՆ: Ծնվել է 1990թ. հունիսի 24-ին Ստեփանակերտում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԱրՊՀ ՆՁՊ եւ ֆիզիկական պատրաստության տեսության բաժինը, 2013թ. ավարտել նույն բաժնի մագիստրատուրան: Դեռևս դպրոցական տարիներից պարբերաբար մասնակցել է «Արծվիկ» ռազմամարզական խաղերի, «Փրկակար ջոկատ» մրցույթների, որտեղ գրեթե միշտ լինելով թիմի կապիտան՝ արժանացել է թիմային հաղթանակների: Սիրելի է ակտիվ կյանքը եւ գերազանց դրսևորել իրեն ֆիզիկական պատրաստության ու զենքի տիրապետման հետ կապված միջոցառումներում: 2003-ից պարապում է ծյուղո մարզիչ Իվան Ազիզբեկյանի մոտ: 2009-ից աշխատում է Ստեփանակերտի ՄՊՄ-ում՝ որպես ծյուղոյի մարզիչ: Նաեւ ՀՀ սամբո-ծյուղոյի օլիմպիական մարզադպրոցի ծյուղոյի մարզիչ է: ՀՀ ծյուղոյի եւ սամբոյի բազմակի չեմպիոն է, 2006-2007 թթ. ծյուղոյի պատանիների միջազգային մրցաշարի արծաթե մեդալակիր, 2012-2013 թթ. սամբոյի Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, 2013թ. սամբոյի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր: 2015թ. Բաքվում կայացած սամբոյի առաջնությանը մասնակցելով՝ զբաղեցրել է 5-րդ տեղ: 2017թ. ապրիլի 1-ին Սերբիայում ծյուղոյի Եվրոպայի գավաթի խաղարկությունում, որն ի դեպ ուներ օլիմպիական վարկանիշ, զբաղեցրել է 2-րդ մրցանակային տեղ: 2017թ. մասնակցել է ծյուղոյի մեծահասակների միջու կայացած աշխարհի առաջնությանը: 2018թ. գոտիներով ըմբշամարտի Եվրոպայի առաջնության ոսկե մեդալակիր է, իսկ աշխարհի առաջնության՝ 3-րդ տեղի մրցանակակիր: 2019թ. մարտի 1-3-ը ՀՀ սամբոյի կանանց եւ աղջիկների առաջնությունում Սոսե Բալասանյանը զբաղեցրել է 1-ին տեղ: Սպորտում նա դեռ շատ անելիքներ ունի: Պատրաստվում է մայիսին մասնակցել Իսպանիայում կայանալիք սամբոյի Եվրոպայի առաջնությանը: Իսկ նրա ամենամեծ երազանքը աշխարհի առաջնությունից ոսկե մեդալ բերելն ու համաշխարհային ամենաբարձր վարկանիշ ունեցող մարզական մրցաշարերին մասնակցելով՝ օլիմպիական չեմպիոն դառնալն է: Սոսեի նպատակները միայն սպորտի հաջողություններով չեն եզրափակվում. երազում է ունենալ առողջ ընտանիք եւ շատ բալիկներ:

- **Սոսե, թույլ սեռին բնորոշ փխրում ու նուրբ կակին որտեղի՞ց այդքան ուժ ու եռանդ, պայքարի անմահանջ ոգի:**
- Նախ՝ իմ ամուսնից եմ ուժ ստանում: Անունս տվել է քեռիս, որին ավելի շատ եմ

սիրում դրա համար: Ինչպես Սոսե Մայրիկը պաշտպանեց ընտանիքը թշնամուց, այնպես էլ ես եմ ազգիս ու ընտանիքիս պաշտպանությանը պատրաստ: Աննկարագրելի ուրախություն է, երբ համաշխարհային պատվանդանին կանգնած՝ հնչեցնում են հայության օրհներգը: Այդպես կարողանում եմ միջազգային հանրությանը ցույց տալ, որ հայերն անպարտ են: Մեծ ցանկություն ունեմ եւ ձգտում եմ մասնակցել օլիմպիական խաղերին: Կարծում եմ, մեր մասնակցությունը կխթանի մեր երկրի ճանաչմանը: Ինձ ոգևորում և ուժ է տալիս հայրենիքս: Արցախի օրը, հողը, ջուրը սնուցում են ինձ: Հաճախակի եմ կրկնում, որ ես իմ հայրենիքից հեռու չեմ կարող ապրել: Պարապմունքներս էլ ավելի լավ են անցնում ու արդյունք տալիս, երբ պարապում եմ հայրենիքում:

- **Ձեր նախընտրած մարզաձեւում առկա բավականին կոպիտ հնարներն ու ուժային պարապմունքները չե՞ն խոչընդոտում կանացի մնալուն:**

- Երբեք չեմ մտածել, որ միայն տղաները պետք է պարապեն սպորտով: Զյուդոն մարտական արվեստ է, որտեղ կարելի է մարմնի ուժը, կամքի ուժը, հոգու ուժը: Սկզբնական շրջանում ես չէի հասկանում, թե ինչ են նշանակում այդ գաղափարները: Մարզչիս՝ Իվան Ազիզբեկյանի օգնությամբ, որն ինձ շատ է օգնում թե՛ պարապմունքների ժամանակ, թե՛ կյանքում, հասկացա ծյուղոյի գաղափարը եւ շատ ուրախ եմ, որ ընտրել եմ այդ մարզաձեւը: Եթե մարդ իրեն լավ է գտնում այդ միջավայրում, ուրեմն դա իրենն է: Որեւէ խոչընդոտ չեմ նկատել: Փոխվում է կառուցվածքը, մկանային մասը, միջնդեռ ներքուստ կինը նուրբ է, սիրտը՝ փխրուն: Դա չեմ կարող փոխել ֆիզիկական պարապմունքները:

- **Իսկ պարբերաբար ստացվող մարզական մասնավորումներն ինչպե՞ս են ազդում Ձեզ վրա:**

- Նման դեպքերում ես չեմ կոտրվում, աշխատում եմ արագ վերականգնվել ֆիզիկական եւ հոգեպես: Ամենալուրջ վնասվածքը ստացա 2008թ.: Պարապմունքների ժամանակ ողնաշարս վնասել էի: Բժիշկներն ասացին, որ կարող է չթուլալստովի շարունակել սպորտային կարիերան: Ծանր էի տանում սպորտը մոռանալու մասին միտքն անգամ, բայց շարունակեցի պայքարել այնքան, մինչեւ որ համապատասխան մասնագետ գտա: Բուժում ստացա ՀՀ-ում, որտեղ ինձ օգնեց հմուտ մեյրոբժիշկը: Առանց որեւէ դեղամիջոցի, առողջարար վարժությունների միջոցով վերականգնվեցի: 2009-ին մասնակցեցի ՀՀ առաջնության, որտեղ զբաղեցրի 3-րդ տեղ, բայց ինձ համար դա ամենաթանկ մեդալն է, որը նվաճել եմ երբեք, քանի որ վնասվածքից հետո դժվար էր մրցազոր գտնել: Դրանից հետո լուրջ վնասվածքներ չեմ եղել, պատահում է՝ քիթս ջարդեն, բայց դա արդեն սովորական է դարձել: Ոչ բժշկի եմ գնում, ոչ էլ դեղամիջոցներ չեմ դիմում: Սպորտում ստացված վնասվածքները չեն չեն կյանքում պատահող վնասվածքների համեմատությամբ:

- **Ինչպիսի՞ն պետք է լինի հայ կինը:**
- Ինձ համար հայ կանայք իմ տատիկն

ու մայրիկն են: Ես միշտ զգացել եմ, որ կինն ավելի ուժեղ կարող է լինել: Հայ կինը պետք է լցված լինի հավատով, ուժեղ կամքով: Սպորտը խթանում է դրան: Մայրս հայ կնոջ իդեալական կերպար է: Նա մեծահոգի է, հասկացող ու ներող:

Մաղթում եմ հայ ազգի բոլոր մեր քույրերին, մայրերին ու տատիկներին խաղաղություն: Թող հիշեն, որ իրենք Աստծո ամենալավ պարգեւն են երկրում: Խաղաղության ներքո ապրեք առողջ, երջանիկ, երբեք թերի չզգաք ձեզ: Մաղթում եմ սեր և խաղաղություն:



Էլին ԱՎԱԿԵՆՅԱՆ: Ծնվել է 2000թ. մայիսի 3-ին Ստեփանակերտում: Ավարտել է 8-րդ դպրոցը, այժմ սովորում է «Մետրոպ Մաշտոց» համալսարանի իրավաբանական բաժնի 2-րդ կուրսում: Համեստ ու բարեհամբույր օրիորդն արդեն 11 տարի զբաղվում է ավանդական կարատե դո մարտարվեստով, ստացել է սեւ գոտի 1-ին դաս, իսկ 2018թ. վերջից զբաղվում է մարզական գործունեությամբ՝ մարզելով շուրջ 12 սանի, ընդ որում՝ տղաներ եւ աղջիկներ: Մարտարվեստում առաջին քայլերը սկսել է հոր՝ Նարեկ Առաքելյանի շնորհիվ, որը նույնպես ավանդական կարատե դո մարտարվեստի մարզիչ է՝ սեւ գոտի 3-րդ դասն է անձամբ զբաղվել է աղջկա հետ: Էլինա Առաքելյանն իր նախընտրած մարտարվեստի ՀՀ եռակի չեմպիոն է, 2012թ. Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, 2013թ. Եվրոպայի չեմպիոն (Անգլիա), 2014թ. Աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր (Շվեյցարիա), 2017թ. Վրաստանի առաջնության արծաթե (կուսիտե մրցաձեւում) եւ բրոնզե (կատա մրցաձեւում) մեդալակիր: 2017թ. Եվրոպայի առաջնությունում (Ռումինիա) 15 մրցակիցների մեջ զբաղեցրել է 4-րդ տեղը: 2013թ. հռչակվելով Եվրոպայի չեմպիոն՝ Էլինա Առաքելյանը պարգևատրվել է ԱՀ վարչապետի կողմից: Պետության կողմից այլ մրցանակներ չի ստացել: Հաշվի առնելով մարզաձեւերի օլիմպիականացման գաղափարը՝ նշում է, որ ավանդական կարատե դոն օլիմպիական չէ, բայց այնուամենայնիվ, ճիշտ չի համարում տվյալ մարտարվեստի եւ մարզիկների համդեպ պետության կողմից դրսևորված անուշադրությունը: Չնայած դրան, շարունակում է մարզական ակտիվություն ցուցաբերել եւ իր հերթին կոչ է անում բոլորին մարզական ակտիվ կյանք վարել:

- **Էլինա, ի՞նչ է քեզ համար ավանդական կարատե դոն:**

- Ավանդական կարատե դոն ինձ համար ապրելակերպ է, իմ կյանքի մի մասնիկը: Ես շատ սիրեցի այս մարտարվեստը եւ պարապմունք առ պարապմունք կոպիվելով թե՛ ֆիզիկապես եւ թե՛ հոգեպես՝ հասկացա, որ դա իմն է:

- **Ի՞նչ հատկություններ է զարգացնում մարտարվեստով պարապելը աղջիկների մոտ:**

- Մարտարվեստն ուրիշ աշխարհ է, ուր մտնելով՝ սովորում ես ամեն ինչ: Ինչպես պատգամել է ավանդական կարատե դո մարտարվեստի հիմնադիր Գ. Ֆունակոչ-

ին՝ նախ ճանաչիր քեզ, հետո՝ ուրիշներին, սովորում ենք բացահայտել մեզ ֆիզիկապես, հոգեպես եւ մտովի: Մարտարվեստում խորը փիլիսոփայական հիմք կա, որը հասկանալով՝ սովորում ենք օգտագործել միտքը ցանկացած շարժում կատարելիս: Կիրառվող մեդիտացիաների շնորհիվ սովորում ենք հանգստանալ, կառավարել հույզերը եւ միտքը: Աղջիկների մոտ մարտարվեստը զարգացնում է վստահություն, բացում է ճանապարհներ ինքնագարգացման համար: Ինչու չէ, նաեւ զարգացնում է գիտակցությունը, զերծ պահում կարծրատիպերից կախված լինելուց:

- **Ի՞նչն էք կարելուում հաջողության հասնելու համար:**

- Նպատակասլացությունը, հոգու ուժը, իր ուժերին վստահելը հաջողության հիմքն են, իսկ ծուլությունը՝ անհաջողության:

- **Ինչո՞վ է պայմանավորված իրավաբանի մասնագիտության ընտրությունը կարատեում այդքան հաջողություններ ունեցող աղջկա համար:**

- Ինձ միշտ հետաքրքրել են ոստիկանությունում եւ զինվորական բաժանմունքներում ծառայությունները: Կարծում եմ, համադրելով իրավաբանի մասնագիտությունը մարտարվեստում ունեցած կարողություններիս հետ՝ կկարողանամ աշխատել անվտանգության համակարգում: Ներկայումս ավելի շատ ուշադրություն եմ դարձնում մարզական գործին: Կցանկանայի տեղեկացնել, որ իմ խմբում ընդունելու թիվը 5-18 տարեկան տղաներ են աղջիկներ: Պարապում եմ Ստեփանակերտի 8-րդ դպրոցում: Կցանկանայի հատուկ նշել աղջիկների եւ նրանց ծնողների համար, որ հակառակ այն կարծիքների, թե մարտարվեստը աղջիկներին դարձնում է կոպիտ կամ վնասում է առողջությանը, կարող եք անձամբ այցելել պարապմունքներին, տեսնել եւ համոզվել, որ խուսափելու բան չկա: Եթե կա ցանկություն, ուրեմն չպետք է լսել եւ առաջնորդվել կարծիքներով: Հայ աղջիկները պետք է լինեն համեստ, բայց ուժեղ, ինչը չի հակասում մարտարվեստի կանոններին:

- **Իսկ անձնական կյանքում դժվարությունների հանդիպում եք, չէ՞ որ ուժեղ սեռը նախընտրում է, որ իր կողակիցը լինի նուրբ, կանացի, անպաշտպան:**

- Կարծում եմ, յուրաքանչյուր նորմալ մտածող մարդ եթե սիրում է իր ընտրյալին, ուրեմն հարգում է նրա նախասիրությունները, ընդունում նրա ապրելաճը: Իմ անձնական կյանքում մասնագիտությանս եւ զբաղմունքներիս հետ կապված դժվարությունների չեմ հանդիպել, ամեն ինչ լավ է:



Տովինար ԱՎԱՆԵՍՅԱՆ: Ծնվել է 2003թ. մարտի 24-ին Ստեփանակերտում: Ավարտել է Ե.Չարենցի անվան հ. 7 դպրոցը: Սովորում է Շուշիի տեխնոլոգիական քոլեջի էկոնոմիկայի բաժնում: 2016-ից պարապում է կիոկուշին կարատե մարտարվեստով: Ի տարբերություն այն աղջիկ մարզիկների, որոնց պարապելուն ոգևորում

ՄԱՐԶԱՇԽԱՐԿ

ՄԱՐԻՍՏԵՐԸ ԵՎԱՃԵՅԻՆ ՈՍԿԻ, ԱՐՄԱՐ, ԲՐՈՆԷ

Ապրիլի 11-14-ը Կիպրոսի Լիմասոլ քաղաքում կայացան Եվրոպայի սամբոյի պատանհինների եւ երիտասարդների միջեւ առաջնություններ, որոնց մասնակցեցին եւ իրենց փայլուն դրսևորեցին 33 սամբոյի հավաքականի կազմում առաջնությանը մեկնած արցախցի հինգ մարզիկներ: Առաջնությանը մասնակցել են շուրջ 265 մարզիկներ 22 պետությունից:

Ապրիլի 17-ին Ստեփանակերտի «Մենք ենք մեր սարերը» հուշակոթողի մոտ մարզիկներին դիմավորելու հանդիսավոր արարողությանը ներկա էին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, փոխնախարար Աշոտ Դանիելյանը, ոլորտի այլ ներկայացուցիչներ, մարզասերներ, ծնողներ, ընկերներ, երկրպագուներ: Ավանդական գուռնա-դիլի, ծափոռչույնների, դրոշների, շնորհավորական ցուցապատումների եւ հաղթանակի բերկրանքը կիսող հույզերի ներքո մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկներին եւ մարզիչ Էռնեստ Միրզոյանին դափնեպսակներ շնորհեց ԿԳՍ նախարարը:

ԱՀ եւ ՀՀ սամբոյի վաստակավոր մարզիչներ Էռնեստ Միրզոյանի եւ Ազատ Անդրյանի սաներ

Դավիթ Հովսեփյանն (52 կգ) ու Արսեն Կարապետյանը (75 կգ) պատանհինների տարիքային խմբում հանդես գալով՝ արժանացել են առաջին պատվավոր տեղի: Երիտասարդների տարիքային կարգում գոտեմարտած մարզիկներ Կարեն Սարգսյանը (52 կգ) եւ Դավիթ Իսրայելյանը (57 կգ) զբա-



ղեցրել են երկրորդ մրցանակային տեղեր, իսկ Արման Ավանես-

յանը (90 կգ) դարձել է բրոնզե մեդալակիր՝ զբաղեցնելով երրորդ տեղ:



են մարզաշխարհում տարբեր բարձունքների հասած կանայք կամ աղջիկներ, Շովինարի ոգեւորության օբյեկտը սեմպայ (ճապոնեերեն՝ ուսուցիչ, մարզիչ) Արթուր Առուշանյանն է: Մասնկուց սիրում էր ուժային մարզածեսերը, մարտարվեստները, բայց ուր էլ դիմում էր, իրենը չէր գտնում: Եղբայրը զբաղվում էր կիոկուշին կարատեով եւ 2015թ. չեմպիոն հռչակված Արթուր Առուշանյանին դիմավորելիս Շովինարին էլ տարավ հետը: Առուշանյանի ամրակազմ, նպատակասլաց եւ խիտեմ կերպարը շատ դուր եկավ Շովինարին, ցանկություն հայտնեց պարապել նրա մոտ: Սակայն այդ ժամանակ կիոկուշին խմբերում աղջիկները դեռեւս ներգրավված չէին: Բայց մեկ տարի անց Շովինարի երազանքը կատարվեց: Կիոկուշին կարատե դո Ֆեդերացիան հայտարարություն տարածեց, որ կատարում է ընդունելություն մասնակցների համար: 2016թ. հունվարից Շովինարը սկսեց պարապմունքների հաճախել՝ լինելով Արցախում եւ ՀՀ-ում կիոկուշին կարատե դո մարտարվեստով պարապող առաջին աղջիկը: Նրա օրինակին հետեւեցին ուրիշ աղջիկներ, ֆեդերացիան սկսեց համալրվել աղջիկ մարզիկներով: Առաջին պարապում են տղաների հետ համատեղ: Շովինար Ավանեսյանը, դրսևորելով առաջադիմություն պարապմունքների ընթացքում, կարճ ժամանակում հասել է բավականին բարձր արդյունքների: Կանաչ-չազանակազույն (զծիկ) գոտու տեր է: 2016թ. հռչակվեց ֆեդերացիայի տարվա լավագույն մարզիկ: Մասնակցում է տարբեր մրցաշարերի: ՀՀ կիոկուշին կարատեի բազմակի չեմպիոն է: 2018թ. մասնակցել է Բուլղարիայում կայացած պատանի աղջիկների միջեւ աշխարհի առաջնությանը 60 կգ քաշային կարգում: 2018թ. մասնակցել է ՀՀ եւ Վրաստանի մարզիկների միջեւ ընկերական հանդիպմանը, հաղթել մարտում եւ արժանացել 1-ին մրցանակային տեղի:

- Շովինար, ինչպե՞ս են վերաբերվում կարատեի դասան եւ ավելի կոպիտ ոճով պարապելու քո ընտրությանը ընտանիքում եւ շրջապատում:

- Տեսնելով, որ շատ են ուզում պարապել, բայց իմ մարզածեսը չեմ գտնում, ինձ տարբեր խորհուրդներ էին տալիս, որ գնամ պարի կամ այլ զբաղմունք ընտրեմ: Բայց ճիշտն ասած՝ ոչ մի տեղ ինձ այսօր մարմնարվեստ չէի գտնում, ինչքան որ կիոկուշինում: Երբ իմացա, որ արդեն հնարավոր են Արթուր Առուշանյանի մոտ աղջիկների պարապմունքները, իսկույն մոտս խնդրեցի, որ պայմանավորվի նրա հետ: Հայրս մահացած է, իսկ եղբայրս դեմ չէր: Մայրս օգնեց ինձ գրանցվել պարապմունքի, բայց նա կարծում էր, ինչպես եւ շատերն էին այդպես մտածում, որ մի քանի ամիս կգնամ եւ դուրս կգամ: Բայց այդպես չեղավ: Առաջ գնալով՝ ավելի ու ավելի եմ ուզում հմտանալ, ավելի լավ տիրապետել նախընտրածս մարտարվեստին: Շրջապատս միանգամայն փոխվեց, ընկերուհիներս շրջանակը նեղացավ, բայց չգիտեմ, թե ինչու: Շատ ուրախ եմ, որ սեմպայ Արթուրն է մեզ հետ պարապում: Նա կարողանում է սեր առաջացնել դեպի թեկուզե կոպիտ համարվող մարտարվեստը, մեզ սովորեցնում է ոչ միայն մարտնչել մրցագորգում, այլեւ կյանքում եւ ճիշտ ընտրություն կատարել, ճիշտ սննդակարգին հետեւել եւ կարատեիստին վայել արժանապատիվ պահվածք ցուցաբերելով՝ ընկերախմբում ծագող խնդիրներին ճիշտ լուծում տալ:

- Ի՞նչ է տալիս կիոկուշին կարատեով զբաղվելը:

- Առաջին հերթին դա առողջ ապրելակերպ է, դիմացկունություն: Կիոկուշին պարապող մարզիկների մոտ դիմադրողականությունը բարձր է, մենք համարյա չենք հիվանդանում: Ինձ համար դա լավ հնարավորություն է՝ ճանաչված լինելու եւ Արցախը ճանաչելի դարձնելու, աղջիկների զանգվածից առանձնանալու եւ բարձունքների հասնելու: Ինչպես նաեւ դրա միջոցով կարելի է աշխարհ տեսնել, շփվել տարբեր մարդկանց հետ, ավելի շատ բան սովորել, փոխել աշխարհայացքը: Եվ ոչ պակաս գլխավորը՝ գեղեցկացնել մարմնի կառուցվածքը, կարգավորվել ֆիզիկապես: Չնայած կարծրատիպերին,

թե կոպիտ մարտարվեստը տգեղացնում է աղջկա կառուցվածքը, պետք է անձամբ փորձել եւ հանդիմանալ, որ «մուսկուլները» պարտադիր չեն մեր մարզածեսում: Մարզիկ կարող է իր ընտրությանը որոշել եւ ձգտել մարմնի այնպիսի կառուցվածք ունենալ, ինչպիսին ինքն է ուզում:

- Ի՞նչ երազանք ունես:

- Երազում եմ դառնալ աշխարհում ճանաչված արցախցի մարզիկ: Ինչպես որ Արթուր Առուշանյանն է ճանաչվել ողջ տարածաշրջանի, Եվրոպայի եւ աշխարհի արցախցի աննախադեպ չեմպիոն, այնպես էլ ես եմ ուզում արժանանալ մեր մարզածեսի արցախցի առաջին աղջիկ չեմպիոնի տիտղոսին: Երազում եմ կոտրել այն կարծրատիպը, թե սպորտը աղջկա համար չէ: Գուցե կստացվի օրինակ ծառայել շատերի համար: Նաեւ նպատակ ունեմ բարեգործությամբ զբաղվել, ցանկանում եմ որևէ գործունեությամբ զբաղվել, որը կներառի բարեգործական սկզբունքներով մարդկանց օգնելու ծրագիր:

Մաղթում եմ բոլոր արցախցի աղջիկներին առողջություն, երջանկություն: Իսկ նրանց, ովքեր ցանկանում են մարզվել, բայց կողմորոշվել չեն կարողանում, խորհուրդ եմ տալիս փորձել կիոկուշին պարապել: Բանիմաց մարզիչ օգնությամբ կարելի է կատարելագործվել եւ հասնել բարձունքների:

Մարզիչը Շովինարին բնութագրում է որպես նպատակասլաց, ուժեղ կամքի տեր մարզիկ: Կիոկուշին կոպտությունը հաղթահարելով, քայլ առ քայլ հասնելով բարձր արդյունքների՝ Շովինարը չի կորցրել իր բնատուր նրբությունն ու աղջկական քնքշությունը: Կիոկուշին պարապմունքները ոչ թե վնասում, այլ օգնում են ինչպես տղաներին, այնպես էլ աղջիկներին: Արթուր Առուշանյանը տղաների եւ աղջիկների մարզման մեջ էական տարբերություն չի տեսնում: Հնարավոր է՝ որոշ չափով աղջիկների մոտ ուժի պակաս նկատվի, բայց դա վտանգավոր չէ, քանի որ աղջիկները չեն մրցում տղաների հետ: Մրցագորգին հանդիպում են միեւնույն քաշային կարգն ունեցող աղջիկ

մարզիկները: Լինելով ֆեդերացիայի առաջատար մարզիկներից մեկը՝ մարզիչը նրա հետ հույսեր է կապում: Նպատակ ունեմ ֆեդերացիայում աղջիկների առանձին խումբ բացել, որոնց հետապնդում կմարզի Շովինար Ավանեսյանը համապատասխան մասնագիտական որակավորում ստանալուց հետո: Առաջիկայում Եվրոպայի մրցումներն են: Մայիսի 17-19-ը Գերմանիայի Բեռլին քաղաքում կայանալիք Եվրոպայի կիոկուշին կարատե դո առաջնությանը մասնակցելու կմեկնի նաեւ Շովինար Ավանեսյանը:



Աշխարհի կրկնակի եւ Եվրոպայի քառակի չեմպիոն, կիոկուշին կարատեի լեգենդ Արթուր Առուշանյանի շնորհավորանքը Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ:

«Ջերմորեն շնորհավորում եմ մեր քույրերին, մայրերին, ապագա մայրերին ու տատիկներին Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ: Ցանկանում եմ միշտ լինեք սիրուն, ապրեք ջինջ երկնքի տակ եւ այլեւս ոչ մի դժբախտություն չտեսնեք: Թող հօգս չքվի հայրորդիների՝ ամեն րոպե սպասվող սահման մեկնելու հետ կապված ձեր անհանգստությունը, փոխարենը՝ զարմանալի պայծառությամբ եւ սիրով լցվեն ձեր սրտերը: Ապրեք խաղաղ, երջանիկ, եւ թող կատարվեն բոլորիդ բարի երազանքները»:

ԳԵՂԱԴԻՏԱԿ

ՔՈՒՆԵՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՅԱՆ ՆԵՐԹԱԿԱՆ ՖՈՒՅԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում ապրիլի 17-ին կազմակերպվեց Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի սովորողների աշխատանքների ցուցահանդես: Բացման իր խոսքում ուսումնական հաստատության տնօրեն Ջիվան Գալստյանը ասաց, որ ներկայացված են «Կիրառական արվեստ» և «Դիզայն» բաժինների ուսանողների 69 աշխատանքներ, բացի փայտագործությունից՝ կիրառական արվեստի մյուս ճյուղերը: Կարպետագործություն, գորգագործություն, կավագործություն, գորելեն, գեղանկարչություն: Ամեն անգամ կազմակերպելով մասնատիպ միջոցառումներ՝ փորձում են հանդես գալ նորովի: Այս անգամ էլ բացառություն չէ: Ներկայացրել են «Հագուստի մոդելավորում» բաժնի ուսանողների աշխատանքները սովորողների և երեխաների միջոցով:

հարիր կիրառական արվեստի շատ կարևոր այս ճյուղի վերածովելը և դրվատեց ուսանողների ու նրանց ուսուցիչների՝ այդ ուղղությամբ կատարած տրեմաջան աշխատանքը և ընդհանրապես նրանց կողմից կիրառական արվեստի բոլոր ճյուղերով ներկայացված լի-

այն ունի բազմակի բովանդակություն. զարգացնում է ավանդական արվեստի ճյուղը, առաջ է տանում սովորողների գեղագիտական դաստիարակությունը, գնում է սեփական աշխատաշուկա ստեղծելու ուղիով: Որպես առաջին աստիճանի մասնագիտական ուսումնական հաստատություն՝ նրա համար դժվար է այս բոլոր ծրագրերն ի կատար ածել, բայց արդյունքը տեսնելով՝ պետք է

կազմակերպմանը, զարգացմանն ու կատարելագործմանը կեն դարից ավելի անմացորոգ նվիրաբերել է մեծ մասնավարժ Արսեն Խաչատրյանը, հետագայում նրա ավագ որդին՝ Երջանկահիշատակ Ալբերտ Խաչատրյանը: Գերդաստանի անունից քոլեջի տնօրինությանն իր խորին երախտագիտությունը հայտնեց Ռոբերտ Խաչատրյանը այն բանի համար, որ շարունակում ու բազմապատկում են ուսումնարանի մշակութային կրթության լավագույն ավանդույթները:



Մեզ հետ ունեցած ճեպագրույցում քոլեջի տնօրեն Ջ. Գալստյանը ներկայացրեց, թե ինչպես են պատրաստվում զարգացնել հագուստի մոդելավորման ուղղությունը: Նպատակ ունեն մինչև այս տարվա մայիսի վերջը բաժնին կից բացել արտադրամաս: Արդեն ձեռք են բերել կարի մեքենաներ, շուտով դրանք կհամարվեն նորերով, և կսկսեն կարի արտադրությունը: Փորձ արդեն ունեն. «Եզնիկ Մոզայան» արհեստագործական ուսումնարանի խորհրդակցությունը կրում են իրենց արտադրած հագուստը: Նպատակ ունեն ընդլայնել պատվիրատուների շրջանակը: Քոլեջի վերջին տարվա կրթական քաղաքականությունն ընթացնում է կիրառական արվեստների զարգացման ուղղությամբ, հավելեց Ջ. Գալստյանը: **Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Միջոցառումը ողջունեց ԱԳ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեռնիկ Գովհաննիսյանը: Նա նշեց, որ ամեն անգամ ներկայանալով Շուշիի հումանիտար քոլեջի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը՝ նկատում է առաջընթաց: Հատկապես ընդգծեց ցուցանմուշներում կարպետագործության և գորգագործության գերիշխող լինելը, ինչը մեկ անգամ ևս վկայում է ոչ նյութական ժառանգության՝ մեր ժողովրդի ինքնությանը

նելը, ինչպես նաև հագուստի մոդելավորման սեփական բրենդն ունենալու նրանց ջանքերը, որ աստիճանաբար պտուղներ են տալիս:

Իր խոսքն ասաց ուսումնական հաստատության բարեկան, «Գյուլոջյան» կիրառական ինստիտուտի ղեկավար, քանդակագործ, նկարիչ Յուրի Գովհաննիսյանը:

Նա ընդգծեց քոլեջի տարեցտարի առաջընթացը մի շարք առումներով. որպես պատանեկան հասակի մշակութային կրթության

կրկնապատկել նրա հանդեպ գովեստի խոսքը, գնահատեց արվեստագետը:

Քոլեջն իրավաժառանգորդն է Շուշիի մանկավարժական ուսումնարանի, որին իր կյանքն ու գիտելիքները, հարուստ կենսափորձը Արցախի երիտասարդ սերնդի ուսումնադաստիարակչական աշխատանքների

«ԸՆԹԵՐԳՄԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ - 2019»

Կարողում են բոլորը, սակայն ոչ բոլորն են կարողանում ընթերցել:

Վառան

Վերջին ժամանակներս շատ է խոսվում այն մասին, որ դպրոցականները, երիտասարդները գիրք չեն ընթերցում, և ընդհանրապես ընթերցասերները քիչ են: Թերևս այդպես է: Տեղեկատվական աղբյուրներն այնքան բազմազան ու զայրակալիչ են, որ մարդուն կտրել են գրքից: Զպետք է մոռանալ, սակայն, որ գիրքն է մարդու իրական բարեկամը, անդամաճան ընկերը, և «Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի» (Ադիսոն): Իսկ ընթերցել, օգտակար, հաճելի գրադմուք լինելուց բացի նաև արվեստ է: Տեղին է հիշել ամերիկացի գրող, բանաստեղծ, փիլիսոփա Թորոյի խոսքը. «Գրքերը հարկ է ընթերցել նույնպես անշտապ ու խնամքով, ինչպես նրանք գրվել են»: Կարծում եմ՝ միջոցառումը, որի մասին ուզում եմ իրազեկել, խթանում է ընթերցասիրությունը և սովորեցնում ճիշտ ընթերցել:

Դպրոցականների համար կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումների և մրցույթների շարքում թերևս կարևորագույն և ուրույն նշանակություն ունի «Ընթերցման օլիմպիադա-2019»-ը (ի դեպ՝ առաջին անգամ է կազ-



մարտի 12-ին և ավարտվեց մարտի 22-ին: Դպրոցական փուլի արդյունքներով 1-ին և 2-րդ տեղերն զբաղեցրած աշակերտներն իրավունք ստացան մասնակցել «Ընթերցման օլիմպիադա-2019»-ի մարզային փուլին: Ապրիլի 12-ին Ստեփանակերտի հ.7 հիմնական դպրոցում անցկացվեց օլիմպիադայի մարզային փուլը: Հանձնաժողովը (քաղաքապետարանի ԿՍ բաժնի ղեկավար մասնագետ՝ Թ.Ղարախանյան, գրող լրագրող՝ Դ. Միքայելյան, հ.11 ավագ դպրոցի հ. լեզվի և գրականության ուսուցչուհի՝ Մ. Բալայան, ֆիզմաթ դպրոցի հ. լեզվի և գրականության ուսուցչուհի Լ.Սառաջյան) լսեց և գնահատեց մայրաքաղաքի դպրոցներից ներկայացած՝ 6-րդ դասարանում սովորող 18 աշակերտների: Առաջին փուլում աշակերտն իր ընտրած գրքից ընթերցեց մի հատված (առնվազն 10 տող), պատասխանեց հանձնաժողովի առաջադրած հարցերին: Այդպես ստուգվում էր նրա կողմից գիրքն ամբողջապես ընթերցած լինելու համագամանքը: Աշակերտները մեծ պատասխա-

նատվությամբ ու հավուր պատշաճի պատրաստվել էին ընթերցման օլիմպիադային: Ներկաները անասելի հաճույքով ու մեծ բավականությամբ լսեցին ընթերցողներին: Սահուն և արտահայտիչ ընթերցումը, ճիշտ շեշտադրումը, գիրքն ամբողջապես ընթերցած լինելը հաշվի առնելով՝ հանձնաժողովը «Ընթերցման օլիմպիադա-2019»-ի մարզային փուլի հաղթողներ ճանաչեց Ալինա Ասրյանին (1-ին տեղ, հ. 2 հիմն. դպրոց), Արինա Դավթյանին (2-րդ տեղ, հ.2 հիմն. դպրոց), Սերի Սահակյանին (3-րդ տեղ, հ.9 հիմն. դպրոց): Հանրապետական փուլին մասնակցելու իրավունք ստացան նաև Սերգեյ Հակոբյանը (հ.6 հիմն. դպրոց), Անի Գրիգորյանը (հ.7 հիմն. դպրոց), Անաստասիա Հարությունյանը (հ.8 միջն. դպրոց), Մանե Ասրյանը (հ.4 հիմն. դպրոց):

Շնորհավորում ենք բոլորին, մաղթում նոր հաջողություններ: Ընթերցեք, սիրեք գիրքը, սուզվեք նրա խորախորհուրդ և ամհատակ գաղտնիքներում:

Կարինե ԻՇԽԱՆՅԱՆ
Սպեց. հ.2 հիմն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԵՏԻԿԱ

Ավարտվեց 2019թ. աթլետիկայի ԱԳ անհատական առաջնությունը: Գլխավոր մրցավար Կարեն Մելքունյանի տեղեկատվությամբ՝ նպատակն է հանրապետությունում աթլետիկայի մասսայականացումն ու զարգացումը, մարզիկների վարպետության բարձրացումը, ուժեղագույն մարզիկների ի հայտ բերումը: Առաջնությանը մասնակցեցին մայրաքաղաքի և շրջանների 80 լավագույն աթլետներ: Երկօրյա մրցումներում որոշվեցին հեռացատկում, 100մ, 200մ, 400մ, 800մ, (տղաները նաև՝ 1500մ) վազքատարածությունում, 4x100մ փոխանցումավազքում լավագույն մարզիկ-մարզուհիները: Ամենաշատ մրցամասկային տեղեր վերցրին Ստեփանակերտի

տղաներն ու աղջիկները: Նրանք առաջինն են 100մ, 200մ, 400մ վազքում (Աշոտ Աղամյան, Ալեն Առստամյան, Ռուզաննա Մելքունյան, Անգելինա Ավագ-



և 1500մ վազքատարածությունում ուժեղագույն է Հաղորթից Արման Հակոբյանը: Հեռացատկում մրցամասկային 1-3-րդ բոլոր տեղերը վերցրել են Մարտունու շրջանի տղաները: Մրցամասկային տեղեր գրավածների թվում կան նաև Շուշիի, Ասկերանի, Մարտակերտի շրջաններից մարզիկ-մարզուհիներ:

Մրցամասկային տեղեր գրաված մարզիկները առաջնությունը կազմակերպած՝ ԱԳ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից պարգևատրվեցին համապատասխան մեդալներով, դիպլոմներով, գավաթով և դրամական պարգևով:

Ուժեղագույն մարզիկները կներկայացնեն ԱԳ հավաքական թիմը, որն առաջիկայում կմասնակցի աթլետիկայի ԳԳ մեծահասակների առաջնությանը և օգոստոսին կայանալիք Համահայկական խաղերին:

Սեփ. լրատվություն

| | | | |
|---|--|--|--|
| <p>ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԳԻՐ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ</p> | <p>Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info</p> | <p>Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p> | <p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 20.04.2019թ.:</p> |
|---|--|--|--|

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: